ՏՈՒՐԻՍՏ

1967

ԳԻՐՔ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԹԻՒ 15

891.99-82
Դ 93

digitised by A.R.A.R.@

891.99-82
Ն-93

«ՆՈՐ ԷՋ» ԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԷՋ

ԳԻՐՔ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԹԻՒ

15

ՏՊԱՐԱՆ «ՄՈՒՇԵՐՆ», ԹԵՀՐԱՆ
1967

digitised by A.R.A.R.@

Խմբագրեց՝
Գ. ԽԱՆՆԵՆՑ

Հասցէ՝
G. Khanian
Ave. Mohamed Reza - Chah
Rue Azad - Mardan, No. 11
Tehran–Iran

Գինը՝
ԻՐԱՆ 100 ՌԻԱԼ
ԱՐՏ. 1·50 ԴՈԼԱՐ

Տպագրուեց՝
Ցուրիխ, 1967 թ.

ՏՊԱՐԱՆ «ՄՈՂԵՐՆ», ԹԵՀԻՐԱՆ

digitised by A.R.A.R.@

Ա. ՄԱՍ

ՆՈՐԷՋԱԿԱՆՔ

ԱՇՈՏ ԱՍԼԱՆ
ՀՐ. ՖԱԼԵԱՆ

ԱՐԱ
Գ. ԽԱՆԵՆՅ
ԱՐՄԷՆ ԳԷՍ[illegible]
Ռ. ԲԷՆ

digitised by A.R.A.R.@

ԱՇՈՏ ԱՍԼԱՆ



1907-1966

«ԳԻՇԵՐԸ ԲԱՐԻ Է... ՄԻ՛ ԱՍԱՅ ԲԱՐԻ ԳԻՇԵՐ»

Բանաստեղծները չեն մեռնում, այլ հեռանում են միայն թողնելով կեանքում մի պայծառ ներկայութիւն, որը շա-

digitised by A.R.A.R.@

Մահ,
Տարիների ուրը մոմերը վառած՝
Բարձրաձամ գիշերի ասիճաններով,
Գա՛մ, գա՛մ, ես մոս,
Նստեմ մտերմաբար fո դիմաց,
Ու նայեմ մեռած աչքերիդ
Հայելու մեջ։

Մահ, տեսնում եմ հայելու միջից,
Սեւ fողերի մեջ մի կին ահա —
Վազում է լուսնի յետեւից ու ճչում
Էլիզա, Էլիզա՛։
—Ե՛կ, ե՛կ, կանչում է լուսինը,
Այստեղ է նա, այստեղ է նա,
Ե՛կ— ու կինը նորից
Վազում է հեռու լուսնի յետեւից։

Երեկ գիշեր, մա՛հ,
Հարեւանիս փոքրիկ աղջիկը մահացաւ.
Կամաց փակեց աչքերը,— մահացաւ.
Կապոյտ աչքեր ուներ, ութը տարեկան էր նա.
Փակեց աչքերը, յանկարծ մահացաւ.
Մահը տեսեց մի պահ։

Մահ,
Երեկ գիշեր հարեւանիս տան պատից
Երկու սեւ մրջիւն իջան ցած,
Իջան երկու մրջիւն հարեւանիս պատից
Երկու կապոյտ բիբեր շրթներին առած։

ռուցակում է ապրել մեզ հետ՝ նոր, տարբեր, բայց աւելի շեշտուած եւ աւելի լրիւ մի կեանքով։

Աշոտ Ասլանը, «Նոր Էջ»ի ազգւական եւ զտարիւն այդ բանաստեղծը, 1966 թ. Մայիս 14-ին հեռացաւ մեզանից, թողնելով գրական մի ներկայութիւն, որը գնալով աւելի զտւում եւ ամբողջանում է։

Նա «Նոր Էջ» գրական խմբակցութեան հիմնադիրներից մէկն էր ու նաեւ նորէջականութեան— որպէս գրական ընկալում եւ արտայայտութիւն— առաջնորդներից ամենակարեւորը։

Իր բանաստեղծական բիւրեղացած զգացողութեամբ, իր իմացական կարող հասկացողութեամբ եւ իր պարզ եւ ուղիղ հոգեկան կեցւածքով, նա խորը ազդեցութիւն եւ նշանակութիւն ունեցաւ «Նոր Էջ»ի գրական ըմբռնումի եւ ընթացքի ձեւակերպման մէջ։

Բանաստեղծութեան եւ գրականութեան հանդէպ ունէր իր ուրոյն եւ որոշ մօտեցումը, որը գուցէ կարելի լինի ԿԱՏԱՐԵԼԱՊԱՇՏ կոչումով անուանել եւ ճիշտ այդ ամենալաւին ձգտելու պատճառով էլ նա բծախնդիր եւ խստապահանջ էր իր գրական ընկերների եւ յատկապէս ամենից աւելի ի՛ր նկատմամբ։

«ԵՒԷ ԱՊՐԻ»... Այսպէս էր վերնագրել իմը իր բանաստեղծութիւնների առաջին հատորը, բայց մենք գիտենք, իսկ այժմ արդէն պարզ է, որ կապրի իր բանաստեղծութիւնը, վըստա՛հ կապրի։

Նա զուսպ էր եւ ժլատ ածականների գործածութեան մէջ եւ հնարաւորին չափ խուսափում էր նրանցից, մենք էլ հետեւելով իր օրինակին, կրճատում ենք իրեն համընկնող բոլոր ածականները, թող նա լինի այնպէս ինչպէս միտս եղել էր Աշոտ Ասլանը, բանաստեղծը։

«ԳԻՇԵՐԸ ԲԱՐԻ Է... ՄԻ՛ ԱՍԱՑ ԲԱՐԻ ԳԻՇԵՐ...»

digitised by A.R.A.R.@

—Մահ...
Տարիների ութը մոմերը վառած
Իջնում եմ գիշերի ասիճաններից,
Էլիզային պահած թևերիս վրայ։
Գիշերի ասիճաններից ես իջնում եմ,
Ու սպասում հարեւանիս տան պատի տակ—
Երկու սեւ մշիւններին։

ԱՅՆ ԿՈՂՄԸ

Ինձ այլեւս մի՛ վստահիր.—
Ես վազել եմ գծի այն կողմը,—
Եւ ձեռերս ևւիրել կոյր աղջկան։

Սպիտակ աճատի
Վայրի ծաղիկը գիտէ՞ ինչու—
Ես, արեւամման, այրելով ինձս,
Լուսաւորում եմ մութ ճամբան։

Ես դատարկել եմ ծմակ սենեակս,
Ու կանգնել ազատ արեւի տակ,
Մինչ կոյր աղջիկը ժպտուն գնում է տուն,
Իմ ձեռքը բռնած։

digitised by A.R.A.R.@

Երանի նրան, որ երկու արտի մէջ
Մշակում է—
Հաս մի ծաղիկ։

Երանի նրան, որ գլուխը դրած
Իր սեփական բարձին,
Քնում է յոգնաբեկ,
Կրծքի դէմ սեղմած մանուկ մի երազ։

Երանի նրան, որ ամէն առաւօս
Բացում է արտի պատուհանը
Ու ասում— Բարեւ, արեւ։

—Իմ կողմից համբուրիր լոյսին,
Հարցրու երկինքը ե՞րբ կը պայծառանայ։—
Յետոյ թռչունը նստում է մատնոց,
Բակի պատերին գամւած—
Թոկի վրայ։

Աւծրեւի մի բանի փայլուն կաթիլ
Իջնում են աւազանի լոյծ սեղանին,
Ու շարում բոլորածեւ ափսեներ։

Թռչունը մօտենում է սեղանին,
Ու խմում երեք կտուց ջուր՝
Բարձրացնելով կտուցը երկինք,—
Երեք աղօթք։

digitised by A.R.A.R.@

Ես անվեհեր բարձրանում եմ...
Հասնում եմ վերջին սեպ սանդուղքին,
Եւ ուժասպառ թեւերս տարածում,—
Փակ դռան վրայ։

Ես գիտեի դուռը փակ է,
Բայց եկայ վերջին
Յաւը տեսնելու։

Յածը՝ լոյսի երկու կոյր տղայ՝
Ձեռքերը պարզած բաշխում են—
Մի բաժակ ջուր, մի կտոր հաց։

Ճչալով՝— «Ծարա՞ւ եմ»,
Նետւում է սիրտս դուրս,
Եւ թաւալւում ասֆալտներից։

Յետոյ սկսում են վազել,—
Ոտքերս, թեւերս, մարմինս...
Ու մնում ենք միայն ես եւ աչքերս.
Մութի մէջ անշարժ, կող-կողի—
Նայում են արնափայլ աչքերս։

Կանաչ լեռից իջնելիս
Կորցրի սրտիս ուիմս։
Ձեռքերս զգոյշ բացում են
Պատուհանը ճնած յուշերի։

Յիշում եմ, որ շրթերս պատմում են.—
Ի՞նչ սիրուն երազներ կային,
Երբ յոյսը արագ վազում էր.—
Հասնելու լեռան կատարին։

Ինչո՞ւ է ոտքը թուլանում,
Աչքը դառնում պղտոր ծով.
Ո՞ւր թողի սրտիս ուիմս։
Ձեռքերս զգոյշ փակում են
Պատուհանը ճնած յուշերի։

digitised by A.R.A.R.@

ԲԱՐԻ ԳԻՇԵՐ ԵՄ ԱՍՈՒՄ

Ու դռնապանը ծեր դուռն է փակում։
Ես նայում եմ դողդոջուն ձեռքին
Ու շշնջում,— փակի՛ր, ամո՛ւր փակիր։

Արտիս թռչունը կուտ է ուզում,
Բայց ես ճամբորդում եմ.—
Ես ճամբորդում եմ՝ իմ ճանապարհը
Կորցնելու համար։

Հանում եմ շորերս՝ դնում ժամանակի եզրին,
Մի մեծ շուն գալիս է դէպի ինձ,
Հոտոտում է շորերս ու միզում։

Ես գետնից վերցնում եմ երկու քար,
Ու մէկը միւսի յետեւից նետում
Դէպի գիշերը խաւար։
Մի փոքրիկ պատուհանից՝
Դռնապանը նայում է ինձ,
Ես կանգնած մութի դէմ՝ բթամատս եմ շարժում
Ու ճչում,— դէմքդ ծածկիր, մա՛հ։

ՀՐԱՆԴ ՓԱԼԵԱՆ



1884 - 1966

Բուն անունով Մելքոն Ղարիբեան, ծնւել է 1884 թւին Ռաշտում եւ մահացել Թեհրան 1966-ի Յունուար 8-ին։ Նախնական կրթութիւնը ստացել է Ռաշտի տարրական դպրոցում, յետոյ սովորել է Թեհրանի Հայկազեան եւ Գասպարեան դպրոցներում։ 1902-ին անցել է Նոր Ջուղա, իսկ 1910-ին փո-

ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
digitised by A.R.A.R.@

խադրւել է Թիֆլիզ, 1933-ին վերադարձել է Թեհրան, ուր մինչեւ 1936-ը, ապա 1941—47-ը պատասխանավարել է Հայոց Դաւթեան դպրոցում։ Իր առաջին գրւածքներով ափսաւակցել է Նոր Ջուղայի «Լրաբեր» թերթին եւ հրատարակել է իր առաջին գրոյկը, թարգմանւած Ֆրանսերէնից՝ «Հայրենիքի համար» եւ «Տասնապետ անվախը»։ 1908-ին Բագւում լոյս է տեսել իր առաջին պատմւածքը՝ «Թշնամիները»։ Աշխատակցել է «Պսակ», «Մուրճ», «Նոր Հոսանք», «Վերածնունդ», «Արուսեակ», «Ալիք», «Նաւասարդ», «Լոյս», «Արփի», «Պահակ» թերթերին, ամսագրերին եւ «Նոր Էջ» ժողովածուին, որի հիմնադիր անդամներից մէկն է եղել։ 1961-ին Թեհրանում հրատարակւել է իր երկերի առաջին ժողովածուն՝ «Նոր աչերը»։

Ահաւասիկ գրագէտը, որի կեանքը եղաւ անընդմէջ մաքառում, սկսած իր վաղ պատանեկութիւնից, վասն բանի, վասն հայ գրականութեան եւ վասն հայ մտաւոր սերնդի դաստիարակութեան։ Նա եղաւ հրհիմի ու տճնութեան գրագէտը, եւ եղաւ իրանահայ նորատեղծ գրականութեան տհմիկ հիմնադիրը։

Ահաւասիկ, այս մեռած, բայց չանհետացող Նորէջական ընկերոջ բեղուն կեանքը մի բանի հակիրճ տողերով։

ԱՌԱՋԻՆ ՍԷՐ

«ԿԵԱՆՔԻ ՀԵՏ» ՇԱՐՔԻՑ

Օգտւելով տօնական օրւայ հանգստից, վեց-եօթ հոգի մօտիկ բարեկամներ այդ օր, ակումբում նստած, և ուրիշ աւելի հետաքրքիր նիւթ չունենալով զրուցելու, իրենց աւել էին «հին-հին դարուց յիշատակ»-ների, և խօսում էին իրենց երիտասարդ օրերից, և այդ շրջանում ունեցած իրենց ամէն տեսակի ապրումներից, տպաւորութիւններից, ինչպէս և, երբեմն էլ, սիրային փոքրիկ թէ մեծ, զւարճալի թէ տխուր պատահարներից։

Թող աւելորդ չլինի նաև նշել, որ այդ զրոյցի մասնակիցները՝ բացի տարիներից ի վեր իրար մօտ մարդիկ լինելուց, նաև հասակակից էին իրար.— ամենքն էլ միջին տարիքի, իսկ մի երկուսը նոյնիսկ յիսունից անց, բացառութեամբ մէկի, որ եօթանասունը թևակոխած մէկն էր, բայց որը նոյնպէս սերտօրէն կապւած էր այդ շրջանի հետ՝ շնորհիւ իր զարմանալի առոյգութեան, որ ոչ միայն որևէ նշանով ծերութիւն չէր մատնում, այլև, շատ դէպքերում և շատ խնդիրների մէջ նոյնիսկ աւելի երիտասարդ մօտեցումներ ունէր, քան իր աւելի երի-

digitised by A.R.A.R.@

տասարդ բարեկամները։

Եւ այդ օր էլ, իր առողջութեան մի նոր ապացոյցը տալու համար կարծես, մէկ էլ տեսանք, առաջ անցաւ, և օգտւելով առիթից, հետևեալը պատմեց նրանց իր երիտասարդ օրերի կեանքից։

Յիսուն, բայց գուցէ և աւելի տարի առաջ էր դա.— այսինքն այն շրջանը, երբ մեր երկիրը արտաքին աշխարհի հետ շատ քիչ կապ ունէր, և այդ շատ քիչն էլ, ներկայիս նման ոչ թէ շոգեկառքի, ինքնաշարժի, ռադիոյի կամ օդանաւի միջոցով էր լինում, այլ, պարզապէս մեր շատ յարգի և այժմ արդէն այնքա՛ն անսրտօրէն արհամարհանքի մատնւած ուղտերի, ձիերի, ջորիների, ինչպէս և, ապերախտ չլինելու համար աւելացնենք, նրանց գործի լծող մեր նոյնչափ յարգելի առևտրականների, որոնց և անուրանալի կերպով մենք պարտական ենք մեր այս օրերի բոլոր յառաջադիմութիւնները, և որոնց, ամենայն իրաւամբ, չենք կարող մեր քաղաքակրութեան ռահվիրաները չկոչել։

Այո՛, յիսուն տարի առաջ էր դա, երբ, շնորհիւ այդ նոյն ռահվիրաների մեր երկիրը մտցրած քաղաքակըրթութեան առաջին շորշոփների, ես առաջին անգամ առիթն ունեցայ տեսնելու կանացի գեղեցկութիւնը իր իսկական կերպարանքով, այնպէս՝ ինչպէս նա կայ, այսինքն առանց չադրայի, առանց լաթերից շինւած գանազան ծածկոյթների, որոնց հագուստ անունն են տալիս,— այլ բաց, բոլորովին բաց, ստինքներից ներքև միայն ունենալով մի համեստ քօղ, որ իջնում էր մինչև ոտքերը.— և այն՝ նորից այդ քաղաքակրթութեան շնորհիւ

մեր քաղաքի բանուկ փողոցներից մէկում վերջին ժամանակները բացւած եւրոպական տիպի մի վաճառատան ցուցափեղկում։ Եւ, կարո՞ղ էք երևակայել, այդ առաջին հանդիպումից իսկ, ես,— այն օրերին տասնհինգ-տասնվեց տարեկան մի լամուկ — սիրահարւեցի նրա վրայ, և սիրահարւեցի այն սիրով, որին բանաստեղծական տերմինոլոգիայով «առաջին սէր» անունն են տալիս, և որը, ըստ իմ անձնական հայեցողութեան, շատ է տարբերւում սովորական սէրերից նրանով, որ գերազանցօրէն մաքուր է, բարձր և աննիւթական, ինչպէս և իմս էր. իսկ դրա ապացոյցն էլ այն՝ որ իմ յագեցումը նրանից, այն օրերին, բացի մի մանկական ասեմ, թէ անմեղ հիացումից, այլ բան չէր, որ ամէն անգամ ունենում էի դիտելով նրա սքանչելի դէմքը, շարմաղ խոպոպները, մարմընի քնքոյշ ճերմակութիւնը և կրծքից դուրս ցցւած այդ աննման պոռթկումները, որ նրա ստինքներն էին։

Եւ որովհետև արդէն խելագարի պէս սիրում էի նրան, ըստ ընդունւած կարգի, ես էլ անում էի այն, ինչ պիտի անի մի սիրահար հանդէպ իր սիրոյ առարկայի.— մանաւանդ ինձ նման լամուկային երազներով տարւած մի սիրահար։ Եւ որովհետև իմ այն օրերի պայմաններում դրանից աւելի ոչինչ չէր կարող գալ իմ ձեռքից, ես շարունակ առիթներ էի որոնում անցնելու այն փողոցով, ուր նա էր գտնւում և միայն նայելու, անվերջ նայելու նրան, ուրիշ ոչինչ։ Ես այնքա՛ն էի տարւած նրանով, որ մինչև իսկ սկսեցի սիրային ոտանաւորներ նւիրել նրան. և ո՛չ միայն ոտանաւորներ, այլ և արցունքներ,— գաղտնի, ամենքից աննկատ թափւած արցունքներ։ Իսկ գիշերները, քնելուցս յետոյ, անկողնիս մէջ, այդ սիրով տարւած, ես ամբողջապէս անցնում էի

digitised by A.R.A.R.@

իմ պաշտօնիս, որ նրանով զբաղելը և նրան զբաղեցնելն էր, իհարկէ երազներիս մէջ։ Եւ երևակայեցէք, այդ նոր աշխարհում նա շատ աւելի մաւչելի էր ինձ, քան իրականութեան մէջ, իր ցուցափեղկում. այն նոր աշխարհում գոնէ կարողանում էի խօսել նրա հետ, մինչև անգամ փաղաքշել. և յիշում եմ, մի անգամ մինչև իսկ համբուրեցի նրան, որին նա ամենևին չընդդիմացաւ։ Եւ այդ բոլորը, նորից եմ կրկնում, երազներիս մէջ։

Այդ դրութեան մէջ էին գործերը, երբ յանկարծ, մի օր, անսպասելի կերպով նա կորաւ։ Այո՛, կորաւ։

Դա մի առաւօտ էր, երբ դիշերն ամբողջ նորից նրա հետ անցկացնելուց և նրանով ապրելուց յետոյ, ես վեր կացայ դպրոց գնալու և ճամբան կամաւ երկարաձգելով, նորից անցայ այն փողոցով, ուր նա էր գտնւում և նրան իր տեղում չգտայ։ Յուցափեղկը դատարկ էր։ Ես ցնցւեցի, յանկարծակիի եկայ.— ո՞ւր էր գնացել, ի՞նչ էր եղել. արդեօք վերցրել, նե՞րս էին տարել։

Բայց այդ պահին, այդ վաթսունվեցամեայ «երիտասարդ»-ին լողները, ասես համբերութիւնից ելած, ընդհատեցին նրան, և վրայ պրծնելով՝ հարցրին.

— Վերջապէս ասա՛, ո՞վ կամ ի՞նչ էր այդ քո Դիւլցինէն, իրական մի կի՞ն, որ մեր այն օրերի պայմաններում հազիւ թէ թոյլատրւէր ցուցափեղկում կանգնեցնել, մաննրքէ՞ն, թէ՞ մի այլ բան, ախր համբերութիւններս հատաւ։

Նա ծիծաղեց և շատ հանգիստ պատասխանեց.

— Ոչ իրական կին և ոչ էլ մաննրքէն, կամ արձան. այլ ոսկեզօծ, շքեղ շրջանակի մէջ դրւած մի նկար,

ահա՛ բոլորը։

— Պա՛հ,— ակամայից դուրս թռաւ նրան լողների բոլորի էլ բերանից ու ծիծաղեցին։ Որի վրայ նա.

— Իհարկէ կը ծիծաղէք, ասաց— որովհետև իբրև դէպք, ես ինքս էլ ընդունում եմ, որ արտառոց է և ծիծաղելի. բայց իբրև տասնվեց տարեկան մի պատանու հոգեկան ապրումների դրւագ, մի՞թէ հետաքրքիր չէ։ Եւ յետոյ, միք մոռանաք գարաշրջանը, որի սերունդն էի ես, և որը նահապետականութիւնից նոր ազատագրւող և, ինչպէս սկզբում էլ ասացի. ուղտերի և ջորիների կարաւաններով միայն նոր քաղաքակրթութեան հետ իր շփումն ստեղծող գարաշրջանն էր, որի միամիտ ըմբռնումներն ու բարքերը անկարելի էր որ մեր՝ նոր սերնդիս մէջ էլ թափանցած չլինէին։ Բայց հետաքրքիրը պատմութեանս վերջաբանն է, բարեկամնե՛ր, ուզո՞ւմ էք լսել։

Ընկերները միաբերան պահանջեցին որ շարունակի, և նա, միշտ ժպիտը դէմքին, խօսքն առաջ տարաւ։

Իմ Դիւլցինէիս այդ չքացումից երկմիտ, անհամբեր, ես, առանց մտածելու, ծալելով և մի կողմ դնելով իմ այն օրերի ամօթխածութիւնն անգամ, երկրորդ օրն իսկ, ես ինձ ձգեցի ներս, և առաջին բանը որ արի, հայեացքովս չափելն էր վաճառատան բոլոր դարակները, սեղաններն ու պատերը, բայց ոչ մի տեղ չգտայ նրան։ Փոխարէնը, տեսայ, մի դործակատար մօտեցաւ ինձ և կռնիցս բռնելով.

— Դուս նորից եկել ես, հա՞— ասաց—, ինչպէս երեւում է, դուս չես ուզում ձեռք վերցնել քո արհեստից։

Ես իհարկէ հասկացայ նրան։ Նա անպայման ճանաչում էր ինձ. չէ՞ որ ամիսներ շարունակ իրենց ցուցափեղկին արած իմ այցելութիւններից նա չէր կարող

digitised by A.R.A.R.@

ներսից տեսած և ճանաչելիս չլինելը ինձ։ Բացի այդ, յիշում եմ, մի անգամ նույնիսկ, շատ սկզբնեբում, ինձ հարկադրելով ներս էի մտել և ինչ որ բաներ հարցրել այդ դեղեցկուհու մասին.— Թա՞նդ արժէր, ո՞րտեղից էր բերւած, և այլն, որոնց նա, իր հմուտ աչքերով ոտքից գլուխ չափելով ինձ և իմ մէջ դնորդի երևոյթ չդտնելով, պատասխանել էր մի աշկարա՝ արհամարհանքով։

— Զէ՛, ծախու չի, էդ մեր խանումի պատկերքն է, ծախու չի՛.— ու ծիծաղել։

Եւ ես դուրս էի եկել վաճառատնից վիրաւորւած ու մի ակնյայտ դժգոհութեամբ։

— Ա՛խ եթէ ես փող ունենայի՜...

Այդպէս էլ նա կորաւ մինչև վերջ— իմ ցուցափեղկի այդ դեղեցկուհին, առանց որ ես կարողանայի դէթ մի անգամ, եթէ ոչ իրական համբոյրով, դէթ մատներիս թեթև հպումով շօշափել նրան և եզրակացրի, որ անպայման գնած պէտք է լինէին նրան, և գնողն էլ, ի՜նչ խօսք, հարուստի մէկը պիտի լինէր, որ տարել և կախել էր իր սենեակի պատից.— չէ՞ որ նա շատ դեղեցիկ էր և իր դեղեցկութեամբ զարդը կարող էր լինել ամէն տան։ Եւ այդ մտքից ես մի ըմբոստացում ունեցայ.— ո՞վ իրաւունք ունէր ինձնից խլելու իմ սիրեկանին. ի՜նչ օրէնք էր դա։ Եւ առաջին անգամ իմ կեանքում, ինձ վրայ կրելով հարւածը դրամի ամենայայտնի ուժի, ես ընկճուեցի, կուչ եկայ և ինձ զգացի անասելի նւաստացած։

Ասե՞լ թէ այնուհետև ինչքա՜ն լայ եղայ ես իմ այդ կորստի համար։ Տան մէջ և ամէն տեղ ես զարձայ մելամաղձոտ, և դա, առաջին հերթին, ուշադրութիւնը դրաւեց իմ մօր, որ սկսեց անհանդստանալ իմ մասին։

Այդ ապրումներիս մէջ, իմ վիճակը կրկնակի ծանր

էր դառնում նրանով, որ գաղտնիքս ստիպւած էի ոչ ոքի չասել, ո՛չ նոյնիսկ ծնողներիս, որ թերևս խորհրդատուն լինէին մի փրկարար ելքի. որովհետև, թէև տասնվեց տարեկան, բայց այնքան էլ յիմար չէի, որ չիմանայի նման յայտնագործման անպատեհութիւնը իր, ո՛վ գիտէ, ի՛նչ հետևանքներով։

Ջեմ կարող ասել, որ դա այդպէս անվերջ տևեց, և ո՛չ էլ երկար։ Գիտէք թէ ժամանակը ի՛նչ ուժեղ դործօն է, ոչ թէ նման փոքրիկ ու միամիտ գգայնութիւններ փարատելու, այլ և շատ աւելի խորունկները,— և նա եկաւ ու ինձ էլ բուժեց։ Յետոյ, իր հերթին, եկաւ հասունութիւնը, և մի անգամ ընդմիշտ ինձ մոռացնել տւեց իմ չահել օրերի այդ խելառութիւնը, մէջս թողնելով միայն ժպտազօծ մի յիշատակ և աւելի ոչինչ։ Ժպտազօծ եմ ասում, որովհետև չահելութեան բոլոր այդպիսի դէպքերը առհասարակ, հասունութեան շրջանում, կա՛մ ժպիտով, և կամ, յոռեգոյն դէպքում, արցունքով են միտ բերւում,— նայած թէ իրենց ժամանակին որքան ծանրակշիռ են եղել նրանք։ Եւ որովհետև իմս էլ, հաւատացած եմ, արդիւնքն էր իմ պատանեկական մեծամիտ երևակայութեան և յախուռն գգայնութիւնների, հազիւ թէ դրանից աւելի մի բանի արժանի լինէր։

Եւ դա այդպէս էլ տևեց մինչև վերջ,— ա՛խ, նեղոզութի՜ւն, ո՛չ թէ մինչև վերջ, այլ մինչև մէկ ամիս առաջ, երբ, կարո՞ղ էք երևակայել, ինչ որ զուգադիպութեամբ, այդ նոյն սիրահարութիւնը, կամ, աւելի ճիշտ, այդ սիրահարութեան վերջաբանը, իր ամբողջ անտրամաբանութեամբ, թէ՞ յախուռնութեամբ, և յանձինս իր նոյն երկու հերոսների, այսինքն ցուցափեղկի կիսամերկ դեղեցկուհու, և ձեր տասնվեցամեայ խելառ բարեկամի,

digitised by A.R.A.R.@

որ այժմ վաթսունվեց տարեկան հասուն տղամարդ է, կրկնեց, շարունակեց և վերջնականապես փակեց, այս անգամ մի շքեղ բառում, ուր, շնորհիվ մի բարեկամի հրաւէրի, մտել էինք մի քանի բաժակ գարեջուր խմելու, և ուր, դրաւելով մի սեղան, նստել ու զրոյց էինք անում։

Բաւական կոկիկ բառ էր դա, ուր ես առաջին անգամ էի լինում — մաքուր կահաւորումով, պատերի վրայ գեղեցիկ նկարներով. վերին մասում, բեմանման մի տախտակամածի վրայ դրած մի դաշնամուրով և սրահի երկու կողմերում, էնտիմ հանդիպումների համար անշուշտ, մի քանի փոքրիկ առանձնասենեակներով. իսկ ըսպասեակների մէջ աչքի էին ընկնում և մի քանի ջահել, սիրուն աղջիկներ, որոնցից մէկն էլ, ի դէպ, մեզ էր ըսպասաւորում։ Մի խօսքով, նորաձևութեան վերջին տիպի մի բառ։

Մեր զրոյցը, ինձ հիւրասիրող բարեկամիս հետ, երկարում էր, և դա, թուում է, վատ պատրւակ չէր նրա համար, իր երկու յայտնի մոլութիւններին զոհացում տալու, որոնցից մէկը շատախօսութիւնն էր, միւսը՝ գաղեջրամոլութիւնը, և մենք իրար ետևից դատարկում էինք շիշերն ու շարունակում մեր զրոյցը։

Բայց զրոյցի ամենատաք մի պահի, չգիտեմ ինչպէս, յանկարծ աչքս ընկաւ սրահի հեռաւոր ծայրում կախւած մի նկարի, որ փայտէ սև շրջանակ ուներ, և որը, զարմանալի կերպով ինձ մի ցնցում պատճառեց։ Թւաց որ նա անծանօթ չէ ինձ. թւաց, որ նա նոյն յիսուն տարի առաջւայ իմ գեղեցկուհին է, շրջանակը միայն փոխւած և ճաշարանի ծխի ու գոլորշու ամպերի մէջ, տարիների ընթացքում, թեթև ինչ մուխ գոյն ստացած։

Առաջին նետ ես իհարկէ աշխատեցի զսպել իմ մէջ այդ հետաքրքրութիւնը և շարունակել լսել ընկերոջս, բայց դա այլևս ինձ անկարելի եղաւ։ Այդ նկարը, պատանեկութեան օրերիս հետ կապւած իր յիշատակներով, ինձ անվերջ դէպի ինքն էր ձգում. իսկ թողնել բարեկամիս և բարձրանալ, դնալ ստուգելու այն, ճիշտը, թեթևամտութիւնից բացի այլ բան չէր կարող նշանակել։ Եւ շարունակելով նստած մնալ, ես դրանից յետոյ ո՛չ թէ լսում էի ընկերոջս, այլ, մաքերիս մէջ խորասուզւած, աշխատում ինձ համոզել, որ սխալւում եմ, որ անկարելի բան է յիսուն տարի առաջ վաճառատան ցուցափեղկում յետոյ էլ՝ ինչ որ «հարստի» տանը, յետոյ էլ, ո՛վ դիտէ ո՛ւր և ո՛ւր քաշկռտւած մի նկար — ի՞նչ անենք թէ իմ Դիւլցինէինը,— այսօր եկած և ընկած լինի այս բառը, կամ, եթէ իսկական բառը գործածելու լինենք՝ այս հասարակաց տունը։ Ու չգիտէի ծիծաղել, թէ՞ ցաւել իմ այդ մաքերիս վրայ.— մաքեր, որոնց ես պատրաստ էի նոյնիսկ յիմար անւանել, բայց որոնք, հաւատացած եմ, յատկանիշը պէտք է լինեն բոլոր ծերերի, և ուրեմն, այս դէպքում, հակառակ ձեր կարծիքի, ապացոյցը իմ էլ ծերութեան, կամ, առնւազն, ծերանալ սկսելուս, հէ՛, հէ՛, հէ՛, հէ՛...

Եւ նա, եօթանասնամեայ այդ «երիտասարդ»-ը, իր այդ խօսքերի վրայ սրտանց ծիծաղեց։ Ընկերներն էլ ծիծաղեցին. իսկ նա, խօսքն առաջ տանելով, շարունակեց.

— Այնուամենայնիւ, այս բոլորից յետոյ, բարեկամնե՛ր, ինձ համար մի բան մնում է անժխտելի, և այդ այն է, որ կեանքի մէջ շատ դժբախտ բան է զգայուն ջղեր և մանաւանդ շուտ տպաւորւող երևակայութիւն ու-

digitised by A.R.A.R.@

նենալը,— պակասութիւնները, որ իմս են եղել էն սկզբից. իսկ դրան ապացոյց, հէնց թէկուզ իմ «առաջին սէր»ը պատանի հասակումս և այս անսնորմալ հետաքրքրութիւնը այդ նոյն սիրոյս առարկայով ճաշարանում, իմ ծեր օրերին:

Բայց այդ պահի խօսակից բարեկամս, որ ինքն էլ երևի նկատել էր իմ ցրւածութիւնը, և ուշադրութեանս՝ փոխանակ իրեն, սրահի միւս ծայրին ուղղած լինելը, դառնալով ինձ հարցրեց.

— Ի՞նչ պատահեց քեզ, ա՛յ մարդ, աչքիս մի տեսակ ես երևում:

Եւ ես, այլ պատասխան չգտնելով, բայց մանաւանդ ազատւելու համար այդ անբնականոն վիճակից, ի՞նչ էք կարծում ի՞նչ արի, ես դիմեցի մարդկային հասկացողութիւնների մէջ տգեղ համարւած, բայց նման պարագաներում միակ փրկարար միջոցին— ստի.

— Այո՛, ճիշտ է, ասացի, մի քիչ ցրւած եմ, բայց դրա պատճառն էլ կայ, և այդ այն է, որ տարիներ առաջ, չգիտեմ իմացել ես թէ ոչ, մեր տունը գող մտաւ և զանազան իրերի հետ տարաւ և մեր պատից կախ արած մի նկար, որ իմ երիտասարդ օրերիս, քեզ նման մի լաւ բարեկամից էի նւէր ստացել: Այդ բարեկամս դժբախտաբար այժմ չկայ, նա մեռաւ իր ոչ շատ յառաջացած տարիքում, և այդ նկարը միակ յիշատակն էր, որ մնացել էր ինձ նրանից և որը ես պահում էի մեծ գուրգուրանքով. և հէնց այդ պատճառով էլ, միւս թանկարժէք իրերից աւելի, այդ մէկի կորուստն էր, որ ինձ ցաւ էր պատճառում: Եւ այդ նկարը, կարո՞ղ ես երևակայել, այս օր ես գտնում եմ այստեղ, այս ճաշարանում, ահա՛ նա:

Եւ մատով ցոյց տալով սրահի հեռաւոր ծայրում

կախած նկարը, աւելացրի.

— Բայց ինձ հարկաւոր է մօտից ստուգել, կարող է պատահել սխալւում եմ. ու դրա համար էլ կը ներես ինձ, եթէ մի քանի րոպէով քեզ մենակ թողնեմ:

Եւ չսպասելով պատասխանի, սրահը լցրած սեղաններն ու յաճախորդների բազմութիւնը ճեղքելով ես ինձ ձգեցի իմ նպատակին ու, հազիւ հասած, տեղնուտեղս քարացայ, չէի սխալւել, նոյն ինքն էր, իմ Փիլիպինէն, որ իր նոր, էժանագին շրջանակի միջից անգամ, առաջւայ պէս, իր գմայլելի աչքերով ինձ էր նայում ու ժպտում:

Լաւ որ կարողացայ ինձ զսպել և չյարձակւեցի վրան՝ պրկելու և դէթ առաջին անգամ իմ կեանքում համբուրելու նրան— մի բան, որ ինձ համար դժւար չէր, քանի որ նա շատ բարձրից չէր կախւած, թէ չէ՝ բարեկամիս հիւրասիրութիւնն այդ օր ինձ վրայ թանգ պիտի նստէր, և ես ճաշարանից դուրս պիտի դայի մի նոր անուն վաստակած՝ խենթ:

Եւ ծեր-երիտասարդը, իր այդ խօսքերի վրայ, նորից մի քահ-քահ արձակեց:

— Բայց հարցը կարծում էք դրանով փակւե՞ց,— ամենևի՛ն ոչ: Վերադառնալով իմ տեղը, հակառակ իմ ճիդերին, ես այլևս ինձ չէի կարողանում վերադտնել: Արդէն ասացի, որ էն սկզբից շուտ տպաւորւող հակումների տէր մարդ եմ եղել, և ծանօթ չլինելով դիտութեան այդ մարզում ձեռք բերած վերջին եզրակացութիւններին, ես իմ անձնական փորձով կարող եմ պնդել, որ կեանքի ընթացքը և տարիքը ո՛չ թէ բարերար ազդեցութիւն են ունենում մարդկային այդ տկարութեան՝ եթէ ոչ բուժման, դէթ մեղմացման վրայ,— այլ ընդհակառակը, աւելի ևս խտացնում ու բարդացնում են այն,— և դրա առկայ ա-

digitised by A.R.A.R.@

պացոյցը ես ինքս էի, որ այդտեղ, ճաշարանում, իմ աշխատանքից վերադարձած և նորից բարեկամիս կողքին տեղ բռնած, շարունակում էի ցրտած ճաշ ու անհանդիստ. և նրա հարցին.— Ստուդեցի՞ր, քո՞նդ էր,— ես ստիպված եղայ, նորից իմ սուտին յենած, շուկայիկ ու շատ սովորական մի պատասխան տալ նրան.

— Այո՛, ինքն էր, դողացած նկարս. բայց ի՞նչ կարելի է անել։

— Ի՞նչպէս թէ ի՛նչ,— առարկեց ընկերս դործնական մարդու իր շեշտով,— բա էլ ինչի՞ համար է ուսումնականութիւնը. կարելի է կանչել, և ոչ միայն նկարդ, այլ և դրա հետքերով մի-ւս թանկարժէք իրերդ էլ գտնել ու յետ ստանալ։ Որին ես—

— Բան չունե՞ս—պատասխանեցի,—ուրախ կը լինէի եթէ այդ մի հատը գոնէ, որ ինչպէս ասացի մեռած ընկերոջս յիշատակն է, կարողանայի յետ ստանալ։

— Դրան ո՛չ մի դժւարութիւն,— շարունակեց բարեկամս,— բարձրացի՛ր և հէնց այս րոպէիս խնդիրը կարդի կը դնենք։

Տեսնելով այդպիսի վճռականութիւն նրա կողմից, ես էլ, ինքս իմ մէջ, ասես մի սրտապնդութիւն ունեցայ.— վատ չէր լինի, մտածեցի, յիսուն տարուց յետոյ այդ «յիշատակ»ը նորից ձեռք բերել, բայց իհարկէ, որքան կարելի է առանց ազմուկի։ Եւ ժամ առաջ ազատւելու համար այդ հոգեբանական, բայց շնորհիւ իմ անտակտութեան արդէն գործնականի վերածւած կնճռից, բարեկամիս հետ բարձրացանք և առաջացանք դէպի ճաշարանատիրոջ սենեակը, ուր իմ քախից, խնդիրը ոչ միայն որևէ անելի, այլ թեթև դժւարութեան իսկ չհանդիպեց։ Հաւատարմատար, որպիսի պաշտօնը սիրայօժար

յանձն էր առել բարեկամս, շատ տրամաբանօրէն կարողացաւ հասկացնել մարդուն, որ նկարը տարիներ առաջ դողացած, և այսօր պատահմամբ այստեղ, այս ճաշարանում, գտնւած լինելով, ինչ ձևով ուզում է լինի, պէտք է վերադարձւի տիրոջը, եթէ իհարկէ չի ուզում գործը դատարանի և քաշքշուքի հասնի. և դա ո՛չ թէ նրա համար, որ շատ թանկարժէք բան է, այլ որովհետև չիշատակ է մի բարեկամից։

— Այո՛, այո՛,— աւելացրի ես,— մի բարեկամից, որ այժմ չկայ, մեռած է...

Եւ ճաշարանատէրը, որ, երևայ, նոյնպէս գլխացաւանքից փախչող մարդ էր, թէ՞ ի պատիւ բարեկամիս, որ նրա մշտական յաճախորդն էր, միանգամայն հանդիստ և առանց դոյզն վրդովումի, պատասխանեց.

— Դողացա՞ծ, ընչի չէ, պատահում է, թէև ես էդ նկարը տաս տարի առաջ եմ առել մի սմսարից*), որի խանութն էլ, թէ պէտք լինի, կարող եմ ցոյց տալ ձեզ։ Բայց էդ տեսակ բաների ի՞նչ կարիք, ես հաւատում եմ ձեզ, ու թէ պատկերը պարոնինն է, թող վերցնի տանի, ի՞նչ մեծ բան, պատկերք քի՞չ կայ աշխարհում, էգուց և եթ մէկը, դրանից էլ սիրուն, կառնեմ կը դնեմ տեղը։

Հարցի այդ ձևի լուծումը ինձ համար մեծ յայտնութիւն լինելով, ես, բնականաբար, ինձ չէի կարող թոյլ տալ շահագործել նրա բարեացակամութիւնը և անմիջապէս պայման դրի վճարել արժէքը, ինչքան որ ինքը նշանակի, որին նա նոյնպէս իր համաձայնութիւնը տւեց և.—

— Ես տաս թուման եմ տւել, ասաց։

---

*) Հնավաճառ։

digitised by A.R.A.R.@

— Բայց շրջանակը իրենը չէ, փոխւած է,— առարկեցի ես,— դո՞ւք էք փոխել։

— Էդ էլ դրուստ է. շրջանակը ամսաթի մօտ ոսկեգոյն էր, էնպէս չի՞։

— Այո՛։

— Ու որովհետև էդ շրջանակով թանգ էր ասում, քսանհինգ թումանն, ես այն թողի իրանն, ու նկարը միայն վերցրի տաս թումանով։ Հիմիկւայ շրջանակը ես եմ դրել։

— Լա՛ւ, ասացի, ինձ շրջանակը պէտք չէ, ինձ նկարն է պէտք, որ ինչպէս ասացի, յիշատակ է իմ մեռած ընկերոջից։

Եւ նա, իմ այս խօսքերիս վրայ, տեղն ու տեղը բարձրանալով, կարգադրեց ծառային վար բերել նկարը և յանձնել ինձ. իսկ տատնհինգ րոպէ անց, երբ մենք վերագրաւել էինք մեր տեղերը, նոյն մեզ դարեջուր մատակարարող աղջիկը, տեսանք կոտրատւելով, և մի շատ խորհրդաւոր ժպիտ դէմքին, մօտեցաւ և նկարը, բայց դիրքով, համարեա մեր քթին բռնած՝ ասաց.

— Առէ՛ք, ձերն է, պարոնը ուեց, շատ սիրուն աղջիկ է, բարով վայելէք։

Եւ այդ ասելիս, նկատեցի, նա իր խորհրդաւոր ժպիտն արդէն ծիծաղի էր փոխել, այն էլ ոչ շատ պարկեշտ մի ծիծաղի։

Ընկերս էլ ծիծաղեց. իսկ ես, աղջկայ այդ բաց ակնարկից իմ մէջ ինչ որ անյարմարութիւն զգալով, նայեցի նրան, նայեցի նկարին, և յանկարծ իմ Դիւլցինէի ստինքի վրայ, ուղիղ պտկի ծայրին, մի խոցւածք տեսայ,— անշուշտ, ո՛չ խոցւածք, այլ, կարծես դիտումնաւոր կերպով բացւած մի ծակ,— մի բան, որ ինձ նորից մտմտուքի մէջ ձգեց.— խե՛ղճ իմ Դիւլցինէ. յիսուն տարւայ բաժանումից յետոյ, ա՛յ թէ ուր եմ գտնում քեզ և ի՜նչ պայմաններում։ Եւ այլևս ի՜նչ բացատրութիւն այդ յիսուն տարւայ ինձանից հեռու քո ապրած կեանքի, երբ ստինքիդ այդ խոցը— անպայման վաւաշոտ մի հարբեցողի կողմից քեզ հասցրւած— ամէն ինչ ասում է։ Ա՜խ իմ խեղճ Դիւլցինէ, իմ առաջին սէր։

Լաւ որ, այս անգամ այդ մտմտուքներով միայն բաւականացայ և աւելի յիմար բաներ թոյլ չտւի ինձ. առայ աղջկայ ձեռքից նկարը, վճարեցի տաս թումանը, մի թուման էլ իրեն նւէր, որ նա ընդունեց նորից իր նոյն հեղնական և ո՛չ շատ պարկեշտ ծիծաղով, ու բարձրացանք։ Դրսում ես իմ շնորհակալութիւնը յայտնեցի բարեկամիս, ո՛չ միայն իր հիւրասիրութեան, այլ և այն բարեբաստ առիթի համար, որ ընծայել էր ինձ՝ գտնելու տարիներից ի վեր կորցրած իմ «վաղամեռիկ բարեկամի» յիշատակը, ու բաժանւեցինք։

Այդպէս մի անգամ ընդմիշտ փրկելով իմ Դիւլցինէին այդ և նման այլ՝ անվայելուչ վայրերից, ես նրան համարեա գրկիս մէջ սեղմած տարայ տուն, ուր նա այժմ, նորից մի ոսկեգոյն շրջանակի մէջ, որ ես գտայ և դնեցի շուկայից, կախւած է իմ առանձնասենեակի պատից։ Իսկ թէ ինչ դեր է կատարում նա այնտեղ, այդ մասին կարծեմ աւելորդ էլ է ասելը, որովհետև առանց դրան էլ դուք կը հասկանաք ինձ։ Չէ՞ որ նա իմ տասնվեց տարեկան հասակիս առաջին սէրն է, մինչ ես այժմ արդէն իմ եօթանասնամեակս եմ ապրում։

Այդ վերջաբանի վրայ, ընկերները բարձրացան և միահամուռ ծափահարեցին նրան, իսկ մի երկու հոգի, անկարող իրենց զսպելու, նոյնիսկ բացագանչեցին.

— Կեցցէ՛ մեր երիտասարդը, որի վաթսուն-

digitised by A.R.A.R.@

վեցամեակի այդ սխրագործութիւնը պակաս հետաքրքիր չէ, քան իր տասնվեցամեակի սիրահարութիւնը, կեցցէ՛...

Ու ծիծաղում էին։

1958 թ., Թեհրան

ԱՐԱ

Ո՞Վ Է ԴՈՒՌՆ ԻՄ ԹԱԿՈՒՄ

Բախում է մի ձեռ
Դուռն իմ տան։—
Բացում եմ դուռն...
Ո՛չ ոք կայ մթում.
Իմ դուռը կարծես
Ո՛չ ոք չի թակում...
—Ո՞վ է բախում
Դուռն իմ տան,—
Զայն եմ տալիս,
Չը կայ պատասխան...
Սարսափն է խուժում
Լռութեան մէջ մութ,
Ստերն եմ տեսնում
Գիշերում խաւար.
Բախում են կրկին
Դուռը իմ տան,
Տունըս լեցուած սարսափով,
Անծանօթի դէմ եմ բացում...

digitised by A.R.A.R.@

Արեւածագ է— սի՛rs իմ, ե՛լ·
Շունչ ա՛ռ, ցնծա՛·
Կարաւանը սիրոյ մօտեցաւ,
Սի՛rs իմ, արեւալոյսի հետ ե՛լ···
Հայեացքս այգին,
Աչքս սիրուդ եմ գամել·
Սի՛rs իմ,
Ծովերի ծերպերից ե՛լ···
Ադուների մէջ ձմռան,
Յաճել եմ մեխակներ,
Եւ ամէն մի թոչունի
Իր կանաչ ծառն եմ տալ···
Երակներիս մէջ
Յաճել եմ սերմերն արեւի,
Արեւածագ է,— սի՛rs իմ, ե՛լ···

Զօրիկեան

Արեւը սառած —

Այսօր արեւը ես սառած տեսայ,
Տեսայ ծաղիկը թօշնած, գլխիկոր,
Բաժակը գինու կէս ըմպած տեսայ,
—Մահը ես նրա աչքերում տեսայ։

Գորշ ստւերներում դարձել էր մի շուք,
Սիրտը ափի մէջ առած ես տեսայ·
Հոգին լազուրում թեւածում էր լուռ,
—Մահը ես նրա աչքերում տեսայ։

Գինին «խայտում» էր բաժակի մէջ դեռ,
Իր մարած դէմքի ժպիտը տեսայ·
Երգերը տեսայ, նրա կիսաւարս,
—Մահը ես նրա աչքերում տեսայ։

Եթէ լինէր—

Եթէ լինէր մի ուրիշ աշխարհ,
Ուր հոգիդ պայծառ թեւ առնէր, թռչէր,
Երանութեան մէջ լուռ թեւածէիր,
Փայլէիր որպէս մի աստղ երկնային,
Ու ցած իջնէիր,
Խօսէիր ինձ հետ.
Ա՜հ, եթէ լինէր···

digitised by A.R.A.R.@

ԱՄԱՆՈՐ

Երէկ գիշեր երջանկութիւնը
Հոսեց հոգուս մէջ։
Աստղերի տակ
Հովերի համանուագը
Կրկին ամոքեց մորմոքը սրտիս։
Միտքս խաղաղ է
Յաղթող հոգու նման։
Աչքերիս մէջ
Կամքիս բոցերն են ճարճատում։
Մի վեհութիւն
Երէկ գիշեր ճակտիս վրայ
Փայլեց յանկարծ,
Ու աստղերի նուագը ծուլօրէն
Թօթափեց մոխիրը սրտիս։
Երէկ գիշեր երջանկութիւնը
Հոսեց հոգուս մէջ...

ՄԻ ՈՒՐԻՇ ԱՇԽԱՐՀ

Զուր եմ աշխատում
Անտեսել թակարդները լարուած։
Ո՛չ միայն այստեղ,
Ո՛չ միայն այնտեղ,
Ուր էլ լինեմ,
Կեանքը վանդակել է ինձ...
Ամէն մի շնչաւոր
Մեռնողների շարքում կանգնած,
Սպասում է հերթի,
Որ երգի իր երգը երթի...
Փորձում եմ բոլոր ճանապարհները,
Որպէսզի ճեղքեմ պատը գիշերի,
Ամէն տեղ երախն է բացել մահը,
Մահը իղձերի,
Մահը խոստումների,
Մահը սէրերի...

Ես յոգնած եմ,
Յոգնած, յոգնած, յոգնած,
Յոգնած կեանքի հատ ու կենտ համբոյրներից,
Յոգնած փակւող աչքերից,
Յոգնած սրանից, նրանից, ամէնքից...
Ո՞վ երկինք.
Մի ուրիշ արեւ
Մի ուրիշ երգ,
Մի ուրիշ աշխարհ...

digitised by A.R.A.R.@

ՄԱ՛ՐԴ, ՔԵԶ ՉԵՄ ՀԱՒԱՏՈՒՄ

Անծկութեան՝ ամպը
Սւռներ է ինձ,
Թողէ՛ք, վշտերի հովերը փչեն,
Թողէ՛ք, արցունքներս բարանան,
Թողէ՛ք, համւի երակներիս
Վերջին կաթիլն անգամ,
Թողէ՛ք, այլեւս գետերը չը փրփրան,
Թողէ՛ք, մարդն իմանայ, որ միայն
Շնչում է հիմա,
Թողէ՛ք, երթեւս կարւած մնան,
Թողէ՛ք, սիրոյ ոչ մի ձեռք
Ջերկարի դէպի ինձ,
—Մա՛րդ, ես չեմ հաւատում...
Արեւը վառում է սովորականի պէս,—
—Արե՛ւ, ես ջերմութեան անգամ
Ջեմ հաւատում...
Հիմա պարտէզիս սպիտակ
Ծաղիկները սեւացել,
Փակւել են դռները սենեակիս,
Աղաւնիներն անգամ չեն ճախրում
Իրենց տան վերեւը,—
—Գաւաթի մէջ ծուկը պառկել է
Կողքի վրայ...

ԶՐՊԱՐՏԻԶՆԵՐԻՍ

Քարերը որ մութի մէջ շպրտում են ինձ,
Փոխր են եւ մահացու չեն:
Իսկ երբ մահը ներս է սողում պատուհանից,
Ես իմ երգերը նետում եմ աստղերին...
Երգերս նետում եմ այնտեղ, որ բիւրեղանան,
Որ աւելի մաքուր եւ բարձր հնչեն:
Սակայն այսուհետ իմ երգերը
Կուղարկեմ այն կանթեղներին,
Որոնք դողում են համուց,
Բայց չեն հանգչում...

Ուզում եմ ապրե՛լ, ապրե՛լ որպէս մի մարդ,
Որ իր ափի մէջ ապաթինում է փնտռում,
Որ ուզում է լինել դժոխքներն անցեալի,
Որ ուզում է պատճէնները փլատակել:
Իմ հոյիւնն իմ երգերն են,
Աշխարհը իմ կորովն է համալն,
Ես արհամարհում եմ զրպարտիչներիս...

digitised by A.R.A.R.@

Գ. ԽԱՆԵՆՑ

2067 ԹԻՒՆ

Հարիւր տարի յետոյ
Կը գայ մէկը ու կասի.
—Այսե՛ղ, ա՛յս թղթի վրայ,
Ա՛յս հողի շնչում,
Ա՛յս թեմ փողոցի տներից մէկում—
Ապրել է մի մարդ
—Իր հսկայ սրտով,
Իր մաքուր ու անսուրբ զգացումներով,
Իր պիղծ ու անկեղծ սէրերով,
Իր անհանգիստ ոտքերով,
Իր երկնաբաղձ ձեռքերով,
Իր լուսակաոս աչքերով,
Իր ձախլիկ խօսքերով,—
Ապրել է մի մարդ,—
Ու ամէն բան հասկացել է ծուռ։

Ծամել է լոյսը, հացի փոխարէն,
Կախուել է աստղերից—
Մոռացել է ոտքերի փոշին,
Սիրել է կնոջ հոգին, մարմնի փոխարէն,
Սիրել է նրան, ում պիտի ատէր։
Ուղիղ քայլել է մարդու պէս—
Ու երբեմ, երբե՛մ չի ուզել սողալ։

Այսպիսի մի մարդ ապրել է—
Ճիշտ հարիւր տարի մեզանից առաջ։

1967 թիւն նա համարձակ երգել է—
Խաւարի մահը իր խռպոտ ձայնով...։
Հարիւր տարի յետոյ
Կը գայ մէկը ու կասի.
—Այսե՛ղ, ա՛յս թղթի վրայ,
Ապրել է մի մարդ,
Որ սիրել է մարդուն,
Որ տառապել է ու փնտռել ամէն տեղ,
Հարցրել է բոլոր անցորդներից,
Ու ոչ ոքի մօտ, ոչ մի փողոցում
Չի գտել
Արդարութեան հասցէն։

1967

digitised by A.R.A.R.@

ԵՍ ԵՐԱԶ ՏԵՍԱՅ

Ես երազ տեսայ,—
—Հնամեայ մի գիւղ,
Տանիքներ ծեփւած,
Հիւրընկալ տներ,
Ու մօրս տեսայ—
Հողէ սենեակում,
Լոյսի մէջ նստած։

Ու նորից տեսայ
—Մի մեծ երեխայ,
Բարձունքին կանգնած,
Նայում է թոչող
Հնուի աստղերին։
Եւ մայրս նրան,
Երկինքներ ձգտող
Խիզախ զաւակին,
Կանչում է, ասում.
—Լո՜յս որսացողը
Իր հողէ տնից
Ոտքը չի կտրում։

1966

ՄԻՆՉԵՒ ՔՈ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՕՐԸ

Կեանքը բանկ է,
Ուրով հարուստի պէս ապրել չի լինում.
—Տամ սիրտս աղքատներին,
Գուցէ ապրուստիս ծախսերը թերեւանան։
—Աչքերս էլ հանեմ ու տամ կոյրերին,
Որ մարդիկ խորքը տեսնել սովորեն։
—Իսկ դատարկ ձեռքերս,
Անհանգիստ ձեռքերս էլ գրպանս դնեմ,
Ու փակ պատուհանի յետեւ սպասեմ՝
Մինչեւ fո վերադարձի օրը։

1966

digitised by A.R.A.R.@

ԳԻՇԵՐԱՅԻՆ

Փողոցի շներն անգամ ֆնել են,—
Երազում են կարմիր միս,
Ու ոսկոր, ոսկոր, ոսկոր։
Ժամի երեկն է,—
Պիտի գնալ տուն,
Թողնել հարբած մարդկանց դուրսը—
Իրար հետ վիճեն,
Կռպակից-կռպակ մտնեն,
Խօսեն ամէն բանի մասին,
Աշխարհը խանդեն, նորից կառուցեն,
Չարած գործերից, չունեցած փառից—
Ճառեն, բարբառեն,—
Մինչեւ մոռանան ժամի հաւիրը,
Յետոյ ուշ, շատ ուշ,
Տուն գնան,—
Որ իրենց սպասող ոչ մի հարազատ
Արթուն չլինի։

Ժամի երեկն է,—
Ես ոչ հարբած եմ եւ ոչ սիրահար,
Ես ունեմ տուն,
Ինձ սպասում են
Ծպտացող դէմքեր,
Վրաս բարկացող աչքեր,
Մի սեղեակ գրքերով խճողուած,
Եւ ամենակարեւորը—

Պարտած ըմբոստի
Յիմար մենութիւն։
—Ես փախել եմ այդ բոլորից,
Եւ ուզում եմ՝ արդիս պէս դատարկ փողոցների
Տաղտկութիւնը տեսնել
Լիքը խանութների փակ աչքերի մէջ։
Ու զգալ, զգալ—
Խորտակած ծառերի շնչառութիւնը
Յոյսի թաց հողը գրկած,
Կարդալ տխուր պատմութիւնը քաղաքի
Եւ լուսնային ճրագների լոյսի տակ,
Յոգնած սալայատակի տճոցի հետ միանալ։

Ժամի երեկն է,
Պիտի վերադառնալ տուն,
Ամէն օրւայ պէս յանձնուել գրքերին,
Լլկուել ծանր խոհերով,
Կամ թէ բացել ռադիօընդունիչը,
Ականջներով ընկալել
Աշխարհի հոգսերը,
Ու սուտ խոստումներ։
Նման աւելի մեծ հոգսերով
Կապուել կեանքի հետ։

digitised by A.R.A.R.@

Ես ոչ հարբած եմ եւ ոչ էլ սիրահար,
Ես ծամում եմ միայն—
Իմ պարտութեան դառնութիւնը,
Ու սուլում մութի եւ լոյսի մէջ,—
Քաղաքի եւ իմ հոգու,
Խաղաղութիւնը դատարկ փողոցներում։

Ժամի երեմն է,—
Շներն անգամ բնել են,
Ու կարմիր մսի երազ են տեսնում։

1967

Թփրտացող գիշերը վիրաւոր է,—
Իսկ լոյսը հրաշքներ է գործում...։

—Մի՛ մտածիր, այս լռութեան մասին,—
Կեանքիդ փշերը փրթելու են,
Ու արեւը ձեռքերիդ մէջ կը ծաղկի։

Մոռացութեան ձեռքը պաղ է,
—Մի՛ դիր ճակտիդ վրայ։
Ինձ մօտեցող, հոյող ձեռքերը, թո՛ղ տաք լինեն,—
—Փոյթ չէ, եթէ հայեացքները լինեն լուռ ու վախկոտ,—
Ինձ սիրող սրտերը լինեն բնական, վայրագ,
Ես յոգնել եմ այն մարդկանցից,
Որոնց սրտերը՝ ծաղիկներ են արհեստական,—
Եւ փտում են իրենց խոնաւութեամբ,
Յաւերժական գիշերի աչքի առջեւ։

Ես չեմ ուզում խօսել
Մահուան վախով բռնկուած
Անցորդների հետ,
Ես հաւատում եմ յոյսին,—

digitised by A.R.A.R.@

Որովհետեւ ես տեսել եմ—
Ձերմակ շուշաններ, որ ծլել են
Թափուղ անձրեւի կաթիլների հետ,

—Յոյսի բարակ թելը տո՛ւր իմ ձեռքը,
Յոյսը հրաշքնե՛ր է գործում...,

1967

ԵՍ ԿՈՐՑՐԵԼ ԵՄ ՔԵԶ

Ուզում եմ, որ մեկը ինձ կանչի,
Բերանը դնի բարձրախօսին ու կանչի,
Անունս արձագանգի՝ ականջից-ականջ,
Սրտից-սիրտ սիրեն ինձ,
Մտերիմ լինեմ ամենքին,
Խօսքերս ծիածանեն մարդկանց աչքերում,
Հորիզոնում զմրուխտե պալատներ կառուցեն,

Ես քեզ կորցրել եմ
Իմ չծնւած օրից,
Հայրս էլ քեզ կորցրեց,—արեան մէջ իր հօր,—
Հիմա իմ արիւնը անզուսպ ջրվեժի պես
Քո սիրտն է փնտռում,
Ես կանգնում եմ Էվերեստի գլխին
Կամ չնաւնւած լուսնի ուսին,—
Որ քեզ տեսնեմ,

Ես ոչ մրսում եմ, ոչ էլ տոգում,
Ես ճառագայթում եմ
Փորիկ ու գունաս ճաճանչներով.
Իմ հառաչանքը ծակում է ականջները—
Գլուխը կախ գիշերւայ...
Ես բանտարկեալն եմ՝ իմ իսկ
Լուսակաոս կեանքի,

digitised by A.R.A.R.@

Երբ ես մեռնեմ,—
Դուք չկարծէք, որ իսկապէս
Ես մեռնել եմ արդեն,
Ես ճնել եմ միայն,
Որ վեր կենամ կրկին,—
Երբ աղջամուղջը մեր,
Գեղեցկօրեն շեղ
Վեր բարձրանայ ծորից
Իր խոր, խորհրդաւոր
Աստղութեան փոսից։

Ահնում եմ ձախ ձեռով,
Մի մեծ, ճառագայթող աւել,
Ու ալում եմ, արթում
Ժամանակի տուը։

—Իմ անունը կանչի՛ր շրթունքներով,
Արտով, տերեւների սօսափիւնով,
Կռունկների կռինչներով,
Ծիծեռնակի սուր հայեացքով,
—Ինչո՛վ, որ ուզում ես,—
Միայն թէ՝ իմ անունը կանչիր,—
Ես կը գամ, կը գամ իմ ամբողջ բնութեամբ։

—Ես բանտարկեալն եմ իմ իսկ
Լուսակապոս կեանքի,
—Կրկնութիւն՝ ոգեւորուած,

—Ես կերպարանք՝ ոն լուսավառ դէմքի
—Եւ գոյն՝ ոն աչքերի,
Ու երկնքի մէջ մի ճար՝
Քո ճարերից խօսող։

Բայց դու կարող ես անգամ
Ինձ չկանչել երբեք, ծոյնն է,
Ես կը գամ, կը գա՛մ մի օր։

1967

digitised by A.R.A.R.@

ԺԱՄԱՆԱԿԻ ՀԵՏ ՔԱՅԼՈՂՆԵՐԸ

Զօրիկի յիշատակին

Ու այսպէս քայլում ենք ժամանակի հետ,
Քայլում ենք մինչեւ հասնենք մի փակ հորիզոնի,
— Ուզում ենք մի գիշեր քնել,—
— Բայց, ո՞վ կը թողնի,
Որ ժամանակը քնի....։

Նորից ճամբայ, ճամբա՜յ,
Միշտ սկիզբը ճանապարհի —
Առաջին, առա՜ջին օրւայ պէս.
— Բայց ժամանակը,
Առաջին օր չի՛ ունեցել,
Ինչպէս եւ չի ունենայ վերջին,

Մենք էլ գնում ենք առանց քնելու։
— Ո՞վ է կարող հասնել ժամանակին.
— Կանգնի՛ր, մենք էլ գալիս ենք,—
Ձայն է տալիս իմ ընկերը հարբած։
Նա չի լսում,
Գնում է իր սովորական ուղին,—
— «Կեանքի գինի եմ, պերճանքի մի ծով»,
«Աստուածն եմ աստղի, անտառի, մրջնի»։

Ժամանակը քմծիծաղ է տալիս.
Ընկերս երգերը դնում է «խաւարի շեմքին»,
Եւ «համեստօրէն», թոքերը, մեքենայած մսի պէս,
Նւիրում է «Աստղածաւալ դատարկութեան»։
Իսկ ժամանակը չի կանգնում, գնում է....։
Ու այսպիսի դէպքերով լի,
Ստրկօրէն քայլում եմ,
Զուգահեռ ժամանակին,
Չեմ մտածում խաչաձեւել նրան,
Չեմ կարող կանգնեցնել նրան.—
Նա գնում է անտարբեր, իր գծւած ուղին։

Այս անհաւասար ընթացքի մէջ,—
Եթէ կարողանամ, եթէ կարողանա՛մ,
Ես չընկնել նրանից,—
Հերոսաց հերոս կը դառնամ,
Ու կեանքի պէս չնչին սիրտս,—
Գարնան առաջին օրը,—
Կը նւիրեմ իրեն,
Ու յաւերժօրէն կը մնամ հորիզոնի յետեւ։

Հիմա, այսպէս անքուն,
Կաղէկաղ ու հեռուից,
Ժամանակի հետ գնում եմ
Զուգահեռ։

digitised by A.R.A.R.@

Բայց, ուզում եմ,—
Նախաճաշ փակ հորիզոնին հասնելը,—
Մի գիշեր, գոնե մի գիշեր՝ ճնել
Յոգնած ճամբորդի խոր ճնով,
Ու երազում տեսնել ընկերոջս—
Մրջիւնի փոքրիկ ապօնուն։

1967

ԴՈՒ ՉԿԱՐԾԵՍ ԵՍ ՄԵՆԱԿ ԵՄ

—Լսի՛ր, դու չկարծես
Իմ այս առանձնութեամբ ես մենակ եմ.
Ամէն մարդ մենակ է եւ մենակ չէ,
Ես ունեմ իմ երազը, իմ Ես,
Եւ իմ մէջ անծանօթ բանաստեղծը։

Ես կարողանում եմ խօսել
Այս բոնզէ արձանի հետ,
Այն հեռաւոր սարի հետ,
Վազող ժամանակի, աստղի հետ,
Այս չորս պատերի հետ,—
Ես՝ ես եմ,— մի աղմկոտ բաղա՛ձ։

Սիրտս բաց դռան է,
Արեւի տակ փռուած,
Ձեռքերովս օրորում եմ մի մեծ ծով,
Ես աշխա՛րհ եմ կենդանի։
Ինձ կարող են փակել
Օրերի աւերակ տան մէջ,
Եւ գիշերին պահակ դնել իմ դռան.
—Ես իմ լոյսն ունեմ եւ իմ մութը։

Ես իմ ձեռքերով կեանք կը տամ սիւներին,
Կը խօսեմ քարերի պատմութեան մասին,
Յամառած ծովերի մասին,

digitised by A.R.A.R.@

Ծովերի ձկների մասին,
Պայմարի եւ կեանքի մասին։
Ես իմ սեփական դուռն ունեմ,
Ներս կը մտնեմ արեւի խորքը,
Ներս կը մտնեմ մութի կոյր աչքից,
Ու կը սեղմեմ գիշերւայ կոկորդը։

Ես այս արեւի տակ
Եւ այս հողի վրայ
Ապրելու ծրագիրներ ունեմ։
Ես մենակ չեմ,
Ես սեղմում եմ հողի ձեռքը,
Ես ունեմ մի մեծ երազ,
Բանաստեղծի սիրտ,
Դեռ աշխարհին ու ինձ անծանօթ։

—Ես մենակ չեմ...

1967

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Ռ. Բէնքն

Աշխատում եմ ինքս ինձ խաբել
Բանաստեղծական խօսքերով։

Իմ վիշտը ժայռ է,
Սեւ գամի պէս ցցւած
Յուշերիս անդաստանի մէջ։
—Աշխատում եմ բանաստեղծութեամբ մօտենալ մարդկանց,
Հաշտւել նրանց ուրախութեան հետ,
Մնալ իմաստութեանը հողի...

Բանաստեղծի աչքերով
Հիմա ես տեսնում եմ
Ջինջ ու սիրող աստղերը,
Ու իմ երազների հետւում՝
Մեղկ մեղքի պէս հմայող աչքեր...

Ես հաւատում եմ, կը ճանաչեմ
Մի օր անճանելի հոգիդ,
Ու կը լինեմ քեզ մօտ՝
Երկու ծառերի պէս,
Մեր արմատները խառնած իրար,
Մեր ձեռք-ճիւղերի ջութակի վրայ

digitised by A.R.A.R.@

Հովերը կը նւագեն
Թռչուններուն համար։

Բանաստեղծօրեն մեր գլուխները իրար չենած,
Մենք կը լինենք զօրեղ,
Ապահով ու ձրի ապաստարան՝
Անցնող, դարձող թռչուններուն, մարդուն։

—Ես չգիտեմ, ինչո՞ւ
Կարդացի այսման գրեր,
Սերտեցի խօսքեր, բառեր—
Բառերը դարձան աչխարհներ։
—Մագլցեցի բարձունքներ,
Ու յոգնեցի՞ այսպէ՛ս...։
—Ջրերս մերկացան,—
Ընկնող տերեւը ինձ յուզեց,
Հառաչանքը մարդու
Եւ թափուած արեան ամէն մի գնդիկ
Արիւնոտեց սիրտս...։

—Ես չգիտեմ ինչո՞ւ
Դարձայ ուրի բանաստեղծ,
Ճանաչեցի գոյներ, գոյնե՛ր եւ մարդի՛կ,
Տառապեցի այսպէ՛ս...։

Ես բանաստեղծօրեն անցնում եմ
Խաչմերուկներ ու փողոցներ բազում,

Ուր լացում են, ծիծաղում՝
Անիւները՝ անիւներին,
Պողպատը՝ երկաթին,
Ծխում, վառում են՝
Մարդ ու մեքենաղ,
Ծամածռութիւններ անում իրար,
Յետոյ անծանօթի պէս գնո՜ւմ, հեռանո՜ւմ։

Ես բանաստեղծօրեն երկարում եմ
Անօգ բազուկներս վերեւ,
Չարդուած դրօշակի նման,
Ու կանչում եմ կեանքին...։
Հիմա այսպէս, կորած կեանքի ծխում,
Ես ուզում եմ կտրել
Իմ գլուխը՝ երազներով ծանրաբեռն,—
Սրտիս հետ,—
Ու տալ մարդկանց.
Իսկ խօսքերս բանաստեղծական,
Շունչս ի խորոց ուրի,
Թեթեւ, թեթեւ ու ձրի,—
Ջրի պէս պարզ ու համեղ,
Փոխել այսեղ,
Փոխրիկ բացատում,
Որ անցնող մարդը ժողովի,
Դնի ուրին, շրթունքին,
Պահի գլխում, գրպանում,
Կամ տայ ճամուն...։

digitised by A.R.A.R.@

Ես բանաստեղծօրեն
Մի փիչ երկար խօսեցի
Սրտի բաների մասին,
Որպէսզի մէկը ձեզանից—
Սիրի ու սեղմի ձեռերս,
Որովհետև չեն զգացել
Ջերմութիւնը անկեղծ ձեռերի...։

1966

ԱՀԱՒԱՍԻԿ ՄԱՐԴԸ

—Ահաւասիկ ես,
Մի մեծ հարցական՝
Թուղթ, մատիտ, սեղան,
Գիրք, բառեր,
Բառարան,
Եւ վերջապէս մի բան՝
Բանաստեղծութի՛ւն։

Մի հիւանդ, լայնացած սիրտ,
Փնտռող աչք, պեղող ձեռք,
Անիմաստ եւ իմաստուն
Բանականութիւն։

—Ահաւասիկ մի բանի մարդ՝
Մի գեր մարմնի մէջ։
—Հաւատարիմ պատօնեայ,
Երբեմն խելօք կառուցող,
Վարպետ լարախաղաց,
Կոպիտ ու բռնկուող,
Եւ վերջապէս մի մարդ՝
Հայկական յամառութեամբ։

—Ահաւասիկ մէկը,
Որ տների գործերը
Խառնել է գրպանի հաշիւներին,

digitised by A.R.A.R.@

Եւ կարծում է՝ Չարենց կը դառնայ,
Մտածում է մի օր թխի
Իր ունեցածի վրայ,
Թողնի իր տունն ու տեղը,
Եւ խօսքերի տեւրակները շալակած՝
Բարձրանայ ներքողութեան ասիճաններից,
Բարձրանայ, բարձրանայ,
Մինչեւ գլուխը դիպչի աստղերին,
Ապա իրեն կախի,
Ու ճօճւի ժամանակից-ժամանակ։

—Ահաւասիկ մի մսե զանգուած,
Զգայնոս ու տարօրինակ,—
Ինքը իր վրայ պահակ կանգնած,—
Ինքը իր բանտապա՛հը դաժան,
Եւ իր բանտարկեա՛լը ծեծուած։

—Ահաւասիկ ես, ինքս—Գալուստ Խանենց։

1967

ԳԻՇԵՐԻԱՅ ԱՓԱՂԱՂԸ

Գիշերւայ ափաղաղը կանչեց,
Օդի մէջ փոշիացաւ մութի յաղթանակի շունչը,
Եւ գագաթների վրայ ցուրտը խօսեց
Իր պարտութիւնից։
Կենդանի ժայռերի հետ
Նա ողբաձայն երգեց
Միականի քարանձաւների մէջ,—
Ծակող աչքի՝ լուսաւոր մտրակների մասին։

Գիշերւայ վիրաւոր ափաղաղը
Իր կտուցը խրեց
Իմ արեան մէջ,
Լոյսի մարգարիտները ցորեան հասիկների պէս
Ժողվելու համար։

Գիշերւայ ափաղաղը
Իմ տան դուռը թակեց,
Որ ես բացեմ ախտս, աչքս, ականջս,
Եւ բազուկներս՝
Իր կանչած աստղերին
Ընդունելու համար։

Գիշերւայ ափաղաղը կանչեց, կանչեց,
Քնած արեւին արթնացրեց,

digitised by A.R.A.R.@

Ու երկինքը կամրջեց սարերի հետ,
Սարերին համու հետ.—
Քամին չի ճանաչում ոչ մի սահման,
Եկաւ, ցսեց ափերիս մէջ։

Գիշերւայ մեռնող լռութիւնը
Երազների կուսութիւնն է առեւանգում
Եւ արգասաւորում բոլոր ծաղիկներին։

1967

ԾՈՎԸ

Ծովը ծնծում է մուրին,
—Շրը՛մփ, շրը՛մփ, շրը՛մփ...
Նոր ալիքը յարձակւում է
Մի հին ալիքի վրայ,
Բռնում է ու չի խեղդում.
Հինն է վազում նորի վրայ,
Ինքն է փշրւում,
Փշուր, փշուր, դառնում է փրփուր։

Մուրը ծնծում է աչերս,
Մուրը ձեռքը դրել է ծովի ուսին,
Ու նրա զարկերն է հաշւում։
Ամէն ինչ կանգնած է փիւած,
Սեւ անտառը սպասում է համու, անձրեւի,
Սպասում է նաեւ՝
Երամ-երամ թռչուններին։

Քայլում եմ գիշերի մէջ,
Եւ կարծում եմ,
Աւազի համր իմաստութեան դէմ էին
Դրոշմում եմ ոտնահետքեր հասաս։

Մուրը ծնծում է մուրին,
Մուրը ծնծում է լոյսին,

digitised by A.R.A.R.@

Մութը խմում է երազ
Ու փխսում է ֆուճ։

Ծովը ծեծում է ափերը մութի,
Ծովը լիվում է
կեղտոտ գարշապարը
Հողի եւ անհունի,
Ու դանդաղ, դանդաղ հիւծւում
Ոչնչութեան մէջ։

1967

Այս բոլորը, որ փորձում եմ անել,—
Օդ է ու թրթիռ.
Ես սոսկ մի ձայն եմ,
Բայց կարող եմ շարժման մէջ դնել
Անտառի կանաչ խորհուրդը,
Ձրնգուն մակընթացութիւնը.
Ես մի տերեւ եմ չնչին,
Պարում եմ ֆամու հետ՝
Խոտված ու արտնեղած պարողի պէս.
կրնկենեմ սեզերի վրայ մի թաց օր՝
Անծանօթի պէս...։

Այս բոլորը, որ խօսում եմ,
Խօսքեր են՝ մարգարէների խօսքերի պէս...։
Ես լար եմ մի հին ջութակի,
Որ նւագում է օրւայ գայրոյթը մատներին դրած
Անանուն մարդու ձեռքերով։
Հալածւած խիղճ եմ՝ խեղդւած օդի մէջ,
Կաթիլ-կաթիլ տեսողութիւն՝
Մարդկանց հայեացքներից դուրս։

Այս բոլորը, որ գրում եմ,—
Արցունքի հետ են
Այս ներման էջերի վրայ.

digitised by A.R.A.R.@

Իսկ երբ երգում եմ՝
Ձայնս դառնում է ճիչ ու աղաղակ,
Լուռ աճատուների բերանը, ձեռքը
Բացելու համար։
Աչխս կարմիր աստղերին գամած,
Բոբիկ ոտքերով շեղբերի վրայ կանգնած,
Կանչո՞ւմ եմ...։
Այսպես է հիմա
Իմ կացութիւնը այս դառն ու օտար,
Մութի աչխարհում։

1967

ԱՐՄԷՆ ԳԷՍ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ

Ու կեանքը լոյսի ալիքին հեծած,
Անհուն խորհից սլացաւ հեռու.
Ու ծիր-կաթի մէջ լողալով՝ ընկաւ
Երիտասարդ երկրի տղմոտ ջրի մէջ,
Այնտեղ մի դաժան պայքար ունեցաւ,
Բայց կեանքը յաղթեց ու հայրենիքի
Կարօտը սրտին ապրել սկսեց։
Անտեսանելի՝ լողաց տիղմի մէջ,
Բազմանալ փորձեց։
Ու յետոյ կեանքը ակներեւ դարձաւ,
Փոխեց բջիջի, փոխեց ձկների,
Ու ձկան գլխին բսեցին *աչքեր*։
Ջուկը գլուխը դուրս հանեց ջրից,
Աչքերով անթարթ սկսեց փնտռել
Անհունում թաղուած հայրենիքն իր հին.
Բայց ձուկը միայն սեւ ամպեր տեսաւ
Ու մի գորշ լուսին...։
Եւ ապա կեանքը երկուցոտով հզօր
Հսկաներ ծնեց.
Նրանք դուրս եկան տիղմերի միջից
Դաժան դէմքերը երկնքին յառած
Հսկաները բիրտ փնտռեցին երկար...։
Բրոնտոզաւրիւսը իր հսկայ վիզը
Դէպի վեր ձգեց,

digitised by A.R.A.R.@

Մի ֆանի ասղի պսպղուն լոյսը
Փշուեց նրա պղտոր աչերում,
Ու նա յուսահատ բոռալ սկսեց,
Նրանցից մեկը սացաւ թևեր,
Մարմինը իր ծանր բարձրացրեց գետնից,
Իր թռիչքի մէջ ձախողած ու խեղճ,
Ցեց եկաւ կրկին։
Ու հսկաների դարը վերջացաւ,
Փոքր թզուկների փոխուեցին նրանք։
Մողեսը հիմա հանում է էլի,
Գլուխը բնից կարօսով անհուն,
Երկինքը դիտում։
Ծնեց արծիւը թևերով հուժկու,
Ու խորաթափանց աչերով ծակող,
Նա որպես գետնի սուրհանդակ վսեմ,
Սլացաւ իսկոյն ամպերից էլ վեր,—
Ու տեսաւ աստղեր, անհամար աստղեր...
Ու վեր բարձրացաւ հողի մէջ գամուած
Ծառերը հսկայ
Յաւիտենական մի համբերութեամբ.
Հետազօտեցին երկինքը անհուն,
Հայրենիքից հին լուր սանալու։
Իսկ վերջում կեանքը ստեղծեց ՄԱՐԴՈՒՆ
Ու նրան տուց մի կենդան ուղեղ,
Որտեղ բնազդը փոխուել է մտքի։
Նա չունէր արծւի թևերը փարթամ,
Եւ ոչ էլ նրա աչերը զօրեղ.
Կարող էր հազիւ ոտքերի վրայ
Նա կանգնած մնալ,—

Կարօսով անհուն երկինքը զննել։
Արծիւը՝
Չի պատմում մարդուն թէ ինչ է տեսնում
Անհուն երկնքում...
Մենակ է մարդը։
Ու նա որոշեց
Արծւին նմանուել։
Նա այրեց հողը ու կուռ մետաղից—
Թևեր կառուցեց,
Թևերով հզօր դէպի վեր նախրեց՝
Մարդն էլ երկնքում լուսիններ տեսաւ,
Եւ աստղեր, աստղեր...
Բայց նա մտածեց,
Որ գուցէ լուսեղ աստղերից մէկը
Երկիրն է իր հին...
Ցետոյ նա մտաւ մետաղեայ հսկայ
Պղպջակի մէջ եւ վեր շպրտուեց—
Մթնոլորտից դուրս,
Բայց հայրենիքը այնման հեռու է...։
Կամակոր մարդը բանբերներ սարքեց,
Եւ սուրհանդակեց դէպի Լուսինը,
Դէպի Հրատը եւ տիեզերքի
Բոլոր կողմերը։
Հիմա անհամբեր սպասում է նա,
Սուրհանդակների ուրախ պատգամին,
Իր հայրենիքը տեսնելու համար
Նա խորաթափանց աչեր կառուցեց,
Վիթխարի աչեր.
Իսկ հայրենիքի հարազատ կանչը,

digitised by A.R.A.R.@

Լսելու համար
Նա գերզգայուն ականջներ սարեց։
Հսկայ աչքերը եւ ականջները,
Խուած են հիմա Արագած լեռան
Եւ Փալոմարի կատարի վրայ.
Ու գիշեր-ցերեկ հետազօտում են—
Տիեզերքն անհուն։
Իսկ հայրենիքը հպելու համար
Մարդը ստեղծեց անտեսանելի
Զգայուն մատներ ու խորաթափանց,
Սլացիկ թելեր,
Որոնք պեղում են աստղաբոյլերը։
Աչքերը հսկայ արդ ճշմարել են,—
Հին հայրենիքը։
Իսկ ականջներին հասնում է երբեմն,
Հին եղբայրների հեռաւոր կանչը։
Շուտով շատ շուտով,
Մարդը լոյսերի թելերին նստած—
Յետ է դառնալու դէպի հայրենիք...։

Կախարդ բժիշկը,
Հիւանդ, ծերացած սրտիդ փոխարէն—
Կրծիդ վանդակում
Տեղաւորել է մի նուրբ մեխենայ,
Ու պոկած սիրտդ, յոյսերով լեցուն,
Նետել է ահա։

Հիմա արիւնդ,
Մի մաթեմատիկ ճշտապահութեամբ—
Շրջան է անում.
Ու դու ապրում ես դեռահասի պէս,
Բայց մտածում ես
Քո շատ փորձառու, յոգնած ուղեղով։

Իսկ ի՞նչ է զգում fո այդ նոր սիրտը,
—Կարո՞ղ է արդեօք,
Որեւէ մեկին սիրել խորապէս։
—Զգո՞ւմ է արդեօք,
Բարին, չարը, կամ գեղեցիկը...։
—Դու ի՞նչ ես զգում։

Կախարդ բժիշկը ինձ խոստացել է,
Որ երբ ուղեղիդ գործ բջիջները
Վերջնականապէս կը թուլանուեն,
Քո՞ւղեղի՞տեղ՝ մի *թրանզիստոր*,

digitised by A.R.A.R.@

Ուղեղ կը դնի,
Եւ այդ զգայուն հրաշք մեխենաև,
Քո տեղ, ինձ համար
Կը ղեկավարի ու կը մտածի։

Կերպարուած ursով, կերպարուած մտքով,
—Դու ի՞նչ կը լինես,
Մարդու ստեղծած մի նոր *օթոմա՞տ,*
Թէ՞ ապագայի առաջին մարդը։
—Գուցէ մի հրէ՞շ...
Կամ թէ մի հանճար՝ գալիքի համար...։

ԱՐԳԵԼԱՆՔԸ

Քեզ կանչել են
Տիեզերքի անսահմանում
Սեղան նստած աստղաբոյլի
Գինարբուքին։
Ու անհունից ժայթքող փոշին
Եկել է, որ ինձ տանի
Դէպի այդ վեհ խրախճանքը։
Ցնծոյ նա ինձ հաշելու է
Ապագայի անսահմանը,—
Որ դու այնտեղ անմահանաս...։

Բայց... ննջգործեն դու ուզում ես
Նորածնունդ կապոյտ աստղի
Գաղտնիքները տիրանալ։
Ու դու արդեն անիծած ես,
Չի պեղել ես Արգելածը,
Ու տենչացել իմանալ այն,
Ինչ որ Աստեր Ստեղծողը
Չի իմանում։

digitised by A.R.A.R.@

Ռ. ԲԷՆ

ՄԵՌԱԾ ՄԷԿԸ

Հեռուում մի շուն ոռնաց — թաց մի տերև ապտակի պէս ընկաւ Զարեհի դէմքին. նա անմիջապէս նստեց և լայնացած բիբերով նայեց իր շուրջ. նայեմքերեան դեղին երեկոն մթնում էր դանդաղօրէն. անձրևը դադարել էր. երկնքում մի քանի աստղեր դեռ վախենում էին երևալ. Նա նորից ուշադրութեամբ գննեց շրջապատը. Սաւերները կուտակուում էին փոսերի մէջ. դիմացը, մութ զանգուածի վրայ հատիկ-հատիկ կայծկլտում էին փայլուն կէտերի շարքեր, — դա քաղաքն էր, իրենից քիչ հեռու մի քանի թիւեր ցնցուում էին անհանգստացած. Նա կասկածանքով նայեց նրանց, դուրս եկաւ ցեխերի միջից և թափահարեց իրեն.

Ե՞րբ էր, ինչքա՞ն ժամանակ է անցել, ուզեց յիշել և չը կարողացաւ — ժամանակի մի որոշ տարածութիւն— ուրիշ կերպով չէր կարողանում պատկերացնել ժայռերի այն ժապաւէնը, որ անցել էր. Ոչինչ չէր յիշում, կամ չէր ցանկանում յիշել, գիտէր միայն, որ այդ ընթացքում մթնել է ու լուսացել, որ ինքը վազել է, ընկել է ցած. գիտէր, որ ճակատը զարկել է գետնին, որպէսզի ցաւ զգայ, որպէսզի իր միտքը, իր ուզեղը, իր հոգին, իր սիրտը (ինքը չգիտէր դրանցից որ մէկը, գուցէ և ամենքը) հաւաքւէին, կուչ գային այդ ցաւի շուրջ և զբաղւէին միայն դրանով. գիտէր որ ցանկացել էր ոռնալ, այդ շան նման ոռնալ, — քայց ձայն չէր հանել, որովհետև վախեցել էր. Այո՛, այդ մէկը նա լաւ յիշում էր, վախեցել էր կենդանական մի վախով ու վազել նրանից ազատւելու համար, մինչև այլևս չէր կարողացել, մինչև մարմինը թուլացել էր, ջղերը յոգնել էին և մի բութ թմրութիւն կեղևել էր միտքը, ուղեղը, հոգին, սիրտը .. իսկ յետոյ քնել էր. կարծես թէ քնել էր. Եւ հիմա...

Սկսեց քայլել.

Նա ամէն օր, այս ժամին, վերջացնում էր իր աշխատանքը, գործատեղից դուրս էր գալիս փողոց, նայում երկնքին և ժըպտում, քայլում էր դէպի տուն և մտածում, որ Աննիկը հիմա թէյը պատրաստել է և նստել, սպասում է իրեն. Դա միակ վայրկեանն էր ամբողջ օրւայ ընթացքում, երբ նա բարի և զուրգուրոտ ձևով էր մտածում Աննիկի մասին, երբ իրեն թուում էր, որ ինքը կարող է երջանիկ լինել այնտեղ, այդ սենեակում, Աննիկի հետ. Բայց այդ բոլորը շատ կարճ էր տեւում, քաւականն էր միայն որ կանգնէին իրար դիմաց, որ նայէին միմեանց և սկսւում էր տանջանքը. իր հայեացքը դառնում էր կո՛շտ, սա՛ռ, կասկածոտ, Աննիկը յուսահատ աղաչանքով աչքերը յառում էր իր դէմքին, յետոյ վախեցած զսպում մի հառաչանք և ահա սկսւում էր դժոխքը, ամենօրեայ դժոխքը.

Կանգնեց — ահա թէ ինչ — մրմնջաց ճակատը շփելով, փակեց աչքերը. ինչ լա՞ւ է հիմա այնտեղ, այդ փոքրիկ սենեակում, տաքուկ և մտերիմ, Աննիկը վառել է ճրագը, թէյը պատրաստել և նստել սպասում է իրեն.

Նա պատկերացրեց ամբողջ այդ երջանկութիւնը. նայեց դէպի քաղաք, այդ մութ զանգուածի մի անկիւնում կուչ է եկել իրենց սենեակը և այդ սենեակի մի անկիւնում էլ իրենց երջանկութիւնը, այն՝ որին փնտռել են տաժանքով, աւելի ճիշտ, որ ինքը աշխատել է հասնել և չի կարողացել, որովհետև... որովհետև ոչինչ... որովհետև ինքը...

— «Ես հիմա կը գնամ տուն»— մտածեց նա և յետոյ կըրկնեց բարձրաձայն— ես կը գնամ տուն, հիմա, անմիջապէս.

Նա լսեց իր սեփական ձայնը և զարմացաւ. տխուր մի ձայն էր այն և որբ և անօգնական.

Սկսեց քայլել. Մութը թանձրացել էր իր շուրջ, մենաւոր

digitised by A.R.A.R.@

մի ծառ դողում էր և մրմնջում՝ «ես մենակ եմ», և յեռոյ, կարծես, նաև ասում էր շշուկով «... և վախենում եմ...»։ Նա արագացրեց քայլերը։ քաղաքը վառւում էր թաց խարույկի պէս, որի վրայ գիշերը կռացել և իր սառած մատներն էր տաքացնում։ Նա յետ նայեց դաշտի մէջ մենակ կանգնած ծառին, որը փսփսում էր «ես մենակ եմ»։

Փողոցները լցած էին շտապող մարդկանց վազքով և խճողուած մեքենաների հոսքով։ Հեռւից տեսաւ իրենց սենեակի լոյսը։ տան դուռը բաց էր, արագ քարձրացաւ աստիճաններից, ներս ընկաւ սենեակ և յենւեց դռանը։ Նա երբեք չէր կարող երևակայել, որ ինքը այդքան յոգնած է, որ մի մարդ կարող է այդ աստիճան յոգնած լինել, յետոյ յիշեց, որ ներս մտնելիս լսեց խեղդւած մի ճիչ։ Նայեց, Աննիկը դռնատւած կպել էր պատին

Զարեհը փակեց աչքերը, քիչ անց նա զգաց, որ մի ձեռք բռնեց իր թևը, նա զգաց, որ այդ ձեռքը դողում էր, յետոյ քաշեց նրան զգուշութեամբ։

— Ե՛կ... նստիր...— ձայնն էլ էր դողում։

Նա փլւեց բազկաթոռի մէջ։ Մնաց անշարժ, մինչև շատ յետոյ Աննիկը շշնջաց։

— Մա՛ր։

Նա վերցրեց բաժակը և դրկեց իր երկու ափերով։ Թէյ էր, սովորական, ամենօրեայ թէյ, մտերմիկ մի ջերմութեամբ յագեցած և ներքին բարութեամբ լեցուն։ առաջին ումպի հետ մի երանութիւն իջաւ իր մէջ և տարածւեց։ դա երջանկութիւնն էր, դա հէնց իր և Աննիկի երջանկութիւնն էր, որին երազել էր և որի համար...։

Հիմա ժամանակն է...—մտածեց ու պիտի ասել, բացատրել ամէն ինչ, հիմա ես կարող եմ և նա կը հասկանայ, իսկ վաղը դուցէ այլևս անկարելի լինի։

— Լսիր... Աննիկ...

Աննիկը դարձաւ և հարցական նայեց։

Միայն չգիտէր թէ ինչպէս սկսի և որտեղից։ իր կեանքը... տառապանքը... Նա որոշեց բարձրաձայն կրկնել այդ բոլորը, ինչ անցնում է մտքով։

— «... Իմ կեանքը... տառապանքը, և քոնը, ես եմ մեղաւորը, ոչ, այսինքն... լսի՛ր Աննիկ, դու գիտես չէ՞, դու գիտես որ ես...»։ Նա լռեց մի վայրկեան։

— Հանգցրու ճրագը։

Սենեակը մթնեց։ Նա զգաց թէ ինչպէս Աննիկը զգուշութեամբ եկաւ և տեղաւորւեց իր դիմաց։ Նա որոշ ժամանակ ականջ էր դնում մի տարօրինակ մրմռոցի, երևի գիշերւայ շնչառութիւնն էր, և երբ սկսեց խօսել՝ իր ձայնը անծանօթ էր ու նորից որքա, անօգնական։

—«... Ես ինչ արել եմ, դա եղել է մեր սիրոյ համար, մեր երջանկութեան համար։ մենք տառապում էինք, իսկ ես ուզում էի երջանիկ լինել։ Սկզբից, պէտք է սկզբից պատմել, թէև դուարդէն շատ բաներ գիտես, բայց ուզում եմ ամէն ինչ սկզբից սկսել։ սկիզբը՝ դա այն ժամանակ էր, երբ ես պատանի էի, հաւատում էի երազին, սիրուն, ուզում էի սիրել, սիրւել աւելի ճիշտ, և մի երեկոյ երևաց նա, դիտես արդէն ասի, իր մասին ես քեզ շատ եմ պատմել, բայց ոչ գլխաւորը, նա եկաւ և ասաց «սիրում եմ քեզ» ու համբուրեց վայրենօրէն, նա խենթ խօսքեր էր ասում, որոնց իմաստը չէի հասկանում, բայց զգում էի, խորհրդաւոր և տարօրինակ բաներ էի զգում. երբեմն մի անորոշ վախ սեղմում էր կոկորդս, իր չարագուշակ լռութիւնները, իր յանկարծակի և անկապ հեծկլտոցները ինձ անհանգստացնում էին։ աչքերի մէջ յաճախ բեկւում էր մութ և պղտոր մի փայլ, հայեացքը դառնում էր անորոշ, կոյրերի հայեացքի նման... և դա ինձ վախեցնում էր,—մինչև մի անգամ, մի երեկոյ, իր ցանկութեամբ մենք գնացինք քաղաքից դուրս։ երբ քայլում էինք, մի վատ նախազգացում ճնշում էր ինձ, և երբ հասանք իր սիրած վայրը, նա պառկեց խոնաւ գետնին, մէջքի վրայ, նայեց երկնքին ու ասաց —«Տխո՞ւր է...»— յետոյ մի քան մրմնջաց, քանաստեղծութեան նման մի բան։ Ես էլ նայեցի երկնքին և յետոյ շուրջս։ Մթնում էր։ Մուգ մանիշակագոյն մի մառախուղ տարածւում էր գետնին, տխուր մի հով կար և տխուր մի լռութիւն։ Նա յանկարծ հարցրեց։

— Դու սիրո՞ւմ ես ինձ...

Նա երբեք այդ քանով չէր հետաքրքրւել և ես չկարողացայ պատասխանել։

digitised by A.R.A.R.@

— ... Շա՞տ... շա՞տ...

Երևի ծաղրում է, մտածեցի ու կուրծքս ցաւեց.

— ... Այնպէս որ երբեք, երբեք, չկարողանաս ինձ մոռանալ, երբ այլևս քեզ մօտ չլինեմ. տանջւես անընդհատ և անտանելի ձևով, յիշես ամէն ինչ և ամէն վայրկեան. և յետոյ երբ անցնեն ամիսներ... մի երեկոյ, այսպիսի մի երեկոյ, զգաս որ իզուր ես ապրում... ամէն, ամէն ինչ անես մոռանալու համար, չյիշելու համար, փորձես զանազան միջոցներ, զբաղումներ, փնտռես նոր սէրեր, նոր համբոյրներ... բոլորն իզուր...— Նա դարձաւ և նայեց ինձ իր կոյր հայեացքով — ... Այո՞, դու ինձ այդպէ՞ս ես սիրում։

Նա ուրիշ բան է ասում, մտածեցի, նա տարբեր բանի մասին է խօսում և ես չեմ հասկանում. նայեցի նրան, նա ժպտաց և այդ ժպիտը քարացաւ։

Շատ յետոյ ես նորից նայեցի, նա դեռ ժպտում էր. աչքերը փակ էին և արցունքի երկու ծանր կաթիլներ կոպերի արանքից հոսում էին ցած. ես միայն իր մազերը շոյեցի և երբ անցաւ երկար ժամանակ, երբ արդէն մութ էր, երբ համբուրեցի իր աչքերը և զգացի որ չոր են, շշնջացի.

— Ինչո՞ւ...

— Մեռած մէկին եմ յիշում — ասաց և սեղմուեց ինձ, ես չգրկեցի նրան, այլ ինքը սեղմուեց կրծքիս։

— ... Ուզում եմ հանգստանալ... ուզում եմ քնել...

Սիրտս կը խանգարի, մտածեցի, եթէ իսկապէս ուզում է քնել, սիրտս կը խանգարի նրան, որովհետև շատ ուժեղ է զարկում, իսկ նա մեռած մէկին է յիշում, ասացի ինքս ինձ ու յանկարծ ինձ մենակ զգացի. արագ տարածեցի թևերս ու գրկեցի նրան, յուսահատ և դողալով սեղմեցի նրան կրծքիս, յետոյ չգիտեմ ինչեր ասացի.— խենթ բաներ, յիմար բաներ։ Նա ջղաձգօրէն ցնցուեց թևերիս մէջ և սկսեց խօսել։ Նա ինչ որ բառեր էր արտասանում, որոնց մութը խեղդում էր անմիջապէս. սկզբում իր խօսքերը ինձ չէին հասնում, բարձրանում էին մի քիչ և ընկնում ցած և ես չէի հասկանում, յետոյ բառերը աւելի պարզ դարձան և քարերի պէս կոշտ, ես կամաց-կամաց սկսեցի հասկանալ, ես հասկացայ։

Ես հասկացայ, որ նա սիրում էր ուրիշի, որ նա միշտ սիրել

էր այդ ուրիշին և միշտ էլ կը սիրի. իր մեծ, խենթ սէրը թողել և հեռացել էր, այլևս երբեք, երբեք չվերադառնալու համար... յետոյ նա փորձել էր ամէն ինչ, ամէն կարելի և անկարելի բան նրան մոռանալու համար։

— «... Նոր սէրեր, նոր համբոյրներ...» — յիշեցի իր խօսքերը և միանգամից ոտքի ցատկեցի. այլևս պէտք չէր, բացատրութիւններն աւելորդ էին, հասկացայ որ ես էլ մի միջոց եմ եղել միայն, իր փորձած միջոցներից մէկը և անյաջող, լրիւ անյաջող, որովհետև ահա նա հիմա զգում էր որ բոլորը իզուր էր, ես էլ էի իզուր։ Թողի նրան հէնց այնտեղ և հեռացայ շտապով։ Ես վախենում էի իր մօտ մնալ։ Ով գիտէ ինչ կարող էր պատահել, որովհետև ոչ մի բան չի խորտակւում անհետևանք, անզոհ։ Եկայ տուն։ Գիշերը ես սկսեցի մտածել. այդ գիշեր և հետագայ գիշերները ես մտածում էի. այդ գիշեր և հետագայ գիշերները ես սկսեցի հասկանալ իր բոլոր խօսքերն ու լռութիւնները, իր կոյր հայեացքը և իր յանկարծական լացերը....

Յետոյ երկար ժամանակ, փլատակների մէջ փնտռում էի մի հիմնաքար, վերակառուցելու համար իմ խեղճ հոգին. մի փոքր հաւատք էի ուզում, մի շատ փոքր չափով հաւատք՝ ապրելու համար, աւելի քիչ տանջւելու համար։ Եւ գտայ քեզ, Աննի՛կ։ Չգիտեմ ինչպէս ես կարողացել դիմանալ, ինչպէս ես տարել իմ հիւանդոտ ներկայութիւնը։ Ես քեզ վրայ էի թափում ներսումս կուտակուած մաղձը, ամէն վայրկեան բզկտում էի հոգիդ, աշխատում էի տեսնել, ֆիզիքապէս տեսնել բոլոր մտքերդ, երազներդ։ Երբեմն ես զգում էի իմ արարքների, իմ խօսքերի ամբողջ վայրագութիւնը, նկատում էի թէ ինչպէս դու աշխատում էիր տալ իմ հոգուն իր խաղաղութիւնը, պատասխանում էիր իմ բոլոր հարցերին, ամենածիծաղելիներին և ամենազարշելիներին և դա ինձ աւելի էր ջղայնացնում. քո վախեցած աչքերը չէին ըմբռնում իմ կատաղութեան պատճառը.— պատճա՞ռը.. Այդ թո՛յն էր, որ լցուել էր հոգուս մէջ և եռում էր ու նաև երջանկութեան մի անզօր ու հիւանդ կարօտ։ Մի բան փրփրում էր այնտեղ, կրծքիս տակ, մի յորձանք դէմ էր առել և անցք էր փնտռում, մի առիթ էր պէտք, ասեղի մի չնչին հարուած... և ահա... և այն երեկոյ...»։

digitised by A.R.A.R.@

Զարեհի ձայնը յանկարծ խզեց. նա լռեց, այլևս այժ չունէր խօսելու, իսկ սենեակում կարծես ոչ ոք չկար, Աննիկն էլ չկար, Նա արագ առաջ կանգնեց և փնտռեց գրպանները, յետոյ մօտեցաւ Աննիկին և զգոյշ, մատով դիպաւ ուսին:

— Լսիր,— շշնջաց,— դա ե՞րբ էր··· — յետոյ միանգամից ուղղուեց և հարցրեց բարձրաձայն — ծխախոտ ունե՞ս:

Աննիկը արագ բարձրացաւ տեղից և մթութեան մէջ տենդոտ շարժուձեւերով սկսեց փնտռել: Զարեհին թւաց որ նա մի ինչ որ բանից ուշադրում էր խոյս տալ, փախչել: Վերադարձաւ, նստեց իր տեղը ու սպասեց. երբ Աննիկը մօտեցաւ, աշխատեց տեսնել նրա աչքերի արտայայտութիւնը: Լուցկու լոյսը ցնցուեց մթութեան մէջ, Աննիկը իջեցրել էր թարթիչները ու նայում էր ցած. անսահման կարճ մի վայրկեան նա բարձրացրեց կոպերը և լոյսը հանգաւ:

— Սա··· երկրորդ գիշերն է···— ասաց Աննիկը շտապ և վախեցած:

Զարեհը մտածեց— և մթի միայն երկրո՞րդ գիշերն է:— Նա քնազդաբար ափով ստուգեց ղէմքի մազերը. աշխատեց մի ուրիշ հարց տալ, չկարողացաւ. միտքը կանգ էր առել, աւելի շուտ ուրիշ ուղղութեամբ էր շարժւում. նա որոշեց խօսել, ամէն գնով շարունակել իր առելիքը:

— «Այդ գիշեր··· այդ երեկոյ, յիշո՞ւմ ես չէ՞, Աննիկ, դու գիտէիր որ ես արցունքներ տեսնել չեմ կարողանում, դու այդ գիտէիր և աշխատում էիր ծածկել ինձնից, կիսամութ էր և տխուր, ճիշտ ինչպէս այն միւս, այն հին երեկոն··· դու լացում էիր··· և ես տեսայ··· յետոյ չդիտեմ··· անգիտակից էր··· ես չէի հասկանում··· ձեռքերս տարածեցի դէպի քեզ, ձեռքերս իրենք տարածւեցին, իրենք շարժւեցին դէպի քեզ··· ես տեսայ նրան··· միւսը··· նա էլի լացում էր և ծիծաղում արցունքների միջից··· ինչպէս այն երեկոյ··· և ես···»:

Նա այլևս չէր կարողանում խօսել: Ձայնը մեխի պէս խրւում էր կոկորդի մէջ և դուրս չէր գալիս, մինչդեռ ինքը այս ամբողջը պատմեց, որպէսզի կարողանար բացատրել Աննիկին իսկականը, բայց ահա հիմա չէր կարողանում, բառեր չկային, բառերը դատարկւում էին իրենց իմաստից և միայն ձայն դառնում, իսկ ձայներն էլ կուտակւում էին կոկորդի մէջ ու դարսւում իրար վրայ: Փորձեց նորից.

— ... Առիթը··· դիտե՞ս··· առիթը···

Լռեց: Մութի մէջ մորմոքւում էր ծխախոտի կրակը: Միայն դա, ուրիշ ոչինչ. լուսամուտի դիմաց դրսում քարացել էր նոյեմբերեան քամին:

Զարեհը մնաց նոյն դրութեան մէջ մի քանի վայրկեան, բայց պէտք էր, պէտք էր ասել, վերջացնել, ազատւել: Նա հաւաքեց իր ուժերը, մատները սեղմեց աթոռի բազկին, մի քիչ քարձրացաւ և կակազեց:

— Ես··· ուզեցի··· խեղդել···

Քարացած քամին փչրւեց և թափւեց լուսամուտի ապակիների վրայ:

Զարեհը յետ ընկաւ բազկաթոռի մէջ և փակեց աչքերը. նա այլևս չէր կարողանում ամենափոքր շարժուն իսկ անել, և չէր էլ ցանկանում. այդ կամաւոր դիակնացումը մեղմում էր կարծես իր ներսում գրգռւած ցաւը. նա չէր կարողանում և չէր էլ ցանկանում հասկանալ, որ այս ընթացքում, երբ ինքը խօսում էր, անկիւններում մրափած ստւերներն արթնացան մէկ-մէկ և նայեցին միմեանց, որդերը դուրս սողացին տիղմի միջից և իրենց շօշափուկներով քաշեցին իրար. նա դեռ չէր ցանկանում ընդունել, որ քերել է կեղևը և բացել վէրքերը, որ բորբոքւել են հին սպիները ու նրանց տակ կուչ եկած մրմուռը տնքում է հիմա:

Նա դանդաղ բացեց աչքերը և նայեց իր շուրջ: Սենեակն էր, իրենց սենեակը, ուր միայն մի դառն լուսթիւն ապրում էր չարագուշակ կեանքով, իսկ դրսում, պատուհանից այն կողմ, գիշերը ընկել էր ցեխերի մէջ և թաթերով աչքերը փակել:

— Աննիկ՛,— կանչեց վախեցած:

Ոչ ոք չպատասխանեց. կարծես ամէն ինչ մեռած էր, կարծես ոչ ոք չկար որ պատասխաներ, մինչդեռ ինքը տեսնում էր Աննիկին, ինչո՞ւ էր այդպէս քարացած նստել, ինչո՞ւ չի խօսում, ինչո՞ւ չի շնչում, երբ ինքը ահա անկարելի ձևով մենակ է:

Մօտեցաւ աղջկան, պարզեց ձեռքը և դիպաւ նրա ղէմքին, յատկապէս ղէմքին:

digitised by A.R.A.R.@

— Լսի՛ր…

Աննիկը ցնցւեց և յետ քաշւեց։ Յիշեց որ քիչ առաջ էլ երբ ծխախոտ էր ուզում, մատով զգոյշ դիպաւ ուսին, Աննիկը նորից այսպէս ցնցւեց և արագ ոտքի կանգնեց։ «Նա չի ուզում դիպչեմ իրեն… նա…»։ Շիկացած երկաթի մի կտոր ընկաւ Զարեհի հոգու մէջ և թշւաց։ Անընդունելի մի ցաւ, լրջօրէն մխրճւեց ներս և քգկտելով իր ճանապարհը, տեղ քացեց իր համար։

Նա այդպէս մնաց մի որոշ ժամանակ, յետոյ լսեց մի թոյլ նււոց, հիւանդ և անօգնական, բայց դա Աննիկը չէր, նա զգաց որ ծնօտը ցնցւում է փշրւած մի դողով, զգաց որ դողը իջաւ իր ոտնաշարով և խոցաւ ծնկների տակ, զգաց որ այդ ծնկները կամաց-կամաց ծալւում են։ Նա յանկարծ ընկաւ ցած, Աննիկի դիմաց և գրկեց նրա ոտքերը։

— Աննի՛կ… Աննի՛կ…

Աննիկը քարացել էր, բայց Զարեհն զգում էր, թէ ինչպէս աղջկայ ամբողջ մարմինն աշխատում էր ոտքս պրծնել իր թևերի միջից, մինչդեռ նա երևի վերմարդկային ճիգ էր գործ դնում այդպէս անշարժ մնալու համար։ — Բայց ինչո՞ւ, հիմա էլ ինչո՞ւ, այլևս ինչո՞ւ, իր միտքը, իր ուղեղը, իր հոգին, իր սիրտը (ինքը չգիտէր դրանցից որ մէկը, գուցէ և ամէնքը) հաւաքել էին իրենց վերջին ուժերը և մի ելք, մի փրկութեան միջոց էին փնտռում։

Նա կանգնեց ոտքի և աղջկայ թևերի տակից քաշած, իր հետ քաշեց վեր, յետոյ գրկեց նրան և սկսեց անգթօրէն սեղմել կրծքին։ Նրա ճաքճքած շրթերը փնտռեցին և գտան Աննիկի շրթերը, նա ատամները խրեց թպրտացող մսերի մէջ և սպասեց, սպասեց որ մի հրաշք պատահի, թէև արդէն գիտէր որ աւելորդ է, և խզուր և անհրնարին։

Կարծես դիակ էր գրկել և դիակի պէս էլ աղջիկը փուեց քազմոցին, երբ քաց թողեց նրան։ Զարեհը լսեց Աննիկի յուսահատ շնչառութիւնը և ուրիշ ոչինչ։ սենեակը, իրենց սենեակը, լի էր մեռելութեամբ, թէև իրենք կային, այնտեղ էին։

Վառեց ճրագը։

Ամէն ինչ պարզ էր… նա հասկացաւ, նայեց Աննիկին, սենեակը, և հասկացաւ։

Մի կատարեալ յուսահատութիւն գրկեց նրան և սկսեց օրօրել։ դա լաւ էր, հանգստացնում էր. դա վերջն էր արդէն, ամէն ինչի վերջը… այլևս ոչինչ… նա նոյնիսկ ժպտաց և հաճոյքով ինքն իրեն յանձնեց այդ փրկարար զուրզուբանքին։

Նա յետեց պատին և մնաց մի քիչ, յետոյ դանդաղ քացեց դուռը, խնամքով փակեց այն իր յետևից, իջաւ ատիճաններից և դուրս եկաւ փողոց։

Այնտեղ դիշերը գոնէատւել էր։

Փորձեց քայլել, չկարողացաւ ու նստեց հէնց այնտեղ, ցեխերի մէջ։

Նա յանկարծ յիշեց գաշտի մէջ մենակ ընկած ծառը, որը փսփսում էր «… ես մենակ եմ…» և յետոյ նաև կարծես ասում էր «… ես վախենում եմ…»։

Նա լսեց և փակեց աչքերը։

digitised by A.R.A.R.@

Ռ. ԲԷՆ

Ի ՍԿԶԲԱՆԷ

Արեւառաս ամռան մի առաւօտ,
Գիտե՛մ, ինձ կը կախեն
Խորխորատի ժայռին կառչած
Կաղնու ծառից յառաջակարկառ։

Լոյսերը կը խտանան մարմնիս վրայ կախուած,
Ճառագայթները կը խրձուեն
Ու զարմացած հովեր, յուզուած հովեր,
Կօրօրեն այն երկար։

Նախ ագռաւները կը գան, կը կռկռան։
Յետոյ ճները կը խռնուեն ցածում,
Եւ կը հաչեն յամառ,—
Կախուած մարմնիս վրայ յառաջակարկառ։

Յետոյ մարդիկ կը հաւաքուեն այնտեղ,
Խորխորատի յատակից կը նայեն վեր,
Կը տեսնեն մարմինս յառաջակարկառ,
Կը հառաչեն, թագուն կը հառաչեն։

Եւ գիտե՛մ, այս մէկը վստա՛հ գիտեմ,
Ամռան այդ առաւօտ արեւառաս,
Մի երեխայ կանցնի իմ ճանապարհով
Ու կը կանգնի յանկարծ։

Իր աչքերը բարի եւ անարատ,
Կը թափառեն երկա՜ր, երկա՜ր,
Մարմնիս վրայ կախուած, յառաջակարկառ.
Յետոյ իր վառ, պայծառ ծիծաղի միջից
Կը հեկեկայ մի բառ։

digitised by A.R.A.R.@

Ես իմ սեփական ուրւականը
Մի բարձր նիզակի ծայրին զարկած,
Որպես արբազան մի դրօշակ,—
Տանում եմ դէպի սիրտը մարդկանց,
Մարդիկ անհաւաս եւ որբ եւ խորթ,
Վարանմով դառնում են, դառնում էլի,
Նայում են ապշած եւ անհաղորդ,
Տեսնում են դրօշն այդ զարմանալի,
Որ ծւեն-ծւեն է, արիւնլւայ,
Որ բզկտած է վերով բազում,
Որպես մնացած միակ աւանդ
Ահեղ, անխնայ մի պատերազմում։
Տեսնում են ինչպես խալլում եմ ես,
Հպարտ ընթացով յաղթականի,
Եւ որպես արբազան մի դրօշակ,
Ծածանում եմ իմ ի՛սկ ուրւականը։

Հիմա,

—Այս ահեղ վայրկեանին,
Շարժելով իմ լուսեղէն մատը
կեանքի մագաղաթեայ մատեանում,—
Քանդակում եմ բառեր մի ճանի,
ու պատգամում այսպէս,—
Ես...

(Մի խորհրդաւոր նշան, ուր թագնւած է
իմ մոգական անուանը)։

Ամենակարող եւ ու՛րմ եւ կո՛ւռ,
Հաւաքեցի տիեզերից ինձ հասանելիք տուրքը։
Ես...

(Նոյն կախարդական նշանը և որի մէջ
պահւած են գաղտնիքները բոլոր)։

Աղեղ լայնալիճ եւ նետ միանգամայն,
Պողովատեայ զրահ եւ ջրդեղած տեգ,
Պահապանող վահան եւ սպանանող սուր.
Նա ով ասել է անասելին
ու բարբառել անբարբառը,
Ով երկնակամարի երազն է աղեղել,
Ով խաւար իմաստութեամբ ողողել է կեանքը
ու հեղեղել պայծառ գառանցանքով։

digitised by A.R.A.R.@

Հիմա,

—Այս ահեղ վայրկեանին,
Արձակում եմ հրաման մի հատու՝
Ինձ հպատակ եւ հարկատու
Արեւակոյտերին, աստղաբոյլերին
Որ բոլոր արթուն երազներ,
ու նաեւ զառանցահմները իմաստուն,
Անյապաղ շտապեն տուն,
Որպէսզի պահակեն հսկումի
այս ժամը ահարկու։

Քանզի Ես...

(Միւնոյն նշանը դիւթական)։

Մի անողո՛րմ, ողորմելի՛ ուղեղ,
Ցանկանում եմ փշրել ժամանակի ապառաժը,
Որպէս յաւերժական վրէժ։

ՄԻՋԳԻՇԵՐԱՅԻՆ ԵՐԳ

Նա նստել է մենակ,
Մեռած ձայների ոսայնում,
Բարակ ոսկերը ծալած իր տակ,
Կիսախուփ աչքերով
Անծրեւի արիւնն է ներծծում,
Օրօրւում է դանդա՛ղ, դանդա՛ղ,
Ու յօրինում արիւնլուայ մի եղանակ։

Մի հին, հեռաւոր գիշերւայ փոշում՝
Երազի մի բեկոր
Ինձ է ասրջում.
Հայեացքս ձգո՞ւմ է, երկարո՞ւմ,
Ու կամրջում երկու գիշեր,
Կամարւում երկու խաւարների միջեւ,
Մի հին գիշերւայ ափից մինչեւ
Ափն այս գիշերւայ։

Աղջիկը...
մի աղջիկ
Քայլում է ամբողջ ճանապարհը,
Եւ բողբոջ ծիծերը ափերի մէջ լեցուն,
Ինձ է մատուցում.
Ես մտածում եմ— ո՞վ գիտէ...
Գուցէ վաղը արեգակը գայ
Եւ առաւօտը...,
Գուցէ մի տեղ, մի որեւէ առաւօտ կայ...

digitised by A.R.A.R.@

Մինչդեռ աղջիկը,— մի աղջիկ
Դողդոջ ֆայլերով,
Կտրում է ամբողջ ճանապարհը
Ու աղերսում
—Իմ սեր... իմ սեր...իմ սե՜ր տխուր,
Իմ սեր արնախում...
Ես մտածում եմ— ո՞վ գիտե
Ով գիտե... վաղը...

Իսկ եթե յանկարծ վաղը
արեգակը չգա՞յ,
Եւ առաւո՞տը...
Իսկ եթե այլեւս ոչ մեկ
առաւօs չլր կայ...,

digitised by A.R.A.R.@

Բ. ՄԱՍ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1.— *ՖՕՐՈՒՂ ՖԱՐՈԽԶԱԴ*
2.— *Մ. Թ. ԲԱՀԱՐ* Մի հատւած Զ. Միրզայեանի
«Պարսկական Գրականութեան Պատմութիւն»ից,
3.— *ՌՒԶԱ ԲԱՐԱՀԷՆԻ* (Բանաստեղծ)
4.— *Բ. ԱԼԻԽԱՆԻ* (Արձակագիր)

ՓՕՐՈՒՂ ՓԱՐՈՒԽՋԱՅ



1934 - 1967

Իրանի ընկերային կեանքի չվճռուած, տագնապալից եւ խառնաւափոթ հարցերից մէկը պարսիկ կնոջ ազատագրման եւ զարթօնքի խնդիրն է։ Այս հարցը դեռեւս կայ եւ ծեծուում է արեւելեան բազմաթիւ երկրներում, որոնք մտել են յառաջադիմութեան հունի մէջ։

Իրանում,—ճնորհիւ երկրի լուսամիտ ղեկավարների,— այս հարցը մասամբ ձեւ եւ կերպարանք է ստացել, սակայն լայն խաւերում, որտեղ, ինչ սովորոյթներն ու աւանդութիւնները գերիշխող դեր են կատարում, մնացել է դեռեւս անկատար։ Մեր դարու սկզբնական տարիներից սկսած, 1906 թի Սահմանադրական շարժումը, համարեա ոչինչ ունեցաւ պարսիկ կնոջ ի-

digitised by A.R.A.R.@

ռաւուցմների պաշտպանութեան համար, միայն սրանից 30 տարի առաջ, 1936-ին էր, որ երկրի Վեհապետի հրամանով, առաջին անգամ, իրաւունք տուեց, որ կինը, առանց ծոլի (չադրա) փողոց դուրս գայ եւ ծոլի գործածութիւնը պաշտօնապէս արգելուեց։

Այս բարձր կարգադրութիւնը, իհարկէ, անկիւնադարձ է հանդիսանում ի նպաստ պարսիկ կնոջ ազատագրման։ Եւ այս թւականից է, որ սկսում են Իրանի ընկերային կեանքում դեր խաղալ նաեւ պարսկուհիները։ Այս պայմանների եւ իրողութիւնների ծնունդ է Ֆօրուղ Ֆարոխզադը, Իրանի ամենաբմբոսս կին բանաստեղծը։

Նա ծնուել է 1934 թին, Թեհրանում։ Իր կրթութիւնը վերջացնելուց յետոյ սովորում է նկարչութիւն եւ ապա ուիրւում է գրականութեան։ Նրա առաջին ժողովածուն լոյս տեսաւ 1955-ին՝ «Գերի» խորագրով։ Պարսիկ գրականութեան պատմութեան մէջ սա մի աննախընթաց երեւոյթ էր, որով պարսիկ կինը, առաջին անգամ, բացարձակ կերպով արտայայտւում էր սիրոյ «մեղք»ի մասին։ Իր յաջորդական գործերն են՝ «Ըմբոստութիւն», «Պատը» եւ «Մի ուրիւ ծնունդ» գրքերը։

Նա ինքնասպանութեան արկածով մեռաւ այս տարւայ 14 Փետրուարին։

Ֆօրուղ Ֆարոխզադը Իրանի գրականութեան յառաջադէմ եւ արդիական ամենափայլուն ներկայացուցիչներից մէկն է։ Նա բարեկամական յարաբերութեան մէջ էր «Նոր Էջ» գրական խմբակի հետ եւ մասնակցել է մեր գրական ասուլիսներին։ Առաջին անգամ, 1960-ին, «Նոր Էջ»ի 12-րդ գրքում, հայ ընթերցողներին թարգմանաբար ներկայացրեցին նրա բանաստեղծութիւնները։ Որպէս յարգանք նրա անմոռաց յիշատակին, «Նոր Էջ»ը պարտականութիւն է համարում մեկ անգամ եւս, իր ընթերցողներին ներկայացնելու նրա ամենայատկանշական երկերից երեք կտոր։

Ֆօրուղ Ֆարոխզադը մեզանից հեռացաւ, երբ դեռեւս իր տաղանդի փթթումի ամենաբեղմնաւոր տարիներն էր ապրում։

ՄԷԿԸ ՈՐ ՈՉ ՈՔԻ ՆՄԱՆ ՉԷ

Ես երազ եմ տեսել՝ որ Մեկը պիտի գայ,
Ես մի աստղի երազ եմ տեսել։
Աչքիս կոպը խաղում է.
Կօշիկներս զուգւում են.
— Կուրանամ ես՝ եթե սուտ խօսեմ.
Ես այն աստղի երազը տեսայ՝
Երբ ոուն չէի։
Մեկը կը գայ.
Մեկը կը գայ.
Մեկ ուրիշը,
Մի լաւ մարդ.
Մեկը՝ որ ոչ ոքի նման չէ. բարեկամի նման չէ. հօր նման չէ.
Եղբայի նման չէ.
Մօր նման չէ.
Նման է նրան՝ որ պիտի լինի։
Հասակը՝ մեր հարեւան նարտարապետի տան
ծառերից էլ բարձր է։
Եւ դէմքը՝ Իմամ Զամանի*) դէմքից աւելի լուսաւոր է։
Եւ Սեիդ Զաւադի եղբօրից (որ գնացել, ոսկիական
համազգեստ է հագել)

Չի վախենում։
Եւ ոչնչից՝ Սեիդ Զաւադից, որ մեր տան բոլոր սենեակների
սեփականատէրն է՝

Չի վախենում։

---

*) Մեսիա։

digitised by A.R.A.R.@

Նրա աճումն ա՛յն է, որ մայրս
Իր աղօթքի սկզբում եւ վերջում կրկնում է—
—Ո՛վ մուրազների մուրազատու,
—Ո՛վ արդարաց արդար։
Նա կարող է երրորդ դասագրքի բոլոր բառերը,—
Աչքերը փակ,— կարդալ։
Եւ կարող է, նոյնիսկ, հազարը,
Առանց պակաս բերելու,
Քաան միլիոնի վրայից վերցնել...
Նա կարող է Սեիդ Ջաւադի խաւուրից, ինչքան որ ուզի,
Ապառիկ ապրանք գնել։
Եւ կարող է «Ալլահ» լամպը, որ կանաչ էր,
Ինչպես աղջամուղջի կանաչը,
Նորից ՄէՅթայիեան մզկիթի երկնքի վրայ վառել...
Ա՛խ, որքան լա՛ւ է լոյսը,
Որքան լա՛ւ է լոյսը։
Ինչպես կուզեի, որ Եղիան մի ձեռնակառք ուղեւար,
Եւ ես նրա վրայի սեխերի ու ձմերուկների մէջ նստած,
Մոհամադիէ հրապարակի շուրջը պտըտէի...
Ա՛խ, որքան լաւ բան է հրապարակի շուրջ պտըտելը,
Որքան լաւ բան է կտուրի վրայ ֆնելը,
Որքան լաւ բան է գբօսայգի գնալը,
Որքան լաւն է Փեփսի Քոլայի համը...
Որքան լաւն է Ֆարդին սինեման,
Եւ ես որքան եմ սիրում լաւ բաները...
Ինչպես է ուզում սիրտս՝
Սեիդ Ջաւադի աղջկայ մազերը հաւել...

Ես ինչո՞ւ եմ այսքան փոքր,
Որ կորչում եմ փողոցներում.

Ինչո՞ւ հայրս, որ իմ չափ փոքր չէ,
Եւ փողոցներում էլ չի կորչում,
Մի բան չի՛ աճում որ այն Մեկը, որին երազիս տեսել եմ,
Նրա գալստեան օրը փութացնի։

Սպանդանոցի թաղի բնակիչները,
Որոնց տան բակի հողը արիւնոտ է,
Եւ իրենց տան աւազանի ջուրն արիւնոտ է,
Որ իրենց կօշիկների տակն եւս արիւնոտ է,
Ինչո՞ւ մի բան չեն անում,
Ինչո՞ւ մի բան չեն անում...

Ես աւլել եմ կտուրի աստիճանները
Եւ լուացել՝ պատուհանի ապակիները։
Ինչո՞ւ հայրս միայն երազում պիտի երազ տեսնի...
Ես աւլել եմ կտուրի աստիճանները
Եւ լուացել՝ պատուհանի ապակիները։
Մեկը գալու է,
Մեկը գալու է,
Մեկը՝ որ ursանց մեզ հետ է, հոգով մեզ հետ է,
խօսքով մեզ հետ է...
Մեկը՝ որի գալուստը չի կարելի արգիլել,
Ձեռքերը շերթայել եւ բանտը նետել։
Մեկը՝ որ Եղիայի հնամեայ ծառերի տակ երեխայ է ծնել
Եւ օրէ օր մեծանում է, աւելի է մեծանում,
Մեկը՝ որ անձրեւից, անձրեւաջրի շրջրջրթոցից,
Ծաղիկների փափուկից

digitised by A.R.A.R.@

Եւ ֆաղաֆի մեծ հրապարակի հրավառութեան գիշերների
երկնքից է գալու,

Նա փռելու է սփռոցը,
Բաժանելու է հացը,
Բաժանելու է Փեփսին,
Բաժանելու է գբօսայգին,
Բաժանելու է կապոյտ հագի օշարակը,
Բաժանելու է դպրոցի արձանագրութեան օրը,
Բաժանելու է հիւանդանոցի հերթի տոմսը,
Բաժանելու է լասթիֆե կօֆիկները,
Բաժանելու է Ֆարդին սիեմման,
Բաժանելու է Սեիդ Ջաւադի աղջկայ ծառերը,
Բաժանելու է, ինչ որ ուռճացած է,
Եւ մեզ բաժին է տալու ամեն ինչից։
Ես երազ եմ տեսել…

Պարսկ. թարգմ. Գ. ԽԱՆԵՆՑ

ՄԻ ՈՒՐԻՇ ԾՆՈՒՆԴ

Իմ ամբողջ էութիւնը պատգամն է մութի,
Որ ինձ ինմս իմ մէջ կրկնելով,—
Յաւիտենական ծլարձակումի ու կեանքի պիտի առաջնորդեմ,
Ես այս պատգամի մէջ ինձ կանչել եմ, կանչել.—
Ես այս պատգամի մէջ ինձ պատւաստել եմ
— Ծառին, ջրին եւ կրակին,

Կեանքը թերեւս,
Մի երկար փողոց է, որից մի կին, զամբիւղը ձեռին՝
ամեն օր անցնում է.

Կեանքը թերեւս,—
Մի պարան է, որից մի մարդ իրեն կախում է ճիւղից,
Կեանքը թերեւս՝ մի մանուկ է, որ վերադառնում է
դպրոցից,

Կեանքը թերեւս սիգարէթի վառելու պահն է՝ երկու մեղկ
գրկախառնումի միջոցին,
Կամ թէ՝ մոլորած ճամբորդի մի հայեացք է,—
Երբ հանում է գլխարկը գլխից,
Եւ մի ուրիշ անցորդի—անմիս «Բարի լոյս» ասում,

Կեանքը թերեւս՝ այն սահմանափակ վայրկեանն է,
Երբ իմ հայեացքը խայխայում է fո բիբերի մէջ,

digitised by A.R.A.R.@

Այնուամենայնիւ կայ մի զգացմունք,
Որ ես լուսնի դատողութեան եւ խաւարի ընկալումին
պիտի խառնեմ։

Սենեակում, որը միայն մենակութեանս տարողութիւնը
ունի,—
Իմ սիրտը,
Որ միայն մի սիրոյ տարողութեան մեծութիւնն ունի,
Իր երջանկութեան հասարակ պատրուակներին է նայում,—
—Ծաղկամանի գեղեցիկ ծաղիկների ոչնչացման,—
Մեր տան ածուի մէջ՝ քո ցանած տունկին,—
Դեղձանիկների երգին,—
Որոնք միայն մի պատուհանի տարածութեամբն են երգում։

—Ա՜խ...
Այս է իմ բաժինը,
Այս է իմ բաժինը,
Իմ բաժինը։—
Մի երկինք կայ, որ վարագոյր կախելով խլում են
ինձանից,
Իմ բաժինը՝ իջնելն է մի լքուած աստիճանից,
Եւ մի բանի ոչնչացման ու օտարութեան զուգորդուելը·
Իմ բաժինն է՝ զբօսանքը տրտում՝ յուշերի պարտիզում,
Եւ մի ձայնի համար նուաղելը՝ երբ ինձ ասում են,—
Ձեռքե՞րդ,—
—«Սիրում եմ»։

Ձեռքերս տնկում եմ պարտիզիս մէջ,—
—Գիտե՞մ, գիտեմ, գիտեմ, որ կը կանանչեմ,

Եւ ծիծեռնակնե՞րը,— ձեռքերիս թանաքոտ փոսիկներում—
Իրենց ձուերը կածեն։

Ականջօղեր կը կախեմ՝ երկու ականջներիս,
Երկու երկուորեակ կարմիր կեռասներից,
Եղունգներիս քրիզանթեմի թերթիկներ կը կպցնեմ։
Մի փողոց կայ՝ որտեղ,—
Իմ վրայ սիրահարուած տղաները—դեռ ես—
—Գզգզուած մազերով, բարակ վզերով եւ նիհար ոտքերով,—
Մտածում են մի աղջկայ անմեղ ժպիտների մասին,
Որին, մի գիշեր քամին իր հետ տարաւ։

Մի փողոց կայ, որ սիրտս—
Նրան գողացել է՝ իմ մանկութեան թաղամասից·

Մէկը միջոցի գծով ճամբորդում է,
Ու այդ մէկը ժամանակի չոր գիծն արգասաւորեց·
Նա գիտակ է իր պատկերին—
Որ վերադառնում է մի հայելու սառած խենոյքից·

Ահա՛, այսպէս է,
Որ մէկը մեռնում է,
Իսկ մի ուրիշը ապրում։
Ոչ մի ձկնորս փոսի մէջ թափուող փոքրիկ առուակից
Մարգարիտ որսալ երբեք չի կարող։
— Ես,
Մի փոքրիկ տխուր յաւերժահարս եմ ճանաչում,

digitised by A.R.A.R.@

Որ բնակւում է ովկիանոսում.
Նրա սիրտը փայտէ արկղի վրայ
Նւագում է՝ դանդաղ, դանդաղ։
—Փոխրիկ, տխուր յաւերժահարս,
Որ գիշերը մի համբոյրով մեռնում,
Եւ աղջամուղջին՝ մի համբոյրով աշխարհ է գալիս։

Պարսկ. թարգմ. Գ. ՄԱՆՆԵՆ

ՊԱՏՈՒՀԱՆ

Մի պատուհան տեսնելու համար,
Մի պատուհան լսելու համար,
Մի պատուհան ջրհորի պես խոր,
Որի վերջաւորութիւնը երկրի ստին է հասնում,
Եւ բացւում է այս կրկնւող կապտագոյն սեռերի վրայ։
Մի պատուհան, որ մենութեան փոխրիկ ձեռքերին,
Գիշերային ևւիրումի գթառատ աստղերի բուրմունքով,
Արբեցում է բերում։
Եւ այդ տեղից հնարաւոր է
Արեւին խորհենիի ծաղիկների պանդխտութեանը հրաւիրել։
—Միայն մի պատուհան բաւական է ինձ համար։

Ես գալիս եմ տիկնիկների աշխարհից,
Արհեստական ծաղիկների ստեղների տակից,
Դէպի պարտէզը մի պատկերազարդ գրքի։
Ջորացած եղանակներից, սիրոյ եւ բարեկամութեան
ամուլ փորձառութիւնից—
Դէպի անմեղութեան փողոցները հողի,
Թոռախատուր դպրոցի սեղանների յետեւից,
Եւ այն վայրկեանից, որ երեխաները կարողացան
Գրատախտակի վրայ «մար» բառը գրել,
Ու վախտուած սառեակներ ծեր ծառի վրայից թռան։

Ես գալիս եմ մսակեր բոյսերի արմատների միջից,
Եւ իմ ուղեղը դեռ

digitised by A.R.A.R.@

Լեցուն է սարսափած թիթեռնիկի թեւերի բախումով,
Որին խաչել են մի տետրակի էջի վրայ
Գնդասեղով։

Երբ իմ հաւատքը արդարութեան թոյլ պարանից էր կախուած,
Եւ ամբողջ քաղաքում
Ճրագներիս սրտերն էին պատառոտում,
Երբ աչքերը՝ իմ մանկական սիրոյ՝
Օրէնքի գորշագոյն թաշկինակով էին կապում,
Եւ ցանկութիւններիս անհանգիստ քունքերից
Արեան շատրուաններ էին դուրս ժայթքում,
Երբ իմ կեանքը այլեւս
Ոչինչ էր, ոչի՛նչ, բացի պատի ժամացոյցի տկտկոցից,
Ես հասկացայ, որ պիտի, պիտի, պիտի
Խենթօրէն սիրեմ։

Մի պատուհան ինձ համար բաւական է,
Մի պատուհան գիտակցութեան վայրկեանի՝
հաճոյքի եւ լռութեան։
Հիմա ընկոյզի ծառը
Այնքան է մեծացել, որ կարող է պատի գաղտնիքը
իմ նորածիլ տերեւներին
Բացատրել։
—Հայելուց հարցրո՛ւ,—
Իր փրկչի անունը...։
—Արդեօք երկիրը որ քո ոտքերի տակ դողում է,
Քեզանից աւելի մենակ չէ՞...։

Մարգարէները աւերածութեան պատգամը
Իրենց հետ մեր դարին բաժին բերին։
Այս իրար յաջորդող պայթիւնները
Եւ թունաւոր ամպերը
Արդեօք, արձագա՞նգն են սրբազան պատգամների։
—Ո՞վ բարեկամ, ո՞վ եղբայր, ո՞վ արիւնակից,
Երբ լուսինին հասար,—
Գրի՛ր ծաղիկների համայնական սպանդի պատմութիւնը։

Երազները ամէն անգամ
Իրենց միամտութեան բարձրութիւնից վայր են ընկնում
եւ մեռնում,

Ես քառատերեւ առուոյտ եմ հոտոտում,
Որը ծլել է հին հասկացողութիւնների գերեզմանի վրայ։
Արդեօք կինը, որ իր սպասումի եւ պարկեշտութեան
պատանի մէջ փտեց, իմ երիտասարդութի՞ւնն էր,
Արդեօք ես կրկին, իմ հետաքրքրութեան աստիճաններից
վեր կը բարձրանա՞մ,
Որպէսզի լաւ Աստծուն, որ քայլում է տանիքիս վրայ,—
անեմ բարեւ։

Ես զգում եմ, որ ժամանակը անցել է,
Ես զգում եմ, որ «վայրկեանը» իմ բաժինն է
պատմութեան թերթերից,
Ես զգում եմ, որ սեղանը կեղծ անջրպետ է իմ ծամերի
եւ այս տխուր օտարականի ձեռքերի մէջ։

digitised by A.R.A.R.@

— Ինձ հետ խօսի՛ր։
— Արդե՞օf մէկը, որ մի կենդանի մարմնի գուրգուրանքն է ես ուիրում,—
կենդանի լինելու զգացումից բացի, ուրիշ ի՞նչ է ես պահանջում։

— Ինձ հետ խօսի՛ր,
Ես ապաւինել եմ պատուհանին,
Ու շփման մէջ մտել արեւի հետ։

Թարգմ. Գ. ԽԱՆԵՆՑ

ՄՈՀԱՄՄԱԴ ԹԱՂԻ ԲԱՀԱՐ

Մալէֆ-օլ-Շօարա Մոհամմադ Թաղի ԲԱՀԱՐԸ ժամանակակից պարսիկ բանաստեղծութեան ամենակարկառուն դէմքերից մէկն է։ Նրա խորը ազդեցութիւնը ներկայ բանաստեղծական հոսանքների եւ հասկացողութիւնների վրայ դժուար է թերագնահատել։ Սահմանադրական յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ, արժէքների վերագնահատման շրջանում, բանաստեղծները նոր ճանապարհներ էին փնտռում արտայայտելու համար ժողովրդի զարթօնքը։ Առաջին «ծայրայեղական» անյաջող փորձերից յետոյ, բանաստեղծութիւնը իր բնական հունի մէջ վերադարձնող եւ միաժամանակ նրան նոր ոգի եւ նոր ուղղութիւն տուողը մեծապէս ԲԱՀԱՐՆ էր, որը 1917 թին հիմնեց «ԴԱՆԷՇՔԱԴԷ» պարբերականը եւ դրա շուրջ համախմբեց նոյն այդ անուամբ ճանաչուած մի խումբ տաղանդաւոր բանաստեղծների։

ԲԱՀԱՐԸ ծնուել է 1886 թին Մաշադում եւ սկսել է գրել դեռեւս 14 տարեկան հասակից։ Նրա հայրը ժամանակի ճանաչուած բանաստեղծներից, Մաշադի Սրբավայրի Մալէֆ-օլ-Շօարան՝ Մոհամմադ Քազեմ Սաբուրին էր, որի տեղը գրաւեց տաղանդաւոր որդին, 20 տարեկան հասակում՝ 1906 թին, երբ սկսուեց Սահմանադրական շարժումը, Բահարը դրա խանդավառ երգչի եւ գրական ռահվիրայի դերը ստանձնեց։ Նա Մաշադում սկսեց «ՆՈՒԲԱՀԱՐ» թերթը հրատարակել, մի քանի անգամ ընդհատուեց խորհրդարանի պատգամաւոր, եւ շուտով իր թերթը փոխադրելով Թեհրան, իր ազդեցիկ մասնակցութիւնը բերեց ор-

digitised by A.R.A.R.@

ւայ գրական եւ հաղաքական շարժումներին։

Ինչպես ին վերը յիշեցինք, 1917 թին նա հիմնեց «ԴԱ-ՆԵՇՔԱԴԷ» պարբերականը եւ համանուն Գրական Միութիւնը, որի շուրջ համախմբեցին օրւայ երիտասարդ եւ խոստումնալից գրականագէտները։ 1928 թից նա սկսեց դասաւանդել Թեհրանի համալսարանում եւ նրա ազդեցութիւնը նոր սերնդի գրական նաւակի եւ հանակացողութիւնների վրայ աւելի եւս տարածւեց եւ խորացաւ։

1946 թին, տառապելով թոքախտից, նա նամբորդեց Եւրոպա եւ ստիպւած եղաւ հաւելի հաղաքական ակտիւ գործունէութիւնից մինչեւ 1950 թւականը, երբ նորից վերադառնալով Իրան, նախագահ ընտրւեց «Իրանի Խաղաղութեան Կողմնակիցների Միութեան»։ Նրա վերջին պոեման էր «ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՈՒ»-ն, որը անկասկած պիտի համարել նրա լաւագոյն ներւածը եւ պարսկերէն լեզւով գրւած գրական գլուխ-գործոցներից մէկը։

Բահարը մահացաւ Թեհրանում, 1951 թին։

Նրա գրական մեծագոյն ծառայութիւններից մէկը բանասիրական լուրջ եւ մեծարժէք ուսումնասիրութիւն՝ «ՊԱՐՍԻԿ ԱՐՁԱԿԱԴՐՈՒԹԵԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»-ն է, որը բանասիրական եւ գրական-պատմագիտական տեսակէտից եզակի մի աշխատաճ է։ Նրա բանաստեղծութիւնների ժողովածուն հրատարակւել է երկու հատորով՝ 1957—58 թւականներին, Թեհրանում։

Բահարի բանաստեղծական ոճը շատ յաճախ խրթին է, շնորհիւ պարսիկ հին բառերի եւ դարձւածքների առատ գործածութեան, որոնց միջոցով նա ցանկանում էր վերակենդանացնել հին պարսկական անխառն ոճը, նրան տալով դասական պարսկերէնի պարզ եւ կուռ կառուցւածքը։ Բայց ձեւի եւ տեխնիկայի տեսակէտից նա հազիւ թէ իր հաւասարը ունենայ ներկայ բանաստեղծների մէջ։ Նրա որոշ պոեմաները, ինչպես օրինակ՝ «Դամաւանդը», «Մակրոկոզմ»ը, «Ժոխխի Երգը» եւ յատկապես «Պատերազմի Բուն»-ն ազատորէն կարելի է համեմատել դասական մեծ բանաստեղծների եւ յատկապես Իրանի 10-րդ դարի վերածնութեան հանճարներ՝ Ֆարդոսիի եւ Մանուչեհրիի լաւագոյն բանաստեղծութիւնների հետ։ Բահարի լաւագոյն գործերը լինելով նրա այդպիսի երկարաշունչ դասիդաները, մենք դժւարանում ենք նրանից տալ այնպիսի թարգմանական հատւածներ, որոնք արդարացնեն նրա արւեստի մեծութիւնը եւ ստիպած ենք բաւականանալ միայն հատւածային հատւածներով։ Այդպիսի մի հատւած է «Պատերազմի Բուն»-ի դասիդայի վերջին մասի հետեւեալ փոքր հատւածը։

Ո՞ւր է օրը լուսաճաճանչ խաղաղութեան,
Ո՞ւր են նրա պարտէզները վարդերով լի,
Ո՞ւր է դարը ազնւազարմ ճշմարտութեան,
Ո՞ւր է արդիօք եղբայրութեան օրն պանծալի,
Ո՞ւր է բոլոր արշալոյսը անմահ կեանքի,
Ո՞ւր է օրը միասնութեան երկնանուէր...
Օրն է հասել որ գլխատենք
Պատերազմի Բուն ահաւոր։

Քաղաքական մեծ դասիդաներից բացի, Բահարը ունի նաեւ բազմաթիւ ճնարաւորական բանաստեղծութիւններ, ինչպիսիքն են։

Ինչո՞ւ մեղադրել չար աչքը մարդկանց
Ու դաժան լեզուն.
Սրտիցդ փախիր, աշխարհի չարիքն
Այնտեղ է թաղուն։

digitised by A.R.A.R.@

Կասկածի փայլուն մի կէտից բացի,
Այս մութ գմբէթին չի փայլում այլ լոյս.
Թերթել եմ մէկ-մէկ էջերը կեանքի,
Սուտ է ամէն ինչ, մի պատրա՛նք անյոյս:

Գարուն եկաւ, գինին բերէք,
Օգտուէք բոյրից, բոցից նրա.
Որքան գինին թասը լցնէք՝
Նոյնքան վիշտը կը փոքրանայ:

Քանի սիրտըս կայ՝ այլ սիրտ չի վառի
Քո սէրը անյագ.
Ինչպէ՞ս ես կարող մզկիթին ձօնել
Տանդ մոմը միակ:

Թէ նայելը մեղք է դէմքիդ գեղանի,
Այս աշխարհում կոյրը միայն մեղք չունի:

Թէ բացել ես դէմքը քո, մեղք դրանով չես գործել,
Անքող դէմքիդ հմայքից մեր աչքերն են խենթացել.
Հոգով եղիր դու մաքուր, պէտք չէ թաքցնել դէմքը քո,
Նոյնն է քողով, թէ անքող՝ մենք որսորդն ենք քո սիրոյ:

ԶՈՐԱՅՐ ՄԻՐԶԱՅԵԱՆ

ԲԱՀԱՐ

ԴԱՄԱՒԱՆԴ

Ո՜վ ճերմակ դեւ, շղթայուած ես, քո կեանքն է բանտ,
Ո՜վ դու գմբէթ ողջ աշխարհի, ո՜վ Դամաւանդ:

Ծածկել ես դու սաղաւարտը քո արծաթէ,
Կապել մէջքիդ զօտին ամուր, կուռ երկաթէ:

Խըրոխտ դէմքդ ամպի քողով շղարշել ես,
Որ մարդկային աչքը բնաւ չտեսնէ քեզ,

Որ ազատես մարդկութեան նենգ ճիրաններից,
Սատանայի կորստաբեր չարիքներից:

Երկրագունդը, որ դառնում է բախտի պէս չար,
Բռնութեամբ ու զրկանքով է դա անդադար:

Դու միշտ լուռ ես, մարած, անշարժ, ո՜վ Դամաւանդ,
Որպէս վկայ հին դարերի, որպէս աւանդ:

Թէ բարձրացնէ երկրագունդը բռունցքը բիրտ,
Այդ բռունցքը հզօր՝ դու ես, ո՜վ Դամաւանդ:

Դու դարերի բռո՛ւնցքն ես կուռ, ո՛յժը վերջին,
Դու ծնուել ես հին դարերի բովի միջին,

Արդ, բռունցքդ ամուր զարկիր մով երկնքին,
Անվերջ ու միշտ դու հարուածիր այս բիրտ կեանքին:

digitised by A.R.A.R.@

Օ՜, ո՛չ, օ՜, ո՛չ, դու չես կեանքի կռուին երբեք,
Ջեմ որակում ես ինձ այդպես, ո՜վ իմ սար սեզ։

Որպեսզի ես ուրի վերը չբորբոքի,
Սպեղանի դու դիր վրան, որ ամոքի։

Ո՜վ ափսարհի աննկուն սիրտ, բլռնկիր արդ,
Մի՛ թագցրու հուրն ու բոցդ, ո՜վ Դամասանդ։

Միշտ վառ մնա՛ ու մի՛ հանգչիր դու էլ երբեք,
Խօսի՛ր, ժպտա՛, ու մի տրտմիր, ո՜վ իմ սար սեզ։

Մի թագցրու սրտիդ հուրը զուր դու այդպես,
Խօսիր լսիր, իմ սիրտն էլ է տե՛ս՝ վշտակեզ։

Օ՜, երդւում եմ, սրտիդ հուրը թէ մոխրացնես,
Մարմինդ ողջ բոց կը դառնայ ու պիտ այրե՛ս։

Երկինքը խենթ բանադրել է կոկորդդ խոր,
Փշրեմ պիտ այն, թէ ինձ անեն կտոր-կտոր։

Սրտիս հուրը ինձ կուղարկեմ, որ հնոցի
Կապանքներդ վառի բնդմիշտ ու հրկիզի։

Այս բոլորը ինձ համար եմ անում ես լոկ,
Որ դու հրնւե՛ս, երգե՛ս, խնդա՛ս, լինես անհո՛գ։

Եւ այն պահին, ես կապանքից երբ ազատես,
Ինչպէս մի դեւ կը մռնչաս, կաղաղակես։

Քո գագաթի ժայռքումների բոցերից ժանտ,
Պիտի հասնեն ես հրերը մինչեւ Ալւանդ։

Երկրաշարժիդ ցնցումները այդ ուժգնօրէն,
Նուր—Քոչուրից մինչ Նահաւանդ պիտի շարժեն։

Ո՜վ դու իմ մայր, գլխիդ ձիւն է արդէն իջել,
Լսի՛ր խօսքը որդուդ դժբախտ ու դեռ ջահել։

Ձերմակ ծաղը ես երեսից դու վայր ձգիր,
Կապոյտ ծաղով դէմդ հպարտ ընդմիշտ ծածկիր։

Ու գալարիր հանդ ածդահայ ու խելագար,
Ու մռնչիր առիւծի պէս, հոգով արդար։

Սեւ լաւայի ու հրերի ես գոլորշուց,
Քո ծուխերից ու ծծումբի գորշ սեւ փոշուց,

Թշւառ մարդկանդ հառաչանքից ծով լալագին,
Փախի՛ր ամպեր ու փաթաթիր ես սեզ գլխին։

Չարդի՛ր դուռը դու դժոխքի, ո՜վ Դամասանդ,
Դուրս շպրտիր անհաւատին՝ թէ՛ նենգ, թէ՛ ժանտ։

Խարդախութեան հիմքը փշրիր դու յաւիտեան,
Ու նոր կեանք բեր յար տառապած այս մարդկութեան։

Թարգմ. ԱՐՍ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՈՒԶԱ ԲԱՐԱՀԷՆԻ

Ծնուել է 1935 թ. Թաւրիզում։ Մինչեւ հիմա հրատարակել է բանաստեղծութիւնների երեք գիրք եւ գրաճնադատական յօդուածների մի ժողովածու։ Թեհրանի համալսարանում դասաւանդում է անգլիական գրականութիւն։ Աշխատակցում է Իրանի գրական բոլոր պարբերականներին։ «Նոր Էջ»ի մտերիմ բարեկամներից է։ Նրա մասին արտայայտել եւ իր գրականութիւնը ներկայացրել ենք նաեւ մեր թիւ 13-ի մէջ։

ՄԻ ՆԱՄԱԿ ԾՈՎԻՑ

Վերցրու թուղթը,
Եթէ կարող ես՝ ծովը,
Եթէ չկարողացար՝ մի ալիք,
Եթէ չկարողացար՝ մի կաթիլ ծովից,—
Դի՛ր ծարի մէջ,
Ու ներիր թղթատարի սնդուկը,—
Որպէսզի մեր այն տան ամրոցում,
Տիկնիկներիդ բոլոր ձեռքերը
Քո նամակը զգուշօրէն բացեն,
Լեցնեն աւազանը—դանդա՜ղ, դանդա՜ղ,
Եւ յետոյ յիշելով ինձ,
Ծովանուշների պէս սկսեն լողանալ։

ԵՐԿՈՒ ՓԱՅԼ ԴԷՊԻ ՔԵԶ

Կայծակի դաշոյնը պարում է պատուհանների մէջ,
Աշխարհի բոլոր կողմերի անձրեւը
Գիշերը մեր վրայ է թափում.
Ես մանուկ եմ ու հրդեհի անտառ է տրիս հորիզոնների վրայ.

Դէպի ինձ մի ֆայլ եմ վերցնում,
—Ո՞վ չպեղուած ամրոց.
Իմ ու ձեր մէջ միայն մի ֆայլ է մնացել,
Իմ երկրորդ ֆայլը ես վերցնում եմ դէպի ձեր հասակի պատը,—

Եւ ապա, յանկարծ,
Ես ձեր, անձրեւի, գիշերւայ եւ կայծակի շուրջ պտտւում եմ։

digitised by A.R.A.R.@

ԱՋՓԵՐԻԴ ԱՆՈՒՆԸ ԾՈՎԻՑ Է

Երբեմն ձեռքերիդ վրայ
Ծովից մի ալիք է բարձրանում
Եւ յեռոյ թափւում։

— Ես մոռացութեան տամ միւսներին,—
Դու ինձ ասա՛
Անունը այն կանանչ թոչունի, որ ծովի վրայ
Թեւահարեց, իր կանանչը ինձ եւ ծովին տւեց,
Ու յեռոյ բարձրացաւ, գնաց.
—Քո աչքերի անունը ի՞նչ է...
Ես միւսներին պիտի մոռացութեան տա՞մ։

ԱՅԳԻՆ ԵՒ ԾՈՎԸ

Տերեւի վրայ
Դու գրեցիր՝ այգի.
Աւձրեւի մի խոշոր կաթիլի վրայ
Ես գրեցի՝ ծո՛վ, ծո՛վ, ծո՛վ,
Եւ այդ ժամանակ մի կին՝
Իր աչքերը
Աղաւնիներին
Նւիրեց...։

ՄԻ ԳԻՇԵՐ ԿԷՍՕՐԵԱՅԻՑ

Երեխաները կմախք են սարքել
Թղթեայ ծաղկից, ապակուց, եղջիւրից եւ սաւիից,
Ու լացելով իրար ասում են՝
—Հեռացրինք հիւանդ ժամանակի մտքից
Տիկնիկների գունաւոր եւ երեւոյին պարը
Մի այնպիսի ժամանակ, երբ գիշերը սկսւում է կէսօրից,
Եւ արեւը այս կիրճի վրայից, որպես սեւ ծաղիկ,
Անցնում է առանց մտածելու լոյսի մասին։
—Մոմ վառենք՛ք,
Որպեսզի տեսնենք մեր դէմքը՝ սարսափի ձեւերի
հայելու մէջ։

Մոմը վառուեց, եղաւ աւելի լոյս եւ տեսան զարմացած,
Որ կմախքը դաւ է լարել ամէնքի համար,
Ամէնքը մէկը զայրոյթի հայելի է միւսի համար,
Եւ ամէնքը մէկը հարցրեց ինքն իրեն՝
—Ձշմարտութիւնը մեզ բոլորիս կմա՞խք է սարքել։

Ինչպէս սեւ ագռաւներ,
Որ գիշերը թոչեն եւ յանկարծ բախւեն մի գերանի
կամ քարի,—
Երեխաները ճչալով ասացին իրար՝
—Հանգցրե՛ք մոմերը,
Մեզանից կմախք են սարքել։

Բնագրից թարգմ. Գ. ԽԱՆՆԵՆՑ

digitised by A.R.A.R.@

ԲԱՂԷՐ ԱԼԻԽԱՆԻ

Ա.ՆՃԱՐԱԿԸ

(Կարճ պատմուածք)

«Գետի ափը գնացի,
Տեսայ բլբուլն էր երգում.
—Ո՞վ խենք բլբուլ, ասացի,—
Արի՛ մեկտեղ գնանք տուն։

Նարգիլէ տամ, որ ծխես,
Մուխը օդի մէջ փչես.
Կապոյտ թաւկիթնակ վերցնենք,
Մէջը լիքը տանձ լեցնենք»։

Հարիւրերորդ անգամն է, որ այդ երեխայի անիծեալ ձայնը լսւում է միջանցքից։

Միշտ միևնոյն միօրինակութիւնը. ո՛չ երգը և ո՛չ էլ բանաստեղծութիւնն է փոխւում։

Միջանցքի խորքից լսւում է նրա ծանօթ ոտքերի ձայնը։ Երբ լսում եմ քոստոցը նրա լայն կօշիկների, որոնք քաշ է տալիս մաշած և ծուռ ու մուռ աղիւսների վրայ, ականջս խլանում է։

Ճիշտ այն վայրկեանին, երբ մօտենում է խուցիս, սկսում է երգել. սակայն չետոյ խուցիս դռան չետևում մի առ ժամանակ լռում է. ապա բանալիի անցքից, դռան ճեղքից և այն ճեղքերից, որոնց մէջ ցեցերը քոյն են դրել,— նայում է սենեակս և աշխատում է տեսնել, թէ ի՞նչ եմ անում։ Ամբողջ կեանքումս այսպիսի չարաճճի և խենթ աղջիկ չեմ տեսել։ Սենեակս լաւ զննելուց չետոյ լռում եմ նրա երկար ծիծաղը, որ նմանում է ճիշտ իր կօշիկների ձայնին. ապա հեռանում և նորից սկսում է երգել՝

«Գետի ափը գնացի,
Տեսայ բլբուլն էր երգում...»։

Ի վերջոյ ի՛նչ գնով էլ որ լինի, պիտի փախչեմ այս բանտից։

Ինձանից առաջ ուրիշներն էլ են այստեղ եղել։ Նրանց բոլորի անունը և յիշատակները գրւած կան պատերի վրայ. այստեղ ապրելն անհնար է. պատի վրայ գրւած անուններն ինձ սարսափեցնում են. նրանցից մի քանիսին ուղղակի տանջամահ են արել. այդ մասին, նրանք, իրենց կեանքի վերջին վայրկեաններին, գրել են պատերի վրայ։

Իմ գլխի վերևը գրել են.— «Եկան, ընկերոջս հարևան սենեակից տարան. մնաք բարեաւ»։

Աստւած գիտէ, թէ ի՞նչ փորձանք են բերել նրանց գլխին, և Աստւած է իմանում, թէ ինձ համար ի՞նչ ծրագիրներ ունեն.— զուցէ որոշել են ինձ ևս սպանել։

Բայց ցանկանում եմ մնալ. սիրտս ուզում է դրսից, ո՛չ այս ձաղերի ետևից արեգակը դիտել։ Ի վերջոյ թերևս կեանքը մի որևէ տեղ պէտք է որ գոյութիւն ունենայ. մի տեղ, որը ես չգիտեմ ուր է... այս մութ ու խաւար սենեակից պիտի փախչել. չպիտի թողնեմ, որ ուրիշների նման ինձ էլ սպանեն. բայց այս վատոգի երեխան... Պիտի այնպէս փախչեմ, որ նա չհասկանայ. նրա լայն կօշիկների ձայնը մաշում է հոգիս. այո՛, նա չպիտի իմանայ, եթէ ո՛չ բոլորին լուր կը տայ։

Երեք օր է, որ այդ միտքը մտել է գլուխս։ Արդեօք կարելի՞ է մի բան անել։ Գուցէ և կարելի լինի փախչել նրանց ձեռքից։

digitised by A.R.A.R.@

Սիրտս այս գաճէ շրջանակի մէջ ճմլուած է, փոթորկուած։ Միայն պիտի գոյչ լինել, որպէսզի այդ երեխան չիմանայ։

Ներանք որ ինձ քանտարկել են այս սենեակի մէջ, լաւ են հասկացել իրենց անելիքը. ներանք ինձ այնքան անճար և խեղճ են համարել, որ նոյնիսկ մի երեխայի հսկիչ են դրել ինձ վրայ։

Երբ դռան ճեղքից դուրսն եմ նայում, ամէն բան լաւ երևում է. ամէն օրւայ պէս լուացարարուհի «Նանէ»ն իմ դիմաց, աւազանի մօտ նստած, ծխախոտ է ծխում. առաւօտն օրական հարիւր անգամ տեսնում եմ նրան։ Նա նստած է այն պղնձէ տաշտի մօտ,— որը մի անգամ հայրս Ջոյանացած, նեռել էր մօրս վրայ, և տաշտի այդ պճած կողմը հիմա ճիշտ իմ դիմացն է։ և ամենայն անտարբերութեամբ լացք է անում։

Նրա երկար քիթը տաւեր է դցել ծնօտի վրայ և նա ինչ որ բան է ծամում։ պէպէններով ծածկւած ձեռքերը, մինչև արմնկները վերև քաշած, ցուցադրում են նրա անմիս և ասկրուտ թևերը։

Նրա դէմքն ու խօսքերը միշտ միատեսակ և միօրինակ են։ ըստ սովորականի, յենւած պատին, քացում է ծխախոտի տուփը և քրտնած «թուխթուն»ը լցնելով ծխախոտի թղթի մէջ, թքով կպցնում է իրար։ Նա շարունակ քիթը վեր է քաշում, գլխի ծածկոցն ուղղում, և սկսում է ինքն իրեն խօսել։ իհարկէ, նրա համար ոչ մի նշանակութիւն չունի, թէ քակում մարդ կայ, կամ չկայ։ նա կրկնում է իր ամենօրեայ խօսքերը։

«Երբ բանտարկեցին Յովսէփին,
Գնեցիկ Զոլէյխան մեռաւ նրա կարօտից։
Ինչո՞ւ խելօք մի բան ասի,
Որ իր արածից փոշմանի»։

Ես իմ երկու երիտասարդ զաւակներին թաղել եմ։ այսինքն ամուսնուս հետ միասին՝ երեքը... ինձ ասում են որ ամուսնուդ գլուխը դու կերար։ Հոգը նրան լուր չտանի։ ո՞վ իր ապագայից լուր ունի։ Հազար անգամ լուսահոգի ամուսնուս ասացի՝ էպ բոզի յետևից մի՛ ընկնի, վերջը նա կը թուխաւորի և կը խեղթացնի քեզ։ բայց չեղաւ ու չեղա՛։ գնաց ու վերջն էլ հէնց այս աշխարհում կրեց իր պատիժը։

Միթէ Աստուած կը ներէ՞ր, որ ես օր ու գիշեր նրա ձեռքում տանջւէի և մարմինս ահ ու սարսափից փշաքաղւէր։ Վերջն էլ, ինչքան որ դեղ ու դարման արինք, չեղաւ ու չեղաւ։ Նա մի այնպիսի դրութեան մէջ ընկաւ, որ հէնց այս դիմացի սենեակում նրան շղթայեցին։

Այն ժամանակւանից որ այն կնոջ կախարդանքը ոչնչացրի, հէնց այն մի քանի հատ «սիրոյ խոտեր»ով, որ «զալաք» Ռօքաքէ խանումը քերել էր ինձ համար, նորից նրա սէրը կարողացայ գրաւել. բայց միթէ այն անբարոյականը ձեռք վերցրե՞ց։ Հէնց որ տեսաւ նա կրկին սկսել է ինձ սիրել, նրան թուխաւորեց։ Աստուած Շաֆա-Դովլէի հոգին լուսաւորի, հէնց սկզբից ասաց, որ առողջանալու չէ։

Մի սէյէդից,— որը շատ շատերին էր բժշկել,— գիր ու զօթք վերցրի։ նրա կեղտորը սրբերի շիրիմների ջրով ողողեցի, բայց դրանցից և ո՛չ մէկը օգուտ չունեցաւ։

Մի անգամ էլ հէնց նոյն այս սենեակից փախաւ։ բայց ո՞ւր կարող էր գնալ։ նորից ինքը վերադարձաւ։ ի վերջոյ իմացել էր՝ ուր էլ որ գնալու լինի, երկինքը հէնց նոյն կապոյտն է։ Նախ որ ոչ ոք մի խենթի իր տանը տեղ չի տայ։ դուցէ գնայ դերեզմանում քնի... Ինչ և է, իմ ճակատագիրն էլ այս էր. այդ անբարոյական կինը նրան թուխաւորելով խենթացրեց։ Է՛յ աշխա՛րհ... հէ՛յ հարամզադա վեր կա՛ց, գնա՛, չուր քեր... վազի՛ր...

Ես գիտէի, որ այս բոլոր խօսքերն ինձ սարսափեցնելու համար էին, որպէսզի ես իմ գլխիս ճարը տեսնէի, գիտէի նաև, որ աղչկան չուր քերելու պատրւակով ուղարկում էր, որպէսզի իմանար թէ ես ի՞նչ եմ անում։ այդ բոլորով հանդերձ, ես այստեղ մնալ չեմ կարող։ սիրտս ալեկոծւում է։

Ի վերջոյ այս բանից դուրս մի ուրիշ աշխարհ էլ գոյութիւն ունի։ մի ուրիշ կեանք կայ... Ձեմ ուզում այս բանտում, որ լուացարարուհի նանէն երեք հոգու թաղել է, այնքան մնամ, մինչև փտեմ և ինձ էլ գերեզմանատուն տանեն։ Ինձանից առաջ շատերն են այստեղ մնացել։ ուզում եմ մի այնպիսի տեղ գնալ, որ արև տեսնեմ, արև՛, արև՛...

Նրանցից մէկը,—որ ինձանից առաջ ապրել էր այստեղ, պա-

digitised by A.R.A.R.@

ու վրայ գրել էր. «Աղամի մի մեղքի համար մենք բոլորս էլ մեղաւոր դարձանք»։

Սկզբներում չէի կարողանում հասկանալ թէ նման մի միտք ինչո՞ւ է ծագել նրա գլխում. նա այդ գրելով ուզել է ի՞նչ ասել։ Բայց կարծես հիմա ես էլ սիրում եմ այդ նախադասութիւնը։

Այն օրւանից, որ փախչելու միտքը ծագեց իմ ուղեղում, մինչև հիմա այդ նախադասութիւնը հարիւր անգամ կարդացել եմ։ Այո՛, հիմա որ որոշել եմ փախչել, չգիտեմ, արդեօք, սրանս քաքախումները և սարսափը ինձ թո՞ղլ են տալու նման մի քայլի դիմելու։ քաջութիւն է հարկաւոր։

Ինքս ինձ ճանաչելու օրւանից, գտել եմ որ ամէն քանից ինձ վախեցրել են. մինչև իսկ իմ սուերից։ Ես յանցանք չեմ ուներ, գուցէ հայրս և պապս էլ հէնց այդպէս են մեծացել. սակայն նրանցից և ո՛չ մէկը յանդգնութիւն չի ունեցել խոստովանելու։

Ահն ու սարսափը նրանց արեան մէջ է եղել և ժառանգաբար փոխանցւել է ինձ. ես շատ լաւ գիտեմ, որ մի առողջ և մարմնեղ սերունդի ծնունդ չեմ։

Ես տակաւին եմ մի շարք պարտութիւնների և մի խումբ պարտւած մարդկանց, ինչպէս և յաւտախութիւնների՝ մի սերունդի, որ մինչև իսկ խաբել է ինքն իրեն և ակնկալել է որ իրեն յաջորդող սերունդները կը սրբագրեն իր սխալները։

Սակայն, հէնց նոյն սերունդն ինձ պատապարում է խաւարից փախչելու յանցանքիս համար, որպէսզի մինչև յաւիտեան ապրեմ այս չորս պատերի մէջ, որդի նման շուրջս պտտւեմ. քայց ես համբերել չեմ կարող. գուցէ այս պատի վրայ մի բան գրեմ. քայց չեմ ուզում, որ այդ գիրն իմ տապանադիրը լինի։ Եւ ի վերջոյ մի որմնադիր անփութօրէն գամով կաւազի՝ Ո՛չ, ես չեմ ուզում ուրիշներին նմանուել. չեմ կարող համաձայնել, որ Աղամի մեղքի պատճառով բոլորս էլ յանցաւոր լինենք Ես, մի գուռնդ մսի պէս, ինձանից անկախ, աշխարհ եմ եկել, և ինչպէս լսել եմ, մաքուր և անմեղ եմ եղել, քայց հա՛յրս է ինձ կեանքի ճանապարհը ցոյց տւել։

Նա է սովորեցրել, թէ ինչպէս պիտի վախենամ, ինչպէս պիտի ատեմ, — այսինքն ինքս ինձ ինչպէս պիտի խաբեմ։ Ո՛չ, պիտի մի ուրիշ բան, մի ուրիշ վայր ևս գոյութիւն ունենայ. մի տեղ,

որ դեռ ինձ անծանօթ է. կեա՛նքն եմ ասում... կեա՛նքը...

Հիմա երեք օր է, որ այս միտքը գլխիս մէջ սկսել է ծըննդեան առնել։ Պիտի փախչեմ, պիտի թոյլ չտամ սպանեն ինձ այն յանցանքի համար, որ չեմ գործել։

Իսկապէս ծիծաղելի է. ուրիշներին սպանեցին. պատճառ չը կայ ինձ էլ սպանեն։ Այս վհուկը 24 ժամ հսկում է ինձ։ Աստւած գիտէ, քանի-քանի մարդ է ոչնչացրել. ինքն ասում է, որ մինչև հիմա երեքին թաղել է։

Ես կարդում եմ այն մարդկանց գրած յիշատակները, որոնք ճիշտ իմ դիմացն են և որոնց գրողները ինձանից առաջ ապրել են այստեղ, և հէնց այստեղից էլ չքացել են։

Այդ անամօթ և չարագի աղջիկը օրական հարիւր անգամ գալիս է և դռան ճեղքից նայում է ինձ. նա իր կարկատած և հնամաշ կօշիկները միջանցքի թաց աղիւսների վրայ քստացնելով անցնում է. նրա կօշիկների ձայնը կարծես խարտեցում է իմ հոգին։

Հէնց այսօր կրկին երեսը դրած դռան կողքի ճեղքերին, հեռւում էր ինձ։ Աչքերը կատւի աչքերի նման փայլում էին մթութեան մէջ։

Ծղճացի նրան. մտածեցի որ նրա դրութիւնը ճիշտ իմ դրութեան նման է։ Ասացի.—

«Իմ փոքրիկ քանտապահ, դու էլ...»։

Նա թոյլ չտւեց խօսքս վերջանար, սկսեց ծիծաղել և ասաց.—

«Ես՞նք... ես՞նք... ես՞նք...»։

Եւ կրկին ամբողջ միջանցքը լցւեց նրա քարքարաձայն ծիծաղով։

Սակայն, ես գիտեմ, թէ ի՛նչ պիտի անել. մեծ անամօթութիւն է, որ մէկին չորս պատերի մէջ քանտարկեն և անւանեն խենթ։

Ուրիշներին էլ, այո՛, նրանց որոնք ինձանից առաջ այստեղ էին պահել, հէնց նոյն այս քառերով ոչնչացրին։ Մեզ մի այնպիսի յանցանքի համար են սպանում, որ իրականութեան մէջ մենք չենք գործել. իմ յանցանքն այն է, որ գիշերից զզւում եմ. երբ օրը մթնում է, սիրտս ուզում է մի ուրիշ տեղ ապրել, ուր էլ որ լինի, միևնոյնն է ինձ համար. գոնէ մի այնպիսի տեղ լինի, որ ինձ պէս մէկ ուրիշն էլ մուրը չախորժի։

digitised by A.R.A.R.@

Ա՜ա ուղղակի անամօթութիւն է…

Այսօր, մի քանի ժամ առաջ, բժիշկը կրկին եկել էր. նոյն բժիշկը, նոյն խօսքերը, նոյն ծիծաղելի պայուսակով, նոյն բաներով, մինչև իսկ նոյն ատելութեամբ, որ փոխադարձաբար ունենք իրար հանդէպ։ Իրօք անամօթութիւն է, որ դռան յետևում կանգնած խօսեն, և իմ չգործած մեղքի համար ինձ դատապարտեն մահուան։

Նա, որ հոգսերի հայելի է, և չգիտեմ ի՞նչ անուն տամ նըրան, բժշկից հարցնում էր.—

«Բժիշկ, յայտնի՞ է, թէ նա վերջապէս երբ է մեռնելու»։

Այն կնոջն եմ ասում, այն կնոջը, որ ինձ հետ նոյնիսկ հեռու ազգականութիւն ունի։

Բժիշկը պատասխանեց.

«Աստուած գիտէ… Գուցէ և առողջանայ»։

Բոլորը լռեցին. կարծես այդ լուրը նրանց ծանր թւաց. նըրանք ծրագրել են, որ ինձ հէնց այս բանտում սպանեն. իսկ խեղճ բժիշկին էլ իրենց ձեռքի խաղալիք են դարձրել։

Բժիշկն ուրախ է, որ մի հիւանդ ունի. մի այնպիսի հիւանդ, որ պիտի դառան պէս գէրացնեն, մինչև ուրիշները մորթեն, այո՛, ճիշտ մի դառան պէս։

Սենեակիս ջախջախուած դուռը բացուեց. մի անգոյն և պղտոր լոյս, առիթից օգտուելով, վազեց սենեակս։ Ես գիտեմ, որ հիմա ինչ պիտի անեմ։ Բժշկի բոլոր խօսքերն արդէն անգիր եմ արել. գիտեմ թէ նա ի՛նչ է հարցնելու սովորականի պէս։

«Լաւ, առողջութիւնդ ինչպէ՞ս է. հիմա սկսում ենք. ձեռքդ տուր, նայիր աչքերիս. լա՛ւ, հիմա մէկից մինչև 100 հակառակ կըղմից կը հաշուենք. ուշադիր եղիր, լաւ ժամանց է, այդպէս չէ՞…

Եւ ես ստիպուած եմ ասելու.

«Այո՛, պարոն բժիշկ, լաւ ժամանց է»։

Յետոյ բժիշկը իր թշուառ դէմքով և համաձայն այն երդումի, որ կատարել է բժշկութեան աւարտական վկայականն ստանալու ժամանակ, խոստացել է, որ հիւանդների հանդէպ լինի բարեացակամ և հեզահամբոյր, սառը ժպիտը դէմքին ասում է.

«Փա՜ռք Աստուծոյ, առողջութիւնդ շատ լաւ է. ախորժակդ ինչպէ՞ս է…»։

«Լա՛ւ»։

Ինքս ինձ ասում եմ.— «Ո՜վ յիմար մարդուկ, իմ ո՛չ մի բանը լաւ չէ. սխտորի ջուր խմելն այլևս ախորժակ չի պահանջում»։

Բժիշկն իր դէմքը դէպի այն կինը դարձնելով, ասում է.

«Տիկի՛ն, եթէ ախորժակ չունեցաւ, գրեխ արէք»։

Այլևս համբերութիւնս վերջացած բղաւում եմ.

«Ապո՛ւշ, սրանք բոլորը քեզ ձեռք են առել. եթէ ես դատապարտուած եմ մահուան, այլևս գրեխը ի՞նչ օգուտ կարող է ունենալ…»։

Բոլորը սարսափահար իրենց մի կողմ քաշելով, զզւանքով նայում են ինձ, մինչև իսկ բժիշկը։

Միայն այն կինը, աչքերը իմ վրայ ոլորելով, ասում է բժշկին.

«Պարոն բժիշկ, յոյս ունեմ ներողամիտ կը լինէք. Աստուած գիտէ, որ ես ամաչում եմ ձեզանից։ Աստուած քեզ հոգէառի բաժին անէ. մեր պատիւը բժշկի մօտ տարար»։

Խեղճ բժիշկը դուրս գնալու ժամանակ իր գլուխն է ցոյց տալիս.— այսինքն ցնդել է, և աւելացնում է.

«Կարևոր չէ, տիկի՛ն, առողջութիւնն աւելի լաւ է. յոյս ունեմ, որ է՛լ աւելի լաւ կը լինի…»։

Իսկ ես բղաւում եմ.

«Պարոն բժի՜շկ, պարոն բժի՜շկ»։

Երբ նա իր դէմքն ինձ է դարձնում, բութ մատս եմ նրան ցոյց տալիս…

Աներես աղջիկը այս տեսարանի վրայ սրտի խորքից սկսում է բարձր ծիծաղել է ասում է.

«Խե՜նթ… խե՜նթ… խե՜նթ…»։

Ուրախ է, որ ուրիշներն ինձ ծաղրում են, իսկ ես էլ իմ բութ մատն եմ բժշկին ցոյց տուել։

Դուռը բոլորի յետևից փակւում է. դեռ լւացարար նանէն նստած իմ դիմաց, ինչ որ բան է ծամծմում,

Վերջապէս այսօր իմ բանտից փախայ. ինչ լա՜ւ է խաբեցի բոլորին։ Ինձ թոյլատրել էին, որպէսզի դրսում մաքուր օդ շնչեմ. նրանք ինձ անճարակ կարծելով, ոչ ոք ինձ չէր հսկում։ Այն անե-

digitised by A.R.A.R.@

ըես աղջիկն էլ գնացել էր նանէի համար ջուր բերելու։ Ես իմ բոլոր անճարակութեամբ դուրս գնացի։ Առաջ քայլերս շատ դանդաղ էին. յետոյ սկսեցի աւելի արագացնել և մինչև փողոցի ծայրը վազեցի։ Երբ հասայ փողոցի ծայրին՝ նպարավաճառի խանութի մօտ, սկսեցի վախենալ։ Վախենայ, որ նրանք նպարավաճառի խանութի մօտ հաւաքւած լինէին և տեսնելով ինձ, հասկանային որ փախուստ կան եմ. վախենում էի, որ ինձ կրկին վերադարձնեն։

Միրզա Մահմուդ նպարավաճառի խանութի մօտ երկու հոգի կանգնած էին. այնտեղ էր նոյն թաղամասի «խաւնդը», որի մի ձեռքում պանրի մանրուք կար, իսկ միւս ձեռքի ցուցամատով քիթն էր փորում և հէնց այդ վիճակով էլ պատասխանում էր նրանց ուած հարցուփորձերին։

Երկար ժամանակ կանգ առայ մի սլէնի յետև, որը գոնդուում էր մի տան առջև. նորէն հէնց առաջուայ ահ ու սարսափը հաղմակել էր ինձ. բայց վերջապէս զգացի, որ մինչև իսկ փողոցի փըտած պատերը քաց աչքերով ինձ են նայում և ծաղրում են ինձ։

Ամենից շատ ախուռնդից էի խորշում. ես նրա համար հաճելի և դուրեկան մէկը չէի։ Եթէ նրա աչքովն ընկնէի, անմիջապէս կը հասկանար, որ փախել եմ. իսկ նա էլ նրանցից չէր, որ կարողանար լռել։

Ցիշում եմ, մի անգամ եկել էր «գիր» անելու, խրատում էր ինձ. քանիս նրան ցոյց տալ, ինչպէս միւսին արի. իմ այդ վերաբերմունքից աղօթքի խօսքերը չորացան բերնի մէջ. մի վայրկեան ապշած հայեացքով նայեց, ապա գնալուց ինձ ասաց. «Մարդո՛ւկ, Աստուած քեզ ապաքինի»։ Իսկ ես կրկին իմ քունքը նրանց ցոյց տալի։ Հիմա վախենում եմ. եթէ ինձ տեսնի, իմ այդ վարմունքի համար պիտի վրէժ լուծի...

Վերջապէս փողոցի պատերը սկսեցին այնքան ծիծաղել իմ անճարակութեան վրայ, որ ես համարձակ դուրս կախեցի, ճամբայ ընկայ և առանց ուշադրութիւն դարձնելու, անցայ նրա առջևից։

Բայց մի վայրկեան, երբ աչքս մեխուեց Միրզա-Մահմուդ նպարավաճառի աչքին, անմիջապէս երեսս շուռ տալի. եռեիցս մէկը ձայն տալով կանչեց.

«Հէ՛յ, կանգնի՛ր, տեսնեմ. կանգնիր, տեսնեմ»։

Երկու ոտք ունէի, երկուսն էլ փոխ առի և փախայ, թագնուելով ծուռ ու մուռ փողոցներում։

Փողոցի ծայրին,— ուր գերեզմանատունն էր գտնւում և ինձ ծանօթ էր մանկութիւնից,— մի կառք էր կանգնած. գուցէ և ինձ էր սպասում. ոչ ոք ինձ չէր ասել, բայց ես գիտէի, որ նրանք էլ նման մի կառքով էին փախչել։

Մի չորացած ձի, չորս հատ ձուձև անիւներ, մի պարուրած մարդ,— որի գլխարկը ջնջուած էր, այդ բոլորը միասին կառքն էին ներկայացնում։

Առաջ գնացի, նստեցի. ե՛չ մի հարցէ չտուի, նա էլ ոչինչ չը հարցրեց. նոյնիսկ դէմքը չդարձրեց որ տեսնի՝ ով եմ. կարծես ինքը գիտէր, որ ինձ որտեղ պիտի տանի...

Մէկը, որի անունը չեմ յիշում հիմա, ինձ ասել էր, որ պիտի այս կառքով փախչել։

Համատարած մութը, որը ամէն տեղ նոյնիսկ մինչև երկնքի տուրը, Աստծուն էլ ծածկել էր, սարսափահար, կէս քուն, կէս արթուն, ցատկեցի և կոյրի պէս խարխափելով, ինձ հասցրի խախուտ դռան մօտ։ Մինարէի վերևում, այն մինարէի, որը գտնւում է այս թշուառ, կիսախարխուլ սրբավայրի մօտ, որտեղից մէկը «ազանն» էր կանչում։ Այս անապատի մէջ, բացի գերեզմանից ուրիշ ոչինչ չկար. սակայն այդ գերեզմանատանն էլ մեռել չկար։ Գուցէ միայն ես և այն մէկը, այդ լքւած անապատի միակ մեռելներն էինք. կարծես այն միւսն էլ յոյսը կտրած, աշխատում էր իր կեանքի վերջին օրերի համար մի քան անել...

(«Չկայ Աստծուց աւելի բարձր քան ինքը Աստւած»)...

Չգիտեմ ինչո՞ւ և ո՞ւմ համար էր աղօթում։ Առաւօտ չէր, իսկ դիշե՞ր էր... անտեղեակ էի ամէն ինչից։

Երբ աղօթքը վերջացաւ, իջաւ ցած, կարծես ինձ լաւ ճանաչում էր. ձայն տալով ասաց.

«Դո՞ւ էլ նրանցից ես, դու հէնց այն ես, որ փախել ես քանտից. քանտի՞ց ես փախել... Այնտեղն ես փնտռում, մթութի՞ւնի՞ց ես վախենում, այո՞... ուզում ես մթութի՞ւնի՞ց փախչել...»։

Ասացի.

«Այո՛, ճանապարհը գիտե՞ս... դու գիտե՞ս այս մթութեան

digitised by A.R.A.R.@

միջից ինչպէ՞ս պիտի փախչել…»։

Սկսեց ծիծաղել. նրա ծիծաղն այնքան ուժեղ էր, որ արքատեղի առաստաղի մոզայիքներից երկուսն ընկան ցած, ուղիղ սուրբի գերեզմանի վրայ. ամբողջ մարմնով դող անցաւ և փշաքաղուեցի։

Աններելի մեղք է, որ մարդ մի անմեղ սուրբի գերեզմանի վրայ ծիծաղի։ Եթէ Աստուած այս մութի մէջ գոյութիւն ունենար, անկասկած նրա մեղքերը չէր ներելու։ Սակայն այդ առողը նման բաների ուշադրութիւն դարձնողը չէր։

Երբ ծիծաղը վերջացաւ, ասաց.

«Ջուր ես սպասում, թող ու փախչիր… Ահա, նայիր քո դիմացը երեք ճանապարհ կայ. նրանցից մէկն ընտրիր և գնա՛, ի վերջոյ տեղ կը հասնես։

Ասացի.

«Դրանցից ո՞ր մէկը պիտի ընտրեմ. դու քո Աստուածն ասա՛, ո՞ր ճանապարհով պիտի գնամ. ես ուզում եմ մի այնպիսի տեղ գընալ, որ մի լոյս, ճառագայթ, մի բան գոնէ այնտեղ գոյութիւն ունենայ. այլևս այս մութի մէջ ապրել չեմ կարող։

Դարձեալ սկսեց ծիծաղել. նորից մարմինս սկսեց փշաքաղուել։

Յիշեցի, որ մանկութիւնից մեզ արգիլել էին որևէ սրբավայրում ծիծաղել, քանի որ այդ մեղք էր համարւում։

Բայց բնաւ նրա փոյթը չէր. և նոյնիսկ չէր վախենում. նա գլուխը բարձրացնելով ասաց.

«Դու այնքան անճարակ ես, որ ինչ ճանապարհով էլ որ գընալու լինես, քեզ համար ո՛չ մի տարբերութիւն չի կարող լինել։ Դէ՛, շտապի՛ր, գնա՛, այստեղն էլ մի՛ ապականիր»։

Ճանապարհի խորքում, որտեղից եկել էի, նոյն կառքը դեռ կանգնած էր. կրկին կառքը նստեցի, և հէնց այն ճանապարհով որ եկել էի, վերադարձայ. միայն այս անգամ կառապանը դէմքն ինձ դարձնելով ասաց.

«Գիտէի, որ պիտի վերադառնաս. քեզանից առաջ էլ ուրիշները եկան ու վերադարձան»։

Նոյն փողոցներից,— այն փողոցներից որոնց պատերը ինձ ծաղրում էին,— գլուխս կախ, վերադարձայ նախկին տեղս։ Երեկոյ էր, երբ այնտեղ հասայ։ Ուղղակի գնացի խուցս. լուացարարուհի նա-

նէն դեռ զբաղուած էր իր գործերով. մինչև իսկ գլուխն էլ չբարձրացրեց, որ ինձ տեսնի։ Խուցիս մի անկիւնում կծկուեցի. քիչ յետոյ բակից լսեցի լուացարարուհի նանէի ձայնը, որը արձագանգում էր բակում.—

«Ինչո՞ւ խելօքը մի բան անի,
Որ իր առածից փոշմանի»։

«Հա՜, հա՜… ես իմ երկու երիտասարդ զաւակներին թաղել եմ. խեղճ ամուսինս էլ մի անգամ փախաւ, բայց ուր որ գնաց, տեսաւ…»։

Արդէն միւս խօսքերն անգիր գիտէի. բոլոր յիշատակները իրենց տեղումն էին. խորհում էի իմ անճարակութեան մասին, երբ միջանցքի խորքից աղջկայ բարձր ծիծաղը ականջիս դիպաւ և իր ամենօրեայ երգը սկսեց երգել.

«Գետի ափը գնացի,
Տեսայ բլբուլն էր երգում.
—Ո՞վ խենթ բլբուլ, ասացի,
Արի՛, մեկտեղ գնանք տուն…»։

Խուցիս առաջ որ հասաւ, քա՜հ, քա՜հ ծիծաղելով ասաց.—

«Անճարա՜կ… խե՜նթ…»։

Ամէն տեղ խաւար, էր, բայց ես գիտէի, որ ինձ անծանօթ մի տեղում գոյութիւն ունի լոյս, մի տեղ, որ ես մինչև այժմ չեմ ճանաչել…

Բնագրից թարգմանեց՝ ԱՐԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Գ. ՄԱՍ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1.— Ֆ. ԳԱՐՅԻԱ ԼՈՐԿԱ
2.— ՓՈԼ ԷԼՈՒԱՐ
3.— ԺԻԼ ՍԻՒՓԵՐՒԻԷՅ
4.— ԺԱԳ ՓՐԵՎԵՐ
5.— ԺՈՐԺ ՇԵՀԱԴԷ
6.— Վ. ՖՐԱՆԳԵԱՆ.— Գեղարուեստը եւ արդի գիտութիւնը

digitised by A.R.A.R.@

ՖՐԵԴԵՐԻԽ ԳԱՐՑԻԱ ԼՈՐԿԱ

Լորկային գնդակահարեցին, երբ նա միայն 37 տարեկան էր, 37 տարիներ, որոնք անցան անհաւատալի արագութեամբ, կատաղի սլացքի մէջ. դա մի կեանք էր խիտ, ճոխ, լարուած:

Դեռ չի անցել մի քանի տասնամեակ նրա մահուանից եւ նա արդէն մի առասպել է, Սպանիայի կուռքը:

Ծնուել է 1899 թուին Գրենադայի մօտ. նա կաղում էր Բայրոնի պէս. 15 տարեկանից սկսում է գրել, Սովորում է կիթառ, դաշնամուր, սկսում է նկարել, գծագրել եւ երգել:

Հանդիպում է ժամանակի մեծ բանաստեղծ Ֆերնանդօ դը Լոս Ռիոսին, որի մտերմութիւնը հասունութեան է հասցնում նրա բնածին տաղանդը: 1919-ին Լոս Ռիոսի խորհրդով թողնում է Գրենադան եւ ուղեւորւում Մադրիդ:

Առաջին համաշխարհային պատերազմը վերջանում է, Գեղարուեստագէտների, մտաւորականների մէջ ծնւում է մի տենդ, որը տեւում է տասը տարի, եւ իր նանապարհին այրում է ամեն ինչ, ոչնչացնում է բոլոր աւանդութիւնները, փշրում է բոլոր հնամեայ կուռքերը, Բայց Լորկան սառն է դէպի սիւռեալիզմը, դադայիզմը. նա ներծնչման տարբեր մի աղբիւր է փնտռում, նա փնտռում է իր ներշնչումը Սպանիայի ժողովրդի եւ յատկապէս Սպանիայի XVII-րդ դարի աւանդական ներքոդութեան մէջ:

digitised by A.R.A.R.@

Բայց դա նրան չի արգիլում դառնալ մոդեռնիստների ոգին, շարժիչ ոյժը, կենտրոնը՝ 1928-ին, երբ նա թողնում է Մադրիդը, արդեն Սպանիայի ամենալարգված բանաստեղծն է, ամենափայլունը, ամենատաղանդաւորը։

Նրա բանաստեղծութիւնների առաջին հատորը «Փիրփ պօէմներ», հրատարակւում է 1921 թին։

1923-ին բեմադրում է մարիոնէտների մի ներկայացում, որի երգը ձայնագրում է Մանուել դը Ֆալլան։ 1927-ին բեմադրում է իր «Մարիանա Պինեդա» դրաման, որի բեմավարդարը Սալվադոր Դալին էր։ Նրա մտերիմներն էին սպանացի մեծ բանաստեղծներ Փեդրօ Սալինասը, Ռաֆայել Ալբերտին, Jorge Guillen-ը։

Մկրտած տաղանդների այս աւազանում, Լորկան 1929-ին մեկնում է Սպանիայից Նիւ-Եորք։ Այդ ժամանակ հրատարակութեան համար պատրաստ էին արդէն բանաստեղծութիւնների երկու ժողովածուներ՝ «Խորը երգի պօէմաները» եւ «Առաջին երգերը»։ Մինչ այդ նա հրատարակել էր «Երգեր» եւ «Գնչուական ռոմանսներ» հատորները, որոնք շատ մեծ յաջողութիւն էին գտել Սպանիայում։

Նա մի կողմից դարձել էր Գրենադայի բանաստեղծների առաջնորդը եւ միւս կողմից՝ աւանդական ներթողութեան դեմ պայքարող ներթողների ճնշադատութեան առարկան։

Այդ հոչակի մէջ մի բան նրան անհանգստացնում էր։ Նրան մեկուսացնում են գնչուական բանաստեղծի խայտաբղետ դերի մէջ։ Անդալուզեան շաղակրատ երգիչը փակւում է իմն իր մէջ, լռում է եւ որոշում նոր արկած փնտռել Նոր Աշխարհում։

Նիւ-Եորքում նա ծանր օրեր է ապրում։ Բնկւում է նրա հոգին, կոտրւում իրականութեան գաղելի հայելու մէջ։

«Ես այժմ գրում եմ բանաստեղծութիւն, որը կարող է նրակներ բացել։ մի բանաստեղծութիւն, որը փախչում է իրականութիւնից, որի մէջ ապրում է միայն իմ սէրը դէպի իրերը, միայն իմ սէրը՝ ի տես իրերի։ Սէրս մահւան հանդէպ, իմ գուրգուրանքը՝ մահւան ծիծաղելիութեան հանդէպ»։

Այդ շրջանում է, որ նա գրում է «Բանաստեղծը Նիւ-Եորքում» շարքը։

1930-ին նա Ամերիկայից փախչում է Կուբա։ Նոյն տարին վերադառնում է հայրենիք։ Նրան մնացել էր միայն վեց տարի ապրել։ Այդ տարիները նա ամբողջովին նւիրում է թատրոնին։ Նա ե՛ւ գրող էր, ե՛ւ բեմադրիչ, ե՛ւ յաճախ դերասան։

Այդ տարիներին նա ներկայացնում է ժողովրդին սպանական թատրոնի մեծագոյն ներթողների թատերգութիւնները, որոնց նա համադրում է իր սեփական երկերը՝ «Արեան հարսանիքը», «Երմա» եւ «Դոնա Ռոչիդա»։

Լորկայի հոչակը հասնում է Հարաւային Ամերիկա։ 1933-ին նա հրաւիրւում է Բուէնոս-Այրես, ներկայացնելու համար իր թատերախաղերը։

1936-ին Լորկան հրատարակում է իր գլուխ գործոցը՝ «Մահերգ Իգնացիո Սանխեզ Մեխասի համար»։ Մի ամսում նա աւարտում է «Բերնարդոյի տունը» թատերգութիւնը։ այդ ժամանակ է, որ Մադրիդում լուր է տարածւում Ֆրանկիստների ապըստամբութեան մասին։ Լորկան մերժում է բոլոր առաջարկները՝ թողնել Սպանիան եւ հեռանալ Նիւ-Եորք կամ Մեխիկո, ընդհակառակն, նա մեկնում է Գրենադա, իր հայրենի քաղաքը, մօտ գտնելու իր ժողովրդին։

Յուլիսեան մի օր, Ֆրանկօի զինւորները նրան գտնում են իր ընկերներից մեկի տանը եւ յաջորդ օրը գնդակահարում։

Նա 37 տարեկան էր։

Ասում են, որ Լորկային սխալմամբ են սպանել։ Ընդան տարբեր մի անձ են կարծել, կամ նման մի թիւրիմացութիւն։ Բայց տարիներն անցել են այդ թիւրիմացութիւնից եւ այսօր մենք զգում ենք, որ այդ «սխալը» նախատագրական էր։

Երբեմ չի կարելի խօսել մի «սխալի» մասին, երբ զինւորները սպանում են բանաստեղծին։

Դա նախատագրական անհրաժեշտութիւն է։

Գեղեցկութեան մահն է աւինի հարւածի տակ։

ՁՕՐԱՅՐ ՄԻՐՋԱՅԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ֆ. Գ. ԼՈՐԿԱ

ՀՐԱԺԵՇՏ

Եթէ ես մեռնեմ,
Բաց թող պատուհանս։

Երեխան ճարիճչ է ուտում։
(Իմ պատուհանից ես տեսնում եմ նրան)։

Հնձուորը զարկում է գերանդին հասկերին։
(Իմ պատուհանից ես լսում եմ նրան)։

Երբ ես մեռնեմ,
Բաց թող պատուհանս։

ԱՄԷՆ ՄԻ ԵՐԳ...

Ամեն մի երգ
Լռութիւնն է
Սիրոյ։

Ամեն մի աստղ
Լռութիւնն է
Ժամանակի,
Հանգոյցը ժամանակի։

Եւ ամեն մի հառաչ
Լռութիւնն է
Ձիչի։

ՋՈՐԱՅԱԾ ՆԱՐՆՋԵՆՈՒ ԵՐԳԸ

Փայտահա՜տ,
Կացնի՛ր իմ ստւերը։
Փրկիր տանջանքից՝
Ինձ անմիրգ տեսնելու։

Ինչո՞ւ ես ծնւեցի հայելիների մէջ։
Լոյսը պտտում է իմ շուրջ։
Եւ գիշերն ինձ պատկերում է
Իր աստղերի մէջ։

Ես ուզում եմ ապրել առանց ինձ տեսնելու։
Եւ կնրազեմ,
Որ իմ տերևներն ու իմ թռչուններն են
Անգղներն ու մրջիւններ։

Փայտահա՜տ,
Կացնի՛ր իմ ստւերը։
Փրկիր տանջանքից, ինձ անմիրգ տեսնելու։

digitised by A.R.A.R.@

ՄԱՆԿԱՄԱՐԴ ԱՂՋԿԱՅ ԱԿԱՆՋԻՆ...

Ես ոչինչ ուզեցի,
Ոչինչ ուզեցի քեզ ասել։

Ես տեսայ քո աչքերում
Երկու դալար ծառ
Հովից խենթացած
Գալարւում էին։
Ծիծաղ եւ ոսկի։

Ես ոչինչ ուզեցի,
Ոչինչ ուզեցի քեզ ասել։

ՆՇԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Զգեցէք այս օղակը
Ջրի մէջ։

(Ըստւերը սեղմել է մատները
Մէջքիս)։

Զգեցէք այս օղակը։
Ես հարիւր տարեկան եմ։
Լռութի՛ւն։

Ոչինչ չհարցնէք ինձնից։

Զգեցէք այս օղակը
Ջրի մէջ։

ՎԱՐԴԻ ԿԱՍԻԴԱՆ

Վարդը
Չէր փնտռում արշալոյսը.
Յաւերժացած՝ մի ճիւղի վրայ
Նա փնտռում էր ուրիշ մի բան,

Վարդը
Չէր փնտռում ո՛չ իմաստ, ո՛չ ստւեր.
Մսի եւ երազի եզրին կանգնած՝
Նա փնտռում էր ուրիշ մի բան։

Վարդը
Չէր փնտռում վարդին։
Երկնքի մէջ անշարժացած՝
Նա փնտռում էր ուրիշ մի բան։

«Թամարիտի Դիւան»ից

digitised by A.R.A.R.@

ԳԱԶԵԼ — ՄԻ ՍԻՐՈՑ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Մի՛ տար ինձնից fո յիւտակը։
Թող նրան իմ սրտի մէջ մենակ,

Մի դող ներմակ կեռասենու
Նահատակման մէջ Յունուարի։

Ինձ բաժանում է մեռածներից
Մի պատ՝ տձեւ երազների։

Ես ցաւն եմ բերել բարմ տուժանների՝
Գաճով ծեփած մի սրտի համար։

Ամբողջ գիշերը, պարտէզում,
Իմ աչքերը — երկու մեծ շներ։

Ամբողջ գիշերը փնտռում եմ ես
Պտուղը թոյնի։

Քամին, որ երբեմն նմանում է
Վախի կակաչին,

Հիւանդ մի կակաչ է
Լուսաբացի մէջ ձմեռային։

Ինձ բաժանում է մեռածներից
Մի պատ՝ տձեւ երազների։

Մշուշը ծածկում է,—լռութեան մէջ,—
Գորշ հովիտը fո մարմնի։

Մեր հանդիպման կամարի տակ
Անում է այժմ մոլախինդը։

Բայց թող ինձ fո յիւտակը,
Թող նրան իմ սրտի մէջ մենակ։

(«Թամարիի Դիւան»ից)
Թարգմ. Զ. ՄԻՐԶԱՅԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՓՈԼ ԷԼՈՒԱՐ

(1895—1952)

Ֆրանսական նորագոյն բանաստեղծներից մեկը, Ծնել է 1895-ին եւ մեռել 1952-ին, Նա իր առաջին երախայրիքը հրատարակում է 1917-ին, ապա Առագոնի, Բռետոնի եւ Սուփօի հետ միասին հիմնադրում է գրական եւ արուեստի յեղափոխական մի նոր շարժումի՝ Դադայիզմին, Բայց Էլուարը, միեւնոյն ժամանակ, մնում է իսկական գերիրապաշտ բանաստեղծը, Ֆրանսիայի գրաւումի տարիներին նա չի հեռանում երկրից, միանում է ամենակատաղի հակաֆաշիստ կազմակերպութեան եւ ընդյատակեայ աշխատանքներ է տանում, Այդ տարիներին, 1942-ին, հրատարակւում է նրա «Բանաստեղծութիւն եւ ճշմարտութիւն» ժողովածուն, իսկ 1944-ին՝ «Գերմանական ժամադրավայրը» գիրքը, Այս երկու գործերը մեծ զարկ են տալիս ազատագրական շարժմանը եւ ստեղծում են ոգեւորութեան ու զոհաբերութեան մթնոլորտ, միաժամանակ ապահովելով հեղինակի համար՝ համաշխարհային հռչակ, Փոլ Էլուարը Ֆրանսիայի մեծագոյն գերիրապաշտ բանաստեղծներից մեկն է համարւում, Նրա մասին արտայայտւել են նաեւ «Նոր-Էջ»ի թիւ 13-ի մէջ,

Տալիս ենք ճմուռներ, որ ժամանակին թարգմանել է Զ, Միրզայեանը,

ՓՈԼ ԷԼՈՒԱՐ

ԲԱՐԻ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Սա մարդկանց ջերմ օրենքն է.
Ողկոյզից պատրաստել գինի,
Ածուխից՝ կրակ,
Համբոյրներից՝ մարդ,

Սա մարդկանց դաժան օրենքն է.
Մնալ անաղարտ,
Հակառակ պատերազմների եւ թշուառութեան,
Հակառակ մահուան,

Սա խաղցր օրենքն է մարդկանց.
Փոխել ջուրը լոյսի,
Երազը՝ իրականութեան
Եւ թշնամիներին՝ եղբայրների,

Մի օրենք, հին եւ նոր,
Որը խլւում է դէպի կատարելութիւն,
Երեխայի սրտի խորհից՝
Մինչեւ գիտակցութիւնը գերազանց,

digitised by A.R.A.R.@

ՄԻ ՆՈՐ ԳԻՇԵՐԻՆ.Յ ԱՌԹԻՒ

Կին—որի հետ ես ապրել եմ,
Կին—որի հետ ես ապրում եմ,
Կին—որի հետ ես կապրեմ.
Դու միշտ նոյնն ես,

Քեզ պէտք է կարմիր մի թիկնոց,
Կարմիր ձեռնոցներ, մի կարմիր դիմակ
Եւ սեւ գուլպաներ։

Պատրաստեցէք, չմեղադրեցէք,
Քեզ բոլորովին մերկ ցոյց տալու համար.
Մահուր մերկութեամբ,—օ՜հ, պատոյն պատուհասած
Սիրեցէք....

Օ՜հ, իմ սիրս։

* * *

Զգացումներ ակներեւ,
Հպանցիկ մօտեցում,
Հեւք շոյանքներու։

Անհոգ եւ անփոյթ
Քո աչքերը յանձնւում են իրենց տեսիլին
Եւ ինչի նայես՝ դա նայում է քեզ։

Բիւրեղեայ վստահութիւն
Երկու հայելիների միջեւ,
Մութի մէջ ո՛ր աչքերը անյայտանում են,
Զուգելու համար ցանկութեան արթնացմանն։

Չի կարելի ինձ աւելի լաւ ճանաչել
Քան դու— որ ճանաչում ես ինձ։

Քո աչքերը, որոնց մէջ ճնած ենք,
Մենք, միասին,
Իմ մարդկային լոյսերին ուիրել են
Աւելի պայծառ մի ճակատագիր,
Քան ափսոսի գիշերներին։

digitised by A.R.A.R.@

Քո աչքերը, որոնց մեջ ես ճամբորդում եմ,
Տվել են ոլորտներին իմ ճամբաների
Ոչ հողեղեն մի իմաստ,

Քո աչքերը, որոնք արտացոլում են անդունդներն անսահման,
Այլևս այն չեն — ինչ կարծում էին լինել,

Չի կարելի ես ասելի լաւ ճանաչել
Քան ես — որ ճանաչում եմ ես,

Բնագր. թարգմ. Զ. ՄԻՐԶԱՅԵԱՆ

ԺԻԼ ՍԻՓԵՐԻԷՅ

(1884—1960)

Ծնուել է Ուրուգուայի Մոնթեվիդեո քաղաքում, 1884-ին, Ֆրանսացի ծնողներից: Նրա բանաստեղծութիւնների առաջին գիրքը հրատարակել է 1900 թին: Ֆրանսական ակադեմիան նրան շնորհել է 1955 թի գրականութեան մեծ մրցանակը:

Նրա բանաստեղծութիւնները կրում են ներշնչումի թարմութիւն, արտայայտչական պարզութիւն եւ մերկութիւն:

Ժ. Սիւփերվիէյի բանաստեղծութիւնների վերջին ժողովածուն է «ՈՂԲԵՐԴԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ», որ լոյս է տեսել 1959-ին: Նա համարւում է Ֆրանսիայի տարաբախտիկ լաւագոյն բանաստեղծը: Նրա մասին արտայայտել եւ գրականութիւնը ներկայացրել ենք նաեւ «Նոր Էջ»ի թիւ 13-ի մէջ:

digitised by A.R.A.R.@

ԺԻԼ ՍԻՖԵՐԻԷՅ

ՈՎԿԻԱՆՈՍԻ ԱՅՍ ՄԱՄՆԻԿԸ

Ովկիանոսի մասնիկը այս, որ եկել է հեռուներից,
Բայց դա ն՛ս եմ, ն՛ս եմ — մասնիկն այս ախարհի,
Թափառական այս նաւակը, լեցուն հարբած նաւազներով,
Բայց դա ես եմ, որ սահում եմ ծովի վրայ,
Այս մոռացած կապոյտի մէջ, կրճերի մէջ այս մտերիմ
Եւ երկնքի մերկ եզերքի այս մրմունջում։

Բայց դա ես եմ, բայց դա ես եմ, սկիզբս այստեղ,
Այս լուռթեան նիչը խեղդուկ սրտում բանտած,
Այս թեւերով թեւակոտոր մի թռչունի,
Որ ճախրում է իր թեւերի վերջին ուժով...
Բայց դա ես եմ, բայց դա ես եմ, իմ մարդկային
թեւաոութեամբ։

Օ՜հ, հաջութիւն... մի պահ միայն. պիտի ապրել
Երկնքի տակ, որն իր այգն է մոռացել։

Բնագրից թարգմ. Զ. ՄԻՐԶԱՅԵԱՆԻ

Բռնել,— բռնել երեկոն, խնձորը եւ արձաթը,
Բռնել,— սւերը, պատը եւ փողոցի ցեխը։

Բռնել ոտը, ճնած կնոջ լանջը,
Եւ յետոյ բացել ձեռքերը։ — Որհա՞ն արձակած թռչուններ,—

Որհա՞ն կորած թռչուններ, որ դառնում են՝ փողոց,
Սւեր, պատ, երեկոյ, խնձոր եւ արձաթ։

Բնագրից թարգմ. Գ. ԽԱՆՆԵՆՑ

digitised by A.R.A.R.@

Տեսանելի էր ճաւահետքը եւ ոչ մակոյկը,
Քանզի երջանկութիւնը անցել էր այդ տեղից,

Նրանք նայել էին խորքը իրենց աչքերի,—
Տեսնելով միայն իրենց սպասւած բացասականը,

Որտեղ վազում էին եղնիկները իրենց ամբողջ
համարձակութեամբ,
Եւ որսորդները առանց արցունքի էին մտնում այդ երկիրը,

Մի ցուրտ գիւերւայ յաջորդ օրը,
Յայտնի դարձաւ, որ այնտեղ կան սիրով խեղդւածներ,
Բայց ինչ որ զգացինք նրանց տառապանքից,
Մեզ համոզեց այլեւս չհաւատալ սիրոյ,

Մի փոքրիկ ծուխ նրանց առագաստից երեւում է օդի մէջ,
Միանգամայն մենակ, համու համահաւոյի բերանն
ընկած,—

Հեռու մակոյկից եւ յորձանքից՝ ջուած թիակներից,

Բնագր. թարգմ. Գ. ԽԱՆՆԵՆՑ

ԺԱԳ ՓՐԵՎԵՐ

Ֆրանսիական նորագոյն բանաստեղծական գրականութեան ներկայացուցիչներից մէկը, Ծնւել է 1900 թ., Ազդւել է գերիրապաշտներից, Նա յայտնի դարձաւ Ֆրանսիայի ազատագրումից յետոյ, երբ 1946-ին իր բանաստեղծութիւնների «Խօսքերը» ժողովածուն հրապարակ իջաւ, Այս գիրքը հսկայական սպառում ունեցաւ ժողովրդական լայն զանգւածների մէջ, Բանաստեղծը իր այդ գործով հանդէս է գալիս,— առանց մոռանալու գերիրապաշտներից ստացած դասերը,— պարզ, զգայուն եւ անակնկալ պատկերների գիւտարարի դերում, Երբեմն դաժանօրէն անարխիս է, Հետագայում նա հրատարակում է՝ «Տնարան», եւ «Անձրեւը եւ լաւ եղանակը» երթւածների գրքերը, նոյնպիսի յաջողութեամբ, Ժագ Փրեվերը ներկայի ամենահռչակաւոր բանաստեղծներից է,

«Խօսքեր» հատորից թարգմանում ենք մի քանի կտորներ,

ԱՇՈՒՆԸ

Ձին տապալւում է մայթի մէջ,
Տերեւները թափւում են նրա վրայ,—
Մրսում է մեր սէրը,
Արեւի հետ միասին,

digitised by A.R.A.R.@

—Ոգիներ եւ հրաշքներ,
Հողմեր եւ երթեւեկներ ծովի.—
Հեռուում արդէն ծովը նահանջել է,
—Իսկ դո՞ւ.
Քամին մեղմօրէն քեզ շոյում է ջրիմուռի պէս,
Եւ դու խիճէ մահիճի վրայ շարժւում ես
երազելով։

—Ոգիներ եւ հրաշքներ,
Հողմեր եւ երթեւեկներ ծովի.—
Հեռուում արդէն ծովը նահանջել է,
Բայց քո կիսաբաց աչքերում
Երկու փոքրիկ ալիքներ են մնացել։

—Ոգիներ եւ հրաշքներ,
Հողմեր եւ երթեւեկներ ծովի,—
Երկու փոքրիկ ալիքներ ինձ խեղդելու համար։

—Այստեղ ի՞նչ ես անում փոքրիկ աղջիկ,
Այդ նոր քաղած ծաղիկներով,
—Այստեղ ի՞նչ ես անում, ջահել աղջիկ,
Այդ ծաղիկներով, այդ չորացած ծաղիկներով։
--Այստեղ, ի՞նչ ես անում, գեղեցիկ կին,
Այդ թառամող ծաղիկներով։
—Այստեղ, ի՞նչ ես անում, պառաւ կին,
Այդ մեռնող ծաղիկներով...
— Ես սպասում եմ յաղթողին։

digitised by A.R.A.R.@

Երեք լուցկի, մէկ առ մէկ, վառում եմ գիշերով.
—Առաջինը՝ fո դեմքը ամբողջովին տեսնելու,
Երկրորդը՝ տեսնելու համար աչքերդ,
Վերջինը՝ տեսնելու fո բերանը,
Եւ մթութիւնը խոր, ինձ յիշեցնում է այդ բոլորը,—
Քեզ սեղմելով բազուկներիս մէջ։

ՔԵԶ ՀԱՄԱՐ ԻՄ ՍԷՐ

Գնացի թոչնավաճառների տուկան,
Ես թոչուններ գնեցի
Քեզ համար,
Իմ սեր։
Գնացի ծաղկավաճառների տուկան,
Եւ ծաղիկներ գնեցի
Քեզ համար,
Իմ սեր։
Գնացի փականագործների տուկան,
Եւ շղթաներ գնեցի,—
Ծանր շղթաներ,—
Քեզ համար,
Իմ սեր։
Եւ յետոյ, ես գնացի գերեվաճառների տուկան,
Եւ ինձ փնտռեցի,
Բայց չգտայ ինձ,—
—Իմ սե՛ր...։

Նա լեցրեց սուրճը
Բաժակի մէջ,
Աւելացրեց կաթը
Սուրճի բաժակին։
Շաբարեց
Կաթով սուրճը,
Փոքրիկ գդալով
Խառնեց,
Խմեց կաթով սուրճը,
Բաժակը դրեց տեղը,
Առանց ինձ հետ խօսելու։
Վառեց մի ծխախոտ,
Ծուխով
Օղակներ գծեց,
Մոխիրը թափեց
Մոխրամանի մէջ,
Առանց հետս խօսելու,
Առանց ինձ նայելու,
Վեր կացաւ,
Դրեց
Գլխարկը գլխին,
Վերցրեց աւձրեւաւոցը,
—Որովհետեւ աւձրեւում էր,—

digitised by A.R.A.R.@

Եւ գնաց
Անձրեւի տակ,
Առանց խօսքի,
Առանց ինձ նայելու։
Եւ ես գլուխս,—
Ձեռքերիս մէջ առած,—
—Լացեցի։

Բնագրից՝ թարգմ. Գ. ԽԱՆԵՆՑ

ԺՈՐԺ ՇԵՀԱԴԷ

Ժորժ Շեհադէն մէկն է Ֆրանսական նորագոյն բանաստեղծութեան ներկայացուցիչներից։ Ծնւել է Եգիպտոս, 1910 թւին։ Թարգմանաբար ներկայացնում ենք մի քանի քերթւածներ։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

I

Առաջին ոչխարները մայում են նահնուսում,
Մենք քնել էինք մի ծառի տակ.
Լուսինը բարձրանում էր կայծակնային կենդանու պէս,
Քամու տերեւները այրւում էին.
Եւ հանգիստ զգալու համար մենք երազում էինք,
Իւրաքանչիւր ճանապարհի պտոյտին քնած էր մի մարդ.
Ճակատը բորբոքւած հրաշալիքներով,
Ուսը առանց երկնային սւսերի,—
Իսկ մենք բահերի պէս ընկած էինք քնածների կողքին,—
Որպէս դաշտամիջեան աղմուկներ։

digitised by A.R.A.R.@

II

Նրանք, որ հեռանում են՝ մոռանալու համար իրենց տունը,
Եւ ընտանեկան պատը ստերի մէջ թողնում,—
Ես յայտարարում եմ— Դատ եւ ժանգոտ ջրեր,
Եւ մեծ կտակարանը քարերի։

Նրանք չեն ճանաչելու
Բացի երկաթից եւ յատմիկների տեսակներից
Այն երջանիկ Գիշերը, որ տեղափոխելու են աշխարհները։
Տարիքը հանգստութեան աւիշի է նմանում.
Նրանց համար չկայ ոչ մի երգ,
Բացի ծովի այրող ցօղից,
Բացի աղբիւրների յաւիտենական տխրութիւնից։

III

Կան անհայրենիք պարտէզներ,
Որ մենակ են ջրի հետ,
Աղաւնիները անցնում են նրանց վրայով եւ բոյն չունեն.
Բայց լուսինը բիւրեղն է երջանկութեան,
Եւ երեխան վերյիշում է մի լուսաւոր ժխոր։

IV

Մի սարի վրայ,
Ուր հօտերը խօսում են ցրտի հետ,
Ինչպէս Աստուած է ցանկացել,
Ուր արեւը իր հարազատութեան մէջ է,
Քաղցրութեամբ լեցուն կալեր կան՝
Այն մարդու համար, որ խլում է իր խաղաղութեան
միջով,

Ես երազում եմ՝ այն երկրի մասին, ուր ձանձրոյթը
Մի ֆիչ օդի է նման,
Ուր ուռը ընկնում է հորի մէջ.
Ես երազում եմ եւ ես այստեղ եմ,—
Մանուշակների եւ այս կնոջ պատին չնւած,
Որի խախտած ծունկը՝ յաւիտենական տանջանք է։

digitised by A.R.A.R.@

V

Աստղը կը վերադառնայ աւերուած պարտէզի վրայ,
Ծնունդների ջրի կաթիլների նման.
Այն թռչունները կը բացուեն, որոնք չունեն համբերութիւն,
Եւ կը լինի առաջին գիշերւայ ցնորքը։

—Ո՜հ, իմ սիրելի, ես մի մարգագետնի մէջ եմ՝
Իմ տարիքի ծառերի հետ,—
Ուր եղնիկները անցնում են ճնած կոպերի նման,
Եւ այս գիշեր, մահը աղջիկն է անծկալի ժամանակի։

ԵԹԷ ՀԱՆԴԻՊԵՍ ՎԱՅՐԵՆԻ ԱՂԱՒՆՈՒ

Սափորի երգը կը նմանի դամբարանի ջրի.
Մենք սիրել ենք պայմարը առանց բարեկամի.
Լուսնի սառնութեան ներքոյ ածիլը
Ցօղի մէջ է ու չի նկատւում,
Երբ յուզում են երազները մեր հագուստի վրայ.
Անտառների մեծ հրդեհները մեր բարեկամները
կը դառնան,
Մեր իշխանութեան երջանկութեան համար։

Բնագր. թարգմ. Գ. ԽԱՆԵՆՑ

digitised by A.R.A.R.@

ՏԵՍԱԿԱՆ

ՎԱՐԴԳԷՍ ՖՐԱՆԳԵԱՆ

ԳԵՂԱՐԻԵՍՏԸ ԵՒ ԱՐԴԻ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Այս յօդուածը կազմելու համար օգտւել եմ Ֆրանսացի Ֆիզիկոս Ժան Շառոնի աշխատութիւններից։ Շառոնը այն սակաւաթիւ գիտնականներից է, որը փորձել է Տիեզերքը ղեկավարող միաւորական մի տեսութիւն տալ։

Ներկայումս մարդկային միտքն էնթարկւում է մի հոլովոյթի, որի նմանը հազիւ մի քանի անգամ է տեղի ունեցել պատմութեան ընթացքում։ Այդ հոլովոյթի պատճառով մարդը փորձում է շօշափել մի շարք խնդիրներ, որոնք նախկինում անլուծելի էին։

Մարդը բոլոր ժամանակներում, նկատի ունենալով իր մասնակցութիւնը դրսի աշխարհի հետ, երկու հիմնական խնդիրներով է մտահոգւել։ Նախ և առաջ նա պիտի ամենալաւ ձևով յարմարւէր այս աշխարհին և դրա համար՝ նրան ճանաչէր։ Եւ երկրորդ, նա պիտի որոշէր իր դիրքը ամբողջ Տիեզերքի մէջ։

Աշխարհը ճանաչելու համար մարդը դիմում է գիտութեան, մասնաւորապէս ֆիզիկային։ Ֆիզիկան գիտութիւն այն մասնաճիւղն է, որն աշխատում է նկարագրել բնական երևոյթները։ Սկզբում ֆիզիկան այդ երևոյթները նկարագրելու համար օգտւում էր մեր սովորական լեզուից, բայց շուտով նտ նկատեց, որ այդ լեզուն մեծապէս կախում ունի մարդու զգայարաններից և նրա հոգեկան ընդունակութիւններից և ահա այդ պատճառով էլ նոյն իմաստը չունի ամէն մի անհատի համար։ Ուստի ֆիզիկան ընտրեց գիտական լեզուն՝ մաթեմատիկան, քանի որ բնութեան օրէնքների համար գիտութեան ուաջ բացատրութիւնները նոյն իմաստն ունեն բոլորի համար։

Մաթեմատիկայի շնորհիւ ֆիզիկան մի առարկայական (օբեկտիւ) գիտութիւն դարձաւ։ Ուստի և կարելի է ասել, որ ֆիզիկան այնքան աւելի ճշմարիտ է՝ ինչքան նա աւելի է մօտեցել մաթեմատիկային։ Բայց չպիտի մոռանանք, որ գիտական լեզուն ինչքան էլ ճշմարիտ լինի, մեզ տալիս է միայն բնութեան «քարտէզ»ը և այդ «քարտէզ»ը չպիտի շփոթել այն «հողամաս»ի հետ (այսինքն իսկական բնութեան), որը նա նկարագրում է։

Արդ, մարդկութեան մի մեծ մասը զգացել է, որ ինքը մի տարբեր ձևով էլ մասնակցութիւն է բերում արտաքին աշխարհին, որը աւելի հիմնական է և խորը։ Նա իր մէջ ընդգրկում է Տիեզերքը իր ամբողջութեամբ։ Այս դէպքում մարդն օգտւում է իր ներըմբռնումից (intuition) Տիեզերքը բացատրելու նպատակով և դրա համար դիմում է կրօնին և կամ գեղարւեստին։

Ի՞նչ է Տիեզերքը։ Մենք այդ չգիտենք, կամ աւելի ճիշտ, եթէ մենք գիտենայինք, այդ հնարաւոր կը լինէր միայն մի ներքին ներըմբռնման միջոցով, որը սահմանակից է մի միստիք զգացումի և այդ զգացումը հնարաւոր չէ արտայայտել և ոչ մի լեզուով, թէկուզ դա լինի մաթեմատիկան։

Այստեղ մենք նկատի պիտի ունենանք այն տարբերութիւնը, որ Հ. Բերգսոնը դրել է բանականութեան և ներըմբռնման մէջ։

«Երկու խորապէս տարբեր միջոց կայ մի առարկայ ճանաչելու համար։ Առաջինը ամփիրիք (փորձական) ձևն է։ Այդ դէպքում մենք մի առարկայ ճանաչելու համար պտտում ենք նրա շուրջը։ Երկրորդ ձևը (ներըմբռնումը) այն է, որ այդ առարկան ճանաչելու համար մենք թափանցենք նրա մէջ։ Առաջին ձևը կախում ունի այն տեսանկիւնից, թէ որտեղ ենք տեղաւորւում և ինչ խորհրդանշերով (սիմբոլ) ենք արտայայտւում։ Երկրորդ ձևը ոչ մի տեսանկիւն չուն-

digitised by A.R.A.R.@

նի և ոչ մի խորհրդանիշի վրայ չի հիմնւում։ Առաջին ձևի համար մենք կասենք որ նա կանգ է առնում յարաբերականի վրայ, իսկ երկրորդ ձևով (ի հարկէ այն դէպքում որ հնարաւոր լինի) նա հաստատում է բացարձակին»։

Գիտութիւնը, ըստ իր էութեան, քանի որ արտայայտւում է օբեկտիւ լեզուով, առաջին ձևի նկարագրութիւնն է։ Նա պատում է իրերի շուրջ, նա կարատում է իրերը, մասերի է բաժանում, և այն առաւելութիւնը որ ձեռք է բերում օբեկտիւ հողի վրայ, համընթաց է այն անպատեհութեան, որ նա ստում է միշտ մի «քարտէս», որը սիմբոլիք ձևով միայն որոշ երևոյթներ է արտայայտում և այդ երևոյթները «հողամաս»ի (քննութեան) համեմատութեամբ միշտ անկատար են։

Այստեղ հարց է ծագում, թէ արդեօք աւելի ճիշտ չէ՞, Տիեզերքը աւելի խորը նկարագրելու համար գեղարուեստին դիմել... Արդեօք գեղարուեստը Բերգսոնի այն երկրորդ ձևը չէ՞, որի միջոցով «հնարաւոր է փոխադրւել մի առարկայի մէջ, միանալով նրան, ինչ որ միակն է, այսինքն անարտայայտելին»։

Ի հարկէ, գեղարուեստական գործը, նոյնպէս պէտք է վերջում մի որևէ լեզուով արտայայտւի, բայց քանի որ այս լեզուն աւելի շուտ ներշնչում է, քան նկարագրում, արդեօք դա մի փորձ չէ՞ գեղարուեստագէտի կողմից՝ յուսարձակելու համար իր Տիեզերքի աւսիլքը մի ուրիշ անհատի «էնթագիտակցական» քնագաւառները։

Այսպիսով գեղարուեստական գործը մի ինտելեկտուալ (մասին) ուղղակի «հաղորդում» է գեղարուեստագէտի և ուրիշ անհատների միջև։

Սակայն մենք շատ հակիրճ կերպով կը տանք այն նկարագրութիւնը, որ արդի գիտութիւնը մեզ տալիս է Տիեզերքի մասին, մասնաւորապէս փորձելով երևան հանել այն միաւորութիւնը, որ իշխում է Տիեզերքի մէջ՝ անհունապէս փոքրից՝ անհունապէս մեծը։ Յետոյ, որպէսզի կարողանանք որոշել թէ ինչ չափով գեղարուեստական նկարագրութիւնը դիմելով Տիեզերքի աւելի թագնւած սահմաններին, գալիս է ամբողջացնելու գիտական նկարագրութիւնը, մենք կը փորձենք վերլուծել ինչ որ մեր ներկայ իմացումը տալիս է մարդկային փոխիմքի (հոգեկանի) մասին։

* * *

Մարդը կարող է իր հետախուզութիւնները դէպի երկու անդունդը ուղղել.—Մէկը անհունապէս փոքրը (այսինքն՝ Նիւթը) և միւսը անհունապէս մեծը (այսինքն՝ Տիեզերքը)։ Այն ինչ առաջին հերթին աչքի է զարնում, երբ մենք նկատի ենք ունենում այդ երկու անհունները, որոշ հիմնական յատկութիւններ են, որոնք վերագտնւում են թէ՛ անհունապէս մեծի և՛ է անհունապէս փոքրի մէջ։ Բոլոր առարկաները, որ գտնւում են նրանց մէջ, իրարից շատ հեռու են, մեծ գատարկութիւններով իրարից մեկուսացած, և վերջապէս այդ առարկաները մեծ արագութեամբ շարունակական շարժման մէջ են։

Սկսենք անհունապէս փոքրից, այսինքն Նիւթից։ Բոլոր նիւթերը կազմւած են հիւլէներից (ատոմ), իսկ հիւլէները, իրենց հերթին, կազմւած են տարրական մասնիկներից, որոնք Նիւթի «աղիւսներն» են համարւում։ Այս մասնիկները բազմաթիւ են, ամենակարևորներից նուտրոնը, փրոթոնը, մեզոնը և այլն, որոնք իրար մօտ սեղմւած՝ կազմում են հիւլէի միջուկը, իսկ ելեքտրոնները մոլորակների նման պտտում են այդ միջուկի շուրջը։

Այս մասնիկների քանակը որոշում է մի նիւթի էութիւնը։ օրինակ՝ ջրածին գազի հիւլէները մի փրոթոնից և մի ելեքտրոնից են կազմւած, իսկ ուրանիումի հիւլէն 92 փրոթոն, 143 նոթրոն և 92 ելեքտրոն ունի։ Նիւթի այս աղիւսները համարեա նոյն ծաւալն ունեն և նրանց չափը մեկ միլիմետրի հազար միլիարդերորդն է։

Արդի գիտութիւնը մեզ ստիպողեցնում է, որ վերոյիշեալ մասնիկները դժւար է անշրջապատի մէջ մեկուսացած վիճակով որպէս «գընդիկներ» նկատի ունենալ, քանի որ նրանք երբեմն մասնիկների և երբեմն էլ ալիքների ձևով են մեզ ներկայանում։

Բայց խնդիրն աւելի պարզ կացուցանելու համար մենք նրանց մասնիկային ձևի տակ կընդունենք։

Մենք խոյն անդրադառնում ենք, որ անհունապէս փոքրի (Նիւթի) տարրական մասնիկների չափերը շատ հեռու են մեր այն հասկացողութիւններից, որ մենք ունենք ստիպողական առարկաների մասին։

digitised by A.R.A.R.@

Ի՞նչպէս կարելի է պատկերացնել մէկ միլիմետրի հազար միլիարդերորդ մասը… Դրա համար մենք պիտի մասշտաբի փոփոխութիւն անենք և տեսնենք, թէ իրերն ինչպէ՞ս են ներկայանում։ Երեւակայենք, որ Նիւթը կազմող տարրական մասնիկներն այնքան մեծանան, որ մի սանթիմետր տրամագիծ ունեցող գնդիկի փոխւեն։ Այս նոր մասշտաբով ամենափոքր վիրուսը, որին միայն ելեքթրոնիք միքրոսկոպով կարելի է տեսնել, Լուսնի չափ կը դառնայ։ Այս մասնիկների փոքրութիւնը աւելի լաւ զգալու համար, ասենք, որ եթէ նրանց չափը մէկ սանթիմետր լինի, մարդը 15 միլիարդ կիլոմետր բարձրութիւն կունենայ, սոփինքն մօտ 100 անգամ այն տարածութիւնը, որ մեզ բաժանում է Արևից և 50 հազար անգամ Երկրի և Լուսնի տարածութիւնը։

Նիւթը կազմող այս մասնիկները չափազանց բազմաթիւ են։ Ամենափոքր փոշին, որ լողում է օդի մէջ, ասենք մէկ գրամի մէկ միլիոներորդ մասը, իր մէջ պարունակում է աւելի քան միլիարդ-միլիարդ այդպիսի մասնիկներ։ Այս մեծ թիւը նկատի ունենալով, թւում է, թէ այդ փոքրիկ փոշու մէջ Նիւթի տարրական մասնիկները իրար վրայ «խճողուած» են, բայց իրականում այդպէս չէ, քանի որ նրանց ծաւալը չափազանց փոքր է, իսկ նրանց իրարից բաժանող տարածութիւնը անհամեմատ մեծ է. այնպէս որ, եթէ մարդ կարողանար «տեսնել» այդ փոշու ներքին կազմութիւնը, միայն դատարկութիւն կը նկատէր։

Աւելի լաւ հասկանալու համար, նորից օգտագործենք մեր մեծացրած մասշտաբը, ուր այդ մասնիկները որպէս մէկ սանթիմետրանոց գնդիկներ են ներկայանում։ Այս մասշտաբով մեր միկրոսկոպիկ փոշին շուրջ մէկ միլիոն քիլոմետր տրամագիծ կունենայ, և այս հսկայ տարածքի մէջ մենք ի՞նչ կը տեսնենք։ Նախ՝ հիւլէների միջուկները։ Նրանք կը ներկայանան նռան հատիկների պէս փոքրիկ խմբերով։ Այս միջուկները բաղկացած կը լինեն (ըստ տարբեր հիւլէների) տարբեր քանակի նոտրոնից, փրոտոնից և մեզոնից։

Այս միջուկն առաւելագոյնը տասն սանթիմետր ծաւալ կունենայ։ Ամէն մի այսպիսի խմբի (այսինքն հիւլէի միջուկի) շուրջ մօտաւորապէս մէկ քիլոմետր հեռաւորութեան վրայ կը պտտեն ելեքթրոնները (նրանց թիւը ըստ տարբեր նիւթի՝ տարբեր է և ինչ-

պէս ասացինք ջրածնի ամէն մի հիւլէն մէկ ելեքտրոն, իսկ ուրանիումի հիւլէն՝ 92 ելեքտրոն ունի)։

Ահա մեր հիւլէի պատկերը մեր այս մեծացրած մասշտաբով։ Հիմա եթէ մենք ուզենանք այդ մեծացրած փոշու մէջ մի ուրիշ հիւլէ գտնել, նա տեղաւորուած կը լինի այս ատոմից մէկ քիլոմետր հեռաւորութեան վրայ։ Ուրեմն, այսպիսով, այն բանը, որ այդ փոշու մէջ ամենից աւելի աչքի է զարնում, դատարկութիւնն է։

Այս դատարկութիւնն է՛լ աւելի աչքի կը խփի, եթէ նկատի ունենանք, որ ատոմները (հիւլէ) անշարժ չեն, այլ մէկը միւսի հանդէպ արագ շարժում ունեն, մի շարժում, որը համեմատական է այն տաքութեանը, որի մէջ նիւթը գտնւում է։ Ենթադրենք, որ այդ փոշին սովորական տաքութեան մէջ է գտնւում. այդ դէպքում մեր հիւլէները իրականում (այսինքն ոչ թէ մեծացրած մասշտաբով) ժամական մի քանի հազար քիլոմետր արագութիւն կունենան։

Մեծ հեռաւորութիւններ, մեծ միջոցներ, մեծ թւեր, հսկայ դատարկութիւններ, սրընթաց արագութիւններ, «մոլորակային» դասաւորում, ահաւասիկ այս ձևի տակ է պատկերանում անհունապէս փոքրը։

Անհունապէս մեծը, այսինքն Տիեզերքն էլ համարեա նոյն ձևով է ներկայանում։ Կարծես բնութիւնը, ինչ վերաբերում է հիմնական կազմութեան, ուզել է «խնայողական» լինել և այս նմանութիւնն է առաջացել։ Մենք նորից կանդրադառնանք բնութեան միջոցների այս «խնայողութեան» վրայ։

Հակիրճ կերպով վերյիշենք անհունապէս մեծի կազմութիւնը, որի մասին ամէն մարդ քիչ թէ շատ տեղեակ է։

Մեր երկիրը մէկն է ինն մոլորակներից, որոնք պտտում են Արևի շուրջ։ Ամէն մի մոլորակ կարող է ունենալ մէկ կամ մի քանի արբանեակ։ Աստղերը համանման են մեր Արևին և Տիեզերքի մէջ նրանք խմբերով են գտնւում։ Աստղերի խումբը կոչւում է գալախսի։ Ամէն մի գալաքսիի մէջ շուրջ մէկ միլիարդ աստղեր են գտնւում։ Գալաքսիները կարող են գնդաձև, ձուաձև, տափաձև և այլ տեսք ունենալ։ Տափաձև գալաքսիները կարող են ունենալ որոշ երկարումներ, որոնց «թեւեր» են կոչւում։ Այս տիպին է պատկանում մեր գալաքսին՝ Ծիրկաթինը, և մեր Արևը գտնւում է այդ գալաքսիի

digitised by A.R.A.R.@

թևերից մէկի վրայ։

Սպիտակաւուն հակայ գօտին, որ ամառային դիշերներում տեսնում ենք երկնքում, Միլկաթինի միլիարդաւոր աստղերի լոյսից է առաջ գալիս։ Մեր հեռադիտակները (թելեսքոպ) մեզ հնարաւորութիւն են տալիս՝ երկնքի մէջ, հակայ թուով, նման գալաքսիներ տեսնել։ Փալմար լեռան թելեսքոպը (որի միջոցով հնարաւոր է ուսումնասիրել Տիեզերքի այնքան հեռաւ մասերը, որտեղից լոյսը մեզ հասնելու համար աւելի քան մէկ միլիարդ տարի է տևում), յաջողել է շուրջ մէկ միլիարդ նման գալաքսիներ գտնել։ Այսպիսով մեր տեսանելի Տիեզերքը մեզ ներկայանում է աւելի քան միլիարդ-միլիարդ աստղերով, ճիշտ ինչպես մեր վերոյիշեալ միքրոսկոպիկ փոշին պարունակում էր միլիարդ-միլիարդ ատոմներ։

Ուրեմն, այստեղ էլ հակայ թեւեր, ճիշտ ինչպես անհունապէս փոքրի մօտ էր։ Նոյն բանը կարող ենք ասել հեռաւորութիւնների մասին։

Այդ բանը աւելի լաւ հասկանալու համար, մենք մի անգամ ևս կը փոխենք մեր մասշտաբը, միայն թէ այս անգամ ամէն ինչ փոքրացնելով։ Փոքրացնենք մեր Արևը այնպէս, որ այն ստանայ մի սանթիմետրանոց գնդի չափ։ Այս մասշտաբով Արևի բոլոր մոլորակները աւազի մանր հատիկներ կը դառնան։

Երկիրն Արևից երկու մետրի վրայ, Սաթուրնը քսան մետրի վրայ, Նեփթունը՝ վաթսուն, փլութոնը (ամենահեռու մոլորակը) հարիւր մետրի վրայ կը գտնուեն։ Այսպիսով Արևի համաստեղութիւնը կը կազմի մի սանթիմետրանոց գնդից, որի շուրջ մինչև 100 մետրի վրայ ինն հատ աւազի հատիկներ են պտտւում։

Այդ բոլորի մէջ ներմոլորակային դատարկութիւնն է, մի այնպիսի դատարկութիւն, ուր հազիւ մի քանի միքրոգրամ փոշի հարեւի ամէն մի միլիոն քիլոմետր տարածութեան վրայ։ Այժմ տեսնենք, թէ ո՞ւր են միւս աստղերը։ Մեր այս Արևի գնդիկ մասշտաբով, մեզ ամենամօտիկ աստղը, այսինքն Սանթորի փրոքսիման 20 քիլոմետրի, իսկ Օրիոնի փայլուն աստղերը 1,500 քիլոմետրի վրայ լինեն։ Մեզ ամենամօտիկ գալաքսին՝ Անդրոմեդը (այս փոքրացրած մասշտաբով) գտնուում է տասն անգամ երկրից—Լուսին հեռաւորութեան վրայ, իսկ որոշ հեռաւոր գալաքսիներ այս տարածութիւնից հազար անգամ աւելի հեռու են գտնուում։ Փորձէք երեակայել, թէ ի՞նչ է մի սանթիմետրանոց աստղը այդպիսի մի հեռաւորութեան համեմատ, և ի՞նչ ասել այն մոլորակների մասին, որ պտտւում են այդ աստղերի շուրջ։

Ուրեմն, այստեղ էլ, ինչպես անհունապէս փոքրի մօտ, հակայ հեռաւորութիւններ, հակայ թեւեր և հակայ դատարկութիւններ կան։ Դրութիւնը նոյնն է և շարժուձի համար։ Մոլորակները պտտւում են աստղերի շուրջ՝ ժամական 10,000 քիլոմետր արագութեամբ։ Աստղերն էլ նման արագութեամբ տեղափոխւում են գալաքսիների մէջ։ Գալաքսիներն ընդհանրապէս պտտւում են իրենց շուրջ՝ իրենց հետ տանելով բոլոր աստղերը։ Այդ շարժման գծային արագութիւնը գալաքսիի շրջապատում հասնում է ժամական 10,000-ից 100,000 քիլոմետրի։ Վերջապէս, գալաքսիները մէկը միւսի հանդէպ իրենց սեփական շարժումն ունեն և այդ շարժումը վերոյիշեալ արագութիւններին է հասնում։ Այս բոլոր շարժումները տեղական քնոյթ ունեն և ըստ Տիեզերքի տարբեր մասերի՝ փոփոխական են։ Բայց դոյութիւն ունի նոյնպէս մի ուրիշ կարևոր երևոյթ և դա ամբողջ Տիեզերքի շարժումն է։ Այնպէս է թուում, որ բոլոր գալաքսիները հակայ արագութեամբ մեզանից հեռանում են և այդ «փախուստի» արագութիւնն այնքան աւելի մեծ է, որքան գալաքսիները մեզանից աւելի հեռու են գտնուում։ Այսպիսով ո՛չ թէ միայն Տիեզերքը անսահման մեծութիւն ունի, այլ և նա շարունակական «տարածման» մէջ է։ Փալոմար լեռան հեռադիտակի տեսողութեան սահմանները մտնող գալաքսիները մեզանից փախչում են ժամական մի քանի միլիոն կիլոմետր արագութեամբ։ Պատկերացրէք այդ հակայ առարկաները՝ գալաքսիները, որոնց ծանրութիւնը համապատասխանում է 45 թուանշան ունեցող թոն թափ և որոնք այդ աներևակայելի արագութեամբ շարժման մէջ են... Եւ ի՞նչ մտածել այն էներգիայի մասին, որն ապահովում է այդ շարժումը։ Եւ արդեօք, այս մասշտաբով էներգիայի գաղափարը պահո՞ւմ է իր իմաստը...

Բոլոր այս թեւերը, իրապէս մարդու գլխապտոյտ են պատճառում։ Այդուհանդերձ, այս անսահմանութիւնը մեզ ներկայանում է յօրինւածքի մի որոշ միաւորութեամբ, քանզի նոյն հիմնական առանձնայատկութիւնները վերագտնւում են՝ ինչպէս ամենափոքրի (նիւ-

digitised by A.R.A.R.@

թի), այնպէս նաև ամենամեծի (Տիեզերքի) մօտ։ Բայց արդեօք հնարաւոր չէ՞ այս միաւորութեան փնտռտուքի մէջ աւելի առաջ գնալ։

Ներկայ գիտութիւնը մեր այդ հարցին դրական ձևով է պատասխանում։ Ըստ արդի գիտութեան, մեր նիւթական Տիեզերքը մի միակ էութիւնից, «սուբստանց»ից է կազմուած, որը անջրպետ-ժամանակ է և այդ անջրպետ-ժամանակը որոշ տեղերում մի մասնաւոր «ձեւ» է առանում, որը «նիւթ» է կոչւում։

Դէպի միաւորութիւնը տանող այս հանդրւանը ցուցադրելու համար, հարկ է ասել, որ անջրպետ-ժամանակի այս տեսութիւնը մի խորհրդաւոր գաղափար չէ, որը կարող է հասկանալի լինել միայն Այնշտայնի տեսութեան մասնագէտներին։ Ոչ շատ մասնագէտ մի անհատ ձեզ կասի, որ նա շատ լաւ հասկանում է թէ ի՛նչ է անջրպետը։ Նա անջրպետի երեք տարածութիւնները (լայնութիւն, երկարութիւն, բարձրութիւն) տեսանելի է դարձնում, օրինակ քերելով սեղանի երկու պատերի հատումը յատակի հետ։ Ցետոյ այդ անհատը ձեզ կասի, որ նա չի հասկանում թէ ինչպէ՞ս է հնարաւոր այդ երկու պատերի և յատակի կտրուածքի կէտին մի ուրիշ ուղղահայեաց գիծ (որը պիտի ներկայացւի չորրորդ տարածութիւնը, այսինքն ժամանակը) նոյնպէս ուղղի։

Բայց այդ խնդիրը երբեք այդ ձևով չի դրսևորուում։ Խնդիրն այն է, թէ արտաքին իրականութիւնն ինչպէ՞ս է մեզ ներկայանում։ Վերցնենք Արևը։ Ես գիտեմ, որ նա մի առարկայ է, որը գտնուում է անջրպետի մէջ, հարիւր միլիոն քիլոմետր հեռաւորութեան վրայ, բայց նոյնպէս, ես գիտեմ, որ այդ առարկան ինձ համար 8 րոպէ անցեալի մէջ է գտնուում, քանի որ Արևից եկող լոյսը 8 րոպէ է պըտնում ինձ հասնելու համար։ Ուրիշ խօսքով, եթէ Արևը յանկարծ անյայտանայ, ես 8 րոպէից յետոյ տեղեակ կը լինեմ այդ մասին։ Ուրեմն, այսպիսով, երբեք չեմ կարող արտաքին իրականութեան մէջ եղած առարկաները նկատի ունենալ, առանց որ նրանք միաժամանակ ինձնից հեռու չլինեն անջրպետի և ժամանակի մէջ (աւելի ճիշտ՝ անցեալի մէջ)։ Այս ճիշտ է Արևի համար։ Դա աւելի քան յայտնի է հեռաւոր աստղերի կապակցութեամբ, որոնք մեզնից միլիարդ քիլոմետրներ հեռու են անջրպետի մէջ, բայց նոյնպէս միլիոնաւոր տարիներ անցեալի մէջ։

Դա անառարկելիօրէն ճիշտ է և մեր առօրեայ կեանքում, քանի որ ինչ տեղեկութիւն որ հասնում է մեր զգայարաններին, տեղի է ունենում մի որոշ արագութեան ընթացքում և այդ իրականութիւնը, որի մասին մենք դիտակցում ենք, իրականում «տարածւած» է թէ՛ անջրպետի ե՛ւ թէ ժամանակի մէջ։ Անջրպետ-ժամանակի այս անընդհատութիւնը (այն երևոյթը, որ նրանք Տիեզերքի մէջ մեկը միւսից անբաժանելի են) Այնշտայնն արտայայտել է իր Սահմանափակեալ յարաբերութեան տեսութեան մէջ։ Այս անջրպետ-ժամանակ տեսութիւնը, ո՛չ թէ միայն դժւար չէ երևակայել, այլ և նա պարզօրէն մեր աչքն է ծակում, և ընդհակառակն, ժամանակից քաժանւած անջրպետը մտային պարզ մի վերացում է, որը չի համապատասխանում իրականութեան։

Բայց Այնշտայնն աւելի հեռու է գնացել։ Անջրպետ-ժամանակի անընդհատութիւնը մեզ ներկայացնելուց յետոյ, նա նոյնպէս իր Ընդհանուր յարաբերութեան տեսութեան միջոցով, մեզ մատնանշեց, որ այդ անջրպետ-ժամանակը միակ էութիւնը՝ «սուբստանց»ն է, որ կազմում է Տիեզերքը և մասնաւորապէս Նիւթը։ Այն չրջաններում, որ այդ անջրպետ-ժամանակ «սուբստանց»ը ստանում է, մասնաւոր ձևեր և գրաւում է մասնաւոր ուղղութիւններ, երևան է գալիս Նիւթը։ Այսպիսով տեղի է ունենում այն, որ ասում են՝ անջրպետ-ժամանակի «կորացում»։

Իհարկէ, մեր նպատակն «Ընդհանուր յարաբերութեան աւետարանի» հիմունքները բացատրելը չէ, բայց ցանկալի է մատնանշել, որ այդ հիմունքները շատ աւելի պարզ ու յստակ են, քան սովորաբար կարծում ենք։ Բաւարարւենք ներկայացնելով մի օրինակ։ Նրբկատի առնենք այս էջը — այն սարքւած է թղթից և ներկայ վիճակում մի մակերես է։ Դուք կարող էք այս թերթիկը պոկել և նրան ուզած ձևերը տալ։ օրինակ՝ գլանաձև, կոնաձև, գնդաձև և այլն։

Դուք այսպիսով կատարած մի առարկայ, որը միշտ կազմւած կը լինի թղթից։ բայց նրա ձևերը մասնաւոր կը լինեն։ Այսպիսով թուղթը մնում է բոլոր առարկաների միակ «սուբստանց»ը, որ դուք կարող էք այդ թղթի թերթիկով սարքել։ Ահա՛, այս ձևով «Անջրպետ-ժամանակը» մեր նիւթական Տիեզերքի միակ «սուբստանց»ն է։ Նիւթի մասնիկները որոշ բնագաւառներ են, ուր անջրպետ-ժամանակը մի

digitised by A.R.A.R.@

ձև է առացել, մի մասնաւոր «կորացում»։

Մենք ընդհանուր գծերով ներկայացրինք այն նկարագրութիւնը, որ արդի գիտութիւնը տալիս է Տիեզերքի մասին։ Մի նկարագրութիւն, որը իր վերջին փուլում վերածւում է մի տեսակ «սուբբատանց»ի ընդգրկած ձևերին և ուղղութիւններին, այսինքն երկրաչափութեան։

Ինչպէս սկզբում ասացինք, ֆիզիկան փնտռում է տալ Տիեզերքի մի նկարագրութիւն, որը քոլորովին անկախ լինի դիտող անհատից։ Նա փնտռում է մի իրականութիւն, որը մարդու պարզ զգայարաններից այն կողմն է գտնւում։ Այսպիսով մենք առաջնորդւում ենք տարբերել կարծողանալու իրականը՝ ճանաչւածից։ Ճանաչւածը այն է՝ ինչ մարդը իր զգայարանների միջոցով ձեռք է բերել իրականից։

Այստեղ պիտի մատնանշել, թէ ինչքան գիտութեան այս ընթացքը նմանւում է Արդի Գեղարուեստին, այն չափով, որ վերջինս էլ փնտռում է նկարագրել մի իրականութիւն, որ մեր զգայականական ըմբռնումներից այն կողմն է գտնւում։ Գեղարուեստը բաժանւում է գիտութիւնից այն տեսակէտից, որ նա իր նկարագրութիւնների մէջ նկատի է ունենում մի իրականութիւն, որը լինելով հանդերձ մեր Տիեզերքի հիմնական յատկանիշներից մէկը, այդուհանդերձ, մասամբ անհասկանալի և անարտայայտելի է և դա մեր «ներքին» աշխարհն է՝ հոգեկանը։

Երբ մենք ուզում ենք «ներքին» աշխարհի մասին խօսել և չենք ուզում մետաֆիզիկայի խորհրդածութիւնների մէջ ընկնել, պիտի աշխատենք այդ հարցը դնել արդի գիտութեան լոյսի տակ։

Նախ և առաջ պիտի «եղելութիւնների նիւթականութիւնը», այսինքն այդ «ներքին» աշխարհի գոյութիւնը որոշել։

Նկատի ունենանք մեր մոլորակի վրայ ապրող մի որևէ անհատ։ Նա գիտակցում է, որ ինքը գոյութիւն ունի որպէս մի միաւոր, և այս նշանակէտից մենք կարող ենք նրա «գիտակցական անձնական ես»ի մասին խօսել։

Այս անձնական գիտակցական ես-ը յարաբերութեան մէջ է երկու տարբեր միջավայրերի հետ։ Առաջինը ֆիզիկական, հոգեբանական և սոցիալ միջավայրն է։ Այդ միջավայրն անձնական ես-ին հայ-

digitised by A.R.A.R.@

թայթում է տարբեր տպաւորութիւններ, որոնք կարող են լինել՝ տաքը, ցուրտը, մեծը, փոքրը, քաղցրը կամ աղին, ճշմարիտը և սխալը, արդարը և անարդարը, տգեղը կամ գեղեցիկը, և այլն։ Անձնական ես-ը կազմւում և կաղապարւում է այդ զգայականական միջավայրի շնորհիւ։ Նա հոգեբանական մակարդակի վրայ բնոնաւորւած է աւանդութեամբ և աւելի ընդհանուր ձևով՝ այն քարոյագիտութեամբ, որ ուրիշ մարդիկ համաձայնւել են յօրինել մարդու համար։ Այս տեսակէտով մարդը տեսնում և դատում է ո՛չ այնպէս՝ ինչպէս կայ, այլ այնպէս՝ ինչպէս նրան դատել և տեսնել են սովորեցրել։

Միւս կողմից, մարդը մի ուրիշ միջավայրի հետ նոյնպէս սերտ շփման մէջ է։ արդի ֆիզիկան մեզ սովորեցնում է, որ Նիւթը կազմող տարրական մասնիկները Տիեզերքից բաժանւած չպիտի համարել, քանի որ ամէն մի մասնիկ ունի իր դաշտերը (ձգողական դաշտ, էլեքտրամագնիսական դաշտ, միջուկային դաշտ), և այդ դաշտերի միջոցով նա կապւած է ամբողջ Տիեզերքին։

Հետևաբար, մարդն էլ այդ մասնիկներից «սարքւած» լինելով, միացած է ամբողջ Տիեզերքի հետ։ նա տևական յարաբերութեան մէջ է այսպէս ասած «կոսմիկ» (տիեզերական) միջավայրի հետ։ Այս կոսմիկ միջավայրը, որը իրապէս ներկայացնում է Լսկանը այն բոլորի, ինչ որ գոյութիւն ունի, նոյնպէս մի որևէ ձևով պիտի «ներբերանգի» և ազդի անհատի գիտակցական անձնական ես-ի վրայ։ Բայց այդ միջավայրի ազդեցութիւնն աւելի քիչ ակնքաթ է և նա զանազանում է մարդու քիչ թէ շատ ենթագիտակցական մարզերում։

Մենք կուզէինք զատորոշել, թէ որո՞նք կարող են լինել այդ «կոսմիկ» ազդեցութիւնները, քանի որ դրանք տիեզերական մասշտաբով ամենակարևորները, բայց նոյնպէս ամենաքօղարկւածներն են։

Վերջապէս, մենք կարող ենք խնդիրը հետևեալ ձևով դնել։ ֆիզիկան գործ է ածել մի օբեկտիւ լեզու (մաթեմատիկան) և յաջողել է «Իրական»ի մի նկարագրութիւն տալ, որը ինչ վերաբերում է Նիւթին, սահմանւած է ճանաչւածով։ Արդեօք հնարաւո՞ր է աւելի հեռու գնալ և տալ Իրականի մի նկարագրութիւն, որը իր մէջ հոգեկան տարրերը նոյնպէս ներփակի··· Եթէ այդ նկարագրութիւնը հնարաւոր է, մենք հաստատապէս հաւատացած ենք, որ դրա համար պիտի դիմել գեղարուեստին և ոչ թէ գիտութեան։ Գեղարուեստը կարող

յայտի այն խորը հաղորդականութիւնը, որ գեղարւեստագէտի անձնական ես-ը կունենայ կոսմիկ միջավայրի հետ։

Բայց քանի որ այդ արտայայտչականութիւնն ուզում է աւելին լինել քան մի պարզ «քարտէս» և քանի որ այն ուզում է ցուցաբերել «հոգամաս»ի իրականութիւնը և քանի որ այն մի ներըմբռնման ներգործութեան արդիւնք է, այն չի կարող մի օբեկտիւ լեզւով թարգմանւել. այն կը փորձի ուրիշի մօտ, անհատի ամենախորը մասերից մուտք գործել։

Բայց եթէ գեղարւեստն է, որ կարող է այդ կոսմիկ միջավայրի ոգեկոչումը մեզ տալ, արդեօք հնարաւոր չէ՞ փորձել և պարզ լեզւով երևան հանել այն էական միջոցները, որ կոսմիկ միջավայրը գործադրում է անջրպետ-ժամանակի մէջ։ Ուրիշ խօսքով ձգտում է երևան բերել այն մեծ առանցքները, որոնց միջոցով տեղի է ունեցել կոսմիկ հոլովոյթը։

Ես երբեք չեմ կարող իմ ոչ անհատական լեզւով, որ այստեղ գործ եմ ածում, արտայայտել այդ առթիւ։ Եւ որպէսզի չմըտնենք զուտ մետաֆիզիկայի մէջ, մենք նորից մեր հնարաւորութեան սահմաններում կը կառչենք մեր արդի գիտութեան տւեալներին։ Մենք կընթանանք պարզից դէպի բարդը։ Մենք կը փնտռենք իմանալ, թէ՝ տարրականը իր ընթացքի մէջ ի՛նչպէս է պայմանաւորւում կոսմիկ միջավայրի հետ։ Եւ քանի որ ինչպէս վերը տեսանք, բնութիւնը մի տեսակ մեթոդի խնայողութիւն է անում և օգտագործում է նոյն հիմնական միջոցները թէ՝ անհունապէս Փոքրի (Նիւթի) և թէ անհունապէս Մեծի (Տիեզերքի) համար, մենք կեզրակացնենք, որ այն ինչ որ կը գտնենք տարրականի համար, կը լինի եթէ ոչ միևնոյնը, առնւազն համանմանը մարդու ընթացքի համար։

Այժմ տեսնենք, թէ ի՛նչն է պայմանաւորում մի տարրական մասնիկի (ինչպիսին են՝ փրոթոնը, նոտրոնը, ելեքթրոնը, մեզոնը և այլն) ընթացքը, այսինքն շարժումը։ Արդէն ասացինք, որ ըստ արդի ֆիզիկայի՝ չի կարելի որևէ մասնիկ որպէս մեկուսացած առարկայ նկատի ունենալ անջրպետի մէջ, այլ այն համագոյութեան մէջ է ամբողջ Տիեզերքի հետ։ Այսպէս, օրինակ, նկատի ունենանք մի փըրոթոն. այն իր շուրջն ունի մի ելեքտրոստատիկ և մի ձգողական դաշտ, որը տարածւած է մինչև անսահմանը։ Ուրեմն, այսպիսով, մի

փրոթոն ներգործում է Տիեզերքի մէջ գտնւող որևէ մասնիկի վրայ, ինչքան էլ նա հեռու լինի։ Ի հարկէ, այդ ներգործման ազդեցութիւնը, ըստ հեռաւորութեան, սրագ պակասում է, բայց անոսոլկելիօրէն չի հասնում զերոյի։ Այսպիսով, մենք տեսնում ենք, որ մի մասնիկից դէպի ամբողջ Կոսմոսը մի տեսակ լուսարձակում (projection) կայ, մի լուսարձակում, որը Մեկից՝ Ամբողջի առաջին միացումն է կազմում։

Հակառակ կողմից Տիեզերքի որևէ մասնիկը նոյնպէս ազդում է այն փրոտոնին, որ մենք նկատի ունեցանք։ Ի հարկէ, ինչպէս ասացինք, այդ ներգործման ազդեցութիւնը հեռաւորութեամբ պակասում է, բայց երբեք զերոյի չի հասնում։ Այս դէպքում մենք ունենում ենք մի ուրիշ միացում — Ամբողջը՝ մեկի հետ։

Ուրեմն, այս երկու ձևի կապակցութիւններն են, որ պայմանաւորում են մեր փրոտոնի ընթացքը։ Իր ներգործումը՝ ամբողջ արտաքինի վրայ, և ամբողջ արտաքինի ներգործումը՝ իր վրայ։ Ահա այն, ինչ որ ստեղծում և բացատրում է մեր փրոթոնի շարժումը, այսինքն իր ընթացքը։

Այժմ տեսնենք, թէ արդեօք հնարաւո՞ր է Մէկը—Ամբողջի կապակցութեան գաղափարը մարդու համար գործ ածել։ Այդ ընթացքը մարդու մօտ, որպէս մի հոգեկան արարք (ակտ) է ներկայանում։ Փորձենք, ուրեմն, մի պարզ հոգեկան ակտ վերլուծել և որպէս օրինակ վերցնենք հետևեալ միտքը՝ «Ես վաղը պիտի գործի գնամ»։

Այս խորհրդածութեան մէջ նախ և առաջ յիշողութեան մի ճիգ կայ. ես յիշում եմ, որ շաբաթւայ բոլոր օրերը աշխատում եմ և վաղը շաբաթւայ օրերից մէկն է, ուրեմն վաղը ես կը գործեմ։

Բայց պիտի մատնանշել, որ յիշողութիւնը մի կամուրջ է ներկայի և «անջրպետ-ժամանակ»ի մինչև գտնւող հեռու կէտերի հետ։

Չմոռանանք, որ արդի ֆիզիկան մեզ սովորեցնում է նոյնպէս, թէ «անջրպետ-ժամանակ» գաղափարի մէջ անցեալը, ներկան և ապագան գոյութիւն ունեն «միասնաբար». անցեալը չի անյայտանում, քանի որ այլևս նրա մէջ չենք ապրում և կամ ապագան բացակայ չէ այն պատճառով, որ դեռ չենք սկսել նրա մէջ ապրել։ Ուղեղը, յիշողութեան երևոյթի մէջ մի ռադիօի պէս է ներգործում. երբ մենք նրան մի տւեալ ալիքի վրայ ենք դնում, նա մեզ հա-

digitised by A.R.A.R.@

ղորդում է մի ծրագիր, որը այդ ոտիքից հետու է՝ «անջրպետ-ժամանակ»ի մէջ. ուղեղն էլ հետու կ'տեր է քոնում՝ «անջրպետ-ժամանակ»ի անցեալից և հնարաւոր է դարձնում այն, ինչ որ անւանում ենք յիշողութիւն։

«Ես վաղը պիտի գործի գնամ» հոգեկան ակտի մէջ մի տեսակ պատկերացում կայ, որը միայն վա՛ղն է իրականանալու։ Ես «անջրպետ-ժամանակ»ի մէջ նախատեսում եմ մի ղլուխիւն, որ ինձ թւում է իրականանալու է վաղը։ Այդ դրուխիւնը կարելի է նոյնպէս թարգմանել մի կապակցութեամբ՝ իմ ներկայի և «անջրպետ-ժամանակ»ի քիչ թէ շատ հետու կէտերի հետ, որոնք գտնւում են ապագայի մէջ։

Յիշողութիւն և նախատեսութիւն... Սրանք արդեօք որևէ հոգեկան ակտի հիմքերը չե՞ն։ Եւ ինչպէս մենք արդէն նկատեցինք, իրականում այդ երկու երևոյթները կապակցութիւններ են կազմում «անջրպետ-ժամանակ»ի տարբեր կէտերի միջև։ Մի մարդկային էակի ընթացքը շարունակաբար պայմանաւորւած է յիշողութեամբ և նախատեսութեամբ, այսինքն՝ կապակցութիւններով, որոնք տեղի են ունենում այդ անհատի և կոսմոսի մէջ։

Աւելի հետու գնանք.— հոգեկանի խնդիրը և նրա հոլովոյթը նկատի ունենանք ամբողջ Կոսմոսի մասշտաբով։ Եթէ ինչպէս Թալհարդ դը Շարդանն է մեզ թելադրում, մենք շարունակաբար գնում ենք դէպի այնպիսի դրութիւններ, որոնք սճում են հոգեկանացնել. դա նշանակում է, որ մենք գնում ենք դէպի այնպիսի դրութիւններ, որոնց մէջ Մէկը աւելի կապւած կը լինի Ամբողջին։

Արդ, այսպիսով արդեօք մարդը չի՞ ներկայանում որպէս մի կիզակէտ, մի բիւրեղացումի կենտրոն, որը հնարաւոր կը դարձնի՝ Մէկի աւելի սեղմ միացումը Ամբողջի հետ։ Բնութեան հոգեկան կենտրոնացումը դէպի Մարդը, որպէս կիզակէտ, արդեօք այն չէ՞ ինչ որ մենք անւանում ենք Իմացում։ Եւ մարդու հոգեկան լուսարձակումը դէպի բնութիւնը արդեօք այն չէ՞, ինչ որ Սէր ենք անւանում...

Պիտի նկատել, որ վերոյիշեալ դրութիւնները համապատասխանում են Շարդանի «Մարդու անձնաւորութեան» տեսութեան հետ։ Ըստ Շարդանի՝ մարդու «կոչումը» ե՛չ թէ իր «անհատականութիւնը», այլ իր «անձնաւորութիւնը» իրականացնելու մէջ է գտնը-

ւում։ Այդ «անձնաւորութիւն»ն իրականացնելու համար պիտի աշխատել հնարաւորին չափ քնութեան հետ միանալ՝ «Ուրիշներից հեռանալով՝ ենթական աւելի անհատական է դառնում և այդ անելով նա գնում է դէպի անկում»։ Իրականի մէջ նա իրեն պակասեցնում և կորցնում է։ Որպէսզի մենք՝ իրապէս մենք լինենք, պիտի ընթանանք հակառակ ուղղութեամբ. մենք պիտի ընթանանք դէպի կենտրոնացումը մնացորդի հետ։ Մեր ալժէքը ո՛չ թէ մեր անհատականութեան, այլ մեր անձնաւորութեան մէջ է, և մենք կալող ենք մեր «անձնաւորութիւն»ը կերտել՝ իրար հետ միանալով։

Շարդանը մի աւրիշ տեղ ասում է, որ եթէ մեղնից մի որևէ քան պիտի յարատեւի կեանքից այն կողմ, դա կը լինի մեր էութեան այն մասը, որն «անձնաւորւել» է, քանի որ այդ անձնաւորւելու ակտը տեղաւորւում է կոսմիկ հոլովոյթի առանցքի վրայ և այդ հոլովոյթը գնում է դէպի միշտ աւելի մեծ միաւորում — Մէկը՝ Ամբողջի հետ։ Եւ այդ անձնաւորւելը չի կարող կորչել նոյն իսկ ամբողջ Տիեզերքի մասշտաբով, այսինքն յաւիտենականութեան մէջ։

Սկսալ չպիտի հասկանալ. այդ Մէկը՝ Ամբողջի «Միաւորում»ը երբեք չի նշանակում որ Մէկը ձուլւում է Ամբողջի հետ։ Մենք աւելի ականաւոր ենք դառնում, երբ աւելի ճառագայթներ են կենտրոնանում մեր վրայ, այսինքն երբ աւելի կապակցութիւններ են ըստեղծւում մեր և քնութեան միջև։ Մի պատկեր տալու համար նկատի ունենանք ռադիօն, որը աւելի արժէք ունի և աւելի լաւ է իր դերը կատարում, երբ կարողանում է աւելի շատ կայանների հետ յարաբերութեան մէջ մտնել, այսինքն որ նա աւելի շատ է «միացած» Անջրպետ-ժամանակի տարբեր մասերի հետ։

Գիտութիւնը մեզ նկարագրում է այն օրէնքները, որոնք ղեկավարում են Նիւթի ընթացքը։

Գեղարւեստը փորձում է աւելի խորապէս մուտք գործել քնութեան սրտի մէջ և իր նկարագրութեան մէջ ներմուծել Տիեզերքի հոգեկան մասը, որն անքաժանելի է Նիւթից։ Գիտութիւնը սահմանափակւած է իրերի արտաքինով։ Գեղարւեստը ձգտում է ուղղակի հաղորդակցութեան մէջ մտնել այն ենթակայի հետ, որին զննում է, որպէսզի յայտնաբերի իրերի ներքը։ Քանի որ գիտութիւնն առարկաներից դուրս է մնում, այն կարող է նկարագրել՝ իրեն օգնութեան

digitised by A.R.A.R.@

հրաւիրելով բանականութիւնը և մի լեզու, որը պարզ, բանաւոր է (ռացիոնալ) և նոյն իմաստն ունի բոլորի համար։ Իսկ քանի որ գեղարւեստն ուզում է թափանցել իրերի ամենամտերմիկ մասերը, այն արտայայտւում է ներըմբռնողական լեզւով։

Գեղարւեստական գործը նոյնպէս գեղարւեստագէտի լուսարձակումն է՝ դէպի ուրիշի ամենախորը և ոչ ռացիոնալ մասը։ Գիտութիւնը և գեղարւեստը, ամէն դէպքում ներկայանում են որպէս մարդկային երկու կարգաւորումներ (դիսցիպլիններ), որոնք լրացնում են իրար, որպէսզի մարդը Կոսմոսի համեմատ որոշի իր դիրքը և հնարաւորութիւն ունենայ իրեն աւելի լաւ տեղաւորել տիեզերական հոլովոյթի հոսանքի մէջ։ Գիտութիւնը իր մասնակցութիւնն է բերում գուցէ մի քիչ աւելի Իմացումի համար, իսկ Գեղարւեստը գուցէ մի քիչ աւելի Սիրոյ համար, բայց մէկը և միւսը անբաժանելի են և մեր Տիեզերքն առաջնորդում են դէպի աւելի մեծ միաւորութիւն։

digitised by A.R.A.R.@

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՄԱՍ

Ն Ո Ր Է Զ Ա Կ Ա Ն Ք

Ա. Ասլան	էջ	7
Հր. Ֆալեան	»	17
Արա	»	35
Գ. Խանենց	»	42
Արմէն Դէս	»	71
Ռ. Բէն	»	78

Բ. ՄԱՍ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ֆ. Ֆարրոխզադ	էջ	97
Մ. Թ. Բահար	»	111
Ռեզա Բարահենի	»	118
Բ. Ալիխանի	»	122

Գ. ՄԱՍ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ֆ. Գ. Լորկա	էջ	137
Փոլ Էլուար	»	146
Ժիւլ Սիւփերւիէլ	»	152
Ժագ Փրեվեր	»	155
Ժորժ Շեհադէ	»	161

Տ Ե Ս Ա Կ Ա Ն

Վ. Ֆրանգեան	էջ	166

digitised by A.R.A.R.@